

FIDH նախագահը ընդդիմության հանրահավաքում

06.04.10

Hra.am



Երեկ Մարդու իրավունքների միջազգային համաժողովի անդամները՝ FIDH-ի նախագահ Սուեր Բելասենի գլխավորությամբ, միացան Մատենադարանի մոտ ընթացող հանրահավաքին: Մատենադարանի հարթակում իսկական իրարանցում սկսվեց՝

Մեծ ոգևորություն առաջացավ, երբ հարթակ բարձրացավ Ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասենը՝

«Մենք պահանջում ենք ազատել քաղբանտարկյալներին»,- հայտարարեց ճանաչված իրավապաշտպանը ու հայերենով վանկարկեց՝ «Ա-զա-տու-թյուն»՝ Նա նշեց, որ իրենք մշտապես պայքարող մարդկանց կողքին են և նրանց հետ միասին պայքարում են հանուն արդարության՝

«Մարդու իրավունքների միջազգային դաշնությունն իր ողջ կազմով ձեզ հետ է: Նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է որևէ երկրի լիզա, և նրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին ձեզ հետ է»,- հայտարարեց Բելասենը՝

Նիգերիայի քաղաքացիական ազատության կազմակերպության ղեկավար իրավապաշտպան Եզիկե Իբուկհուկու Օհաբուեյնայուն, մոտեցավ Մատենադարանի հարթակին հենց այն պահին, երբ ելույթ էր ունենում ՀԱԿ համակարգող Լևոն Զուրաբյանը և ելույթի թույլտվություն խնդրեց:

Նիգերիայի ազգային տարազով ու բանտարկյալի գլխարկով իրավապաշտպանը Մատենադարանի հարթակից ողջունեց հանրահավաքի մասնակիցներին, դատապարտեց ազատության սահմանափակումները, պահանջեց ազատ արձակել քաղբանտարկյալներին «Ես ինքս քաղբանտարկյալ եմ եղել ու պայքարել իմ երկրում հանուն մարդկանց ու իմ ազատության»՝

Լևոն Զուրաբյանը հայտարարեց, որ ձեռք են բերել հավատարիմ բարեկամներ, որոնք աշխարհով մեկ տարածելու են Հայաստանի քաղաքացիների ձայնը և ճեղքելու են տեղեկատվական բլոկադան:

Հանրահավաքի մասնակիցները ծափերով ճանապարհեցին Սուեր Բելասենի գլխավորությամբ ժամանած օտարերկրացի իրավապաշտպանների խմբին□

<http://www.hra.am/am/events/2010/04/06/fidh>

Ինչպես կարելի՞ է լռել

06.04.10

A1+



Մատենադարանի հարթակից ներկաներին ողջունեց FIDH-ի երեւանյան համաժողովին մասնակից, Նիգերիայի ներկայացուցիչ Եզիկե Իբուկիուկու Օհաբուէյնայուն:

Նախկին քաղբանտարկյալը ներկաներին կոչ արեց չլռել ու շարունակել պայքարը մարդու իրավունքների պաշտպանության համար:

Միջազգային համաժողովի մասնակիցներից շատերն էին ներկա ընդդիմության այսօրվա հանրահավաքին: Նրանք, համաժողովի ավարտից հետո գալով Մատենադարանի հարակից հրապարակ, հանրահավաքի հայ մասնակիցների հետ ազատություն էին պահանջում հայ քաղբանտարկյալների համար: FIDH նախագահ Մուեր Բելասենը նույնիսկ հայերենով վանկարկել է ազատություն:

Արտասահմանցի հյուրերի ներկայությունը ոգևորել է հանրահավաքի մասնակիցներին:
<http://a1plus.am/am/politics/2010/04/6/nigeria>

Գազիկ Հարությունյանն արժանացավ ամոթանքի

06.04.10

A1+



Երեւանում գտնվող Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH-ի 150 իրավապաշտպանների, Երեւանում միջազգային կառույցների ներկայացուցիչների, ՀՀ-ում մի շարք դեսպանների ներկայությամբ ՀՀ ՄԴ նախագահ Գազիկ Հարությունյան արժանացավ ամոթանքի:

Պարոն Հարությունյանը, որին վստահված էր

FIDH-ի 37-րդ միջազգային ֆորումի բացման խոսքը դեռ նոր էր մոտեցել ամբիոն, երբ նախկին քաղբանտարկյալ Վարդգես Գասպարին՝ անզլերենով բացականչեց. «Ամոթ քեզ: Ամոթ իշխանություններին, որ հովանավորվում են մարդասպաններին: Ամոթ քեզ, որ թույլ ես տալիս սահմանադրական իրավունքների խախտումներ»:

Գազիկ Հարությունյանի թիկնապահները մոտեցան Վարդգես Գասպարիին եւ նրան դուրս հրավիրեցին, սակայն պարոն Գասպարին սկսեց ավելի բարձր վանկարկել. «Ամոթ, ամոթ»:

Գասպարի խոսքը շարունակեց ակտիվիստ Լալա Ասլիկյանը՝ քաղբանտարկյալների լուսանկարները ձեռքին: Նա դիմեց FIDH-ի 37-րդ համագումարի բոլոր մասնակիցներին. «Դուք պետք է բոյկոտեք այս համաժողովը: Հայաստանում դեռ 14 քաղբանտարկյալ կա, իսկ դուք այստեղ նստած մարդու իրավունքներ եք քննարկում»:

Գյումրիի «Ասպարեզ» ակումբի նախագահ Լեոն Բարսեղյանը, որը հայտարարել էր FIDH-ի երեւանյան համաժողովը բոյկոտելու մասին, իր բողոքն արտահայտեց լուռ՝ «Ազատություն քաղբանտարկյալներին» պաստառը ձեռքին:

Այս ամենին հետո Գազիկ Հարությունյանը հայտարարեց. «Սա կարող ենք ընդունել իբրեւ մեր քաղաքացիական հասարակության կայացման դրսևորումներից մեկը» : Այս սկսեց իր ողջունի խոսքը, որի ընթացքում նշեց. «Արդար դատավարության իրավունքը կարող է երաշխավորել միայն անկախ եւ արդար դատավարությունը»:

Բողոքի ակցիաններ էր նախատեսված նաեւ ՀՀ արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանի ելույթի ընթացքում:

Այսօրվա համաժողովի ընթացքում ելույթ ունեցավ նաեւ Եվրոպական Հարեւանության քաղաքական հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն՝ վստահեցնելով, որ ԵՄ-ն պատրաստ է աջակցել ՀՀ-ին՝ մարդու իրավունքների ոլորտում հաջողություններ արձանագրելու համար. «Ընդհանրապես՝ որեւէ երկրի պետք չէ պարտադրել մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Յուրաքանչյուր երկիր, իր շահերից ելնելով, պետք է հետեւի եւ առաջնորդվի այդ սկզբունքներով»:

Ի դեպ, համաժողովի ողջ ընթացքում Հայ Ազգային Կոնգրեսի ներկայացուցիչները բողոքի ակցիա էին կազմակերպել բակում: Ընդմիջման ընթացքում FIDH-ի մի շարք իրավապաշտպաններ միացան բողոքի ակցիաններին, իսկ Նիգերիայի ներկայացուցիչ Էզիկե Իբուչուկուն սկսեց հայերեն վանկարկել՝ ազատություն:

FIDH-ի 37-րդ միջազգային համաժողովը կշարունակվի վաղը:

<http://a1plus.am/am/politics/2010/04/6/conference>

FIDH-ի համաժողովը Հայաստանի իշխանություններից պահանջում է «ազատ արձակել քաղաքանտարկյալներին»



FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը (աջից) միանում է ընդդիմադիր ցուցարարներին, 6-ը ապրիլի, 2010թ.

06.04.10

Radio Free Europe / Radio Liberty

Տաթևիկ Լազարյան

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենը երեքշաբթի օրը Երևանում անցկացվող իրավապաշտպանների համագումարի բացման արարողությանը Հայաստանի իշխանություններին կոչ արեց՝ «անհապաղ ազատ արձակել քաղաքանտարկյալներին»:

Այս կոչը Սուեր Բելասենը հնչեցրեց համաժողովի անունից, ինչպես նաև իր մտահոգությունը հայտնեց Հայաստանում ընտրական գործընթացների եւ մամուլի ազատության խոչընդոտների վերաբերյալ:

FIDH-ը, ինչպես նշեց տիկին Բելասենը, պահանջում է նաև 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների եւ իրավապահ մարմինների կողմից ուժի անհամաչափ կիրառման վերաբերյալ արդյունավետ քննություն անցկացնել: FIDH-ի նախագահը ասաց, որ իրենց մտահոգությունները հայտնել են Հայաստանի իշխանություններին

«Հուսով ենք, որ կոնկրետ արձագանք կստանանք մեր մտահոգությունների վերաբերյալ: Մենք շարունակելու ենք մեր հարցադրումները մինչև պատասխան ստանալը», - հայտարարեց Սուեր Բելասենը:

FIDH-ի նախագահը կարեւորեց նաև այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ համագումարը տեղի է ունենում Հայոց

ցեղասպանության 95-րդ տարելիցից օրեր առաջ, եւ մասնակցող իրավապաշտպանները կայցելեն Ցեղասպանության զոհերի հուշահամալիր:

Երբ խոսքը տրվեց Հայաստանի Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանին, հետընտրական իրադարձությունների առնչությամբ նախկին կալանավոր Վարդգես Գասպարին, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը եւ մի շարք ակտիվիստներ բանտարկված ընդդիմադիրների նկարներով պաստառներ պարզեցին, իսկ ՄԴ նախագահի ելույթից հետո դահլիճում լավեցին ինչպես ծափահարություններ, այնպես էլ սուլոցներ: Նման մի պիկետ եղավ նաեւ արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանի ելույթի ժամանակ:



Երեւանի օպերայի եւ բալետի շենքի մետ, ուր անցկացվում էր համագումարը, բողոքի ցույց էր անցկացնում ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի մաս կազմող Քաղաքական բանտարկյալների եւ հալածյալների պաշտպանության կոմիտեն: Բանտարկյալների զուլավոր զգեստներով 12 երիտասարդներ, որոնք իրենց վրա կրում էին նաեւ կալանավորված ընդդիմադիրների անուն ազգանունները, շղթայակապ կանգնած էին կողք կողքի: Մյուս

ցուցարարները պաստառներով եւ «Մարտի 1»-ի զոհերի եւ բանակում խաղաղ պայմաններում զոհվածների նկարներով կանգնած էին նրանց կողքին եւ պարբերաբար վանկարկում էին՝ ամոթ:

FIDH-ի համագումարին մասնակցող իրավապաշտպանները անտարբեր չմնացին՝ շատերը մոտենում էին, հայտնում իրենց աջակցությունը: Նրանց մեջ էր եւ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասենը, ով ողջագուրվեց պիկետի մասնակիցների հետ եւ մի քանի բոպե վանկարկեց «լիբերթի»՝ ազատություն:

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի համագումարը շարունակվելու է եւս երկու օր:

<http://www.azatutyun.am/content/article/2004298.html>

Ոստիկանները չեն խոչընդոտում ընդդիմության հանրահավաքը

06.04.2010

Radio Free Europe / Radio Liberty

Անուշ Մարտիրոսյան

Մատենադարանի հարակից տարածքում մեկնարկել է ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի կազմակերպած հանրահավաքը: Հանրահավաքի մասնակիցների վկայությամբ, այն աննախադեպ է ոստիկանների բացակայությամբ □

Նախկինում հանրահավաքներին մասնակցողները դժգոհում էին, որ ոստիկանությունը, մասնավորապես, արգելափակում էր մարզերից ընդդիմության աջակիցների տեղաշարժը Երեւան:

«Այսօր առաջին անգամ է, որ հանգիստ եկել ենք՝ պլակատներով, ոչ ոք չի կանգնեցրել: Վանաստորից նորմալ եկել ենք», - «Ազատություն» ռադիոկայանին ասաց հանրահավաքին մասնակցող մի կին:

Ընդդիմադիրները ոստիկանության այսօրվա պահվածքը պայմանավորեցին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) համաժողովին մասնակցելու նպատակով Հայաստանում գտնվող հարյուրավոր իրավապաշտպանների ներկայությամբ:

«Միշտ եղել են ոստիկաններ՝ այսօր չկան», - նշեց հանրահավաքի մասնակիցներից մեկը: - «Ոչ կարմիր բերետավորներ, ոչ բան... շատ զարմանալի էր: Հերթական թատերական ներկայացումն է», - հավելեց մեկ ուրիշը □

<http://www.azatutyun.am/content/article/2004192.html>

Մենք չենք եկել Հայաստան՝ պարզևեր բաժանելու ոմանց. Սուեր Բելասեն
06.04.10
Tert.am



Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախաձեռնությամբ Երևանում այսօր կմեկնարկի «Արդարադատություն. անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք. նոր մարտահրավերներ» թեմայով 37-րդ համաժողովը:

Նախքան համաժողովի մեկնարկը FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը և գործադիր տնօրեն Անտուան Բեռնարդը հանդիպեցին լրագրողներին և կարևորեցին այն

հանգամանքը, որ համաժողովն առաջին անգամ է անցկացվում մեր տարածաշրջանում՝ նշելով, որ Հայաստանը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից առաջընթաց է արձանագրել:

«Մարտի 1-ից հետո Հայաստանում 10 զոհ եղավ, և եղան մարդիկ, որոնց մեղադրանքներ ներկայացվեցին ոստիկանների ցուցմունքների հիման վրա: Իսկ բոլոր լրագրողները, ովքեր փորձում են իրականությունը ներկայացնել, վտանգի են ենթարկվում», - արձանագրեց տիկին Բելասենը:

«Ես չեմ եկել միայն պաշտոնատար անձանց ձեռքը սեղմելու: Ես այդ մասին ասացի երեկ, երբ հանդիպում էի մարտի 1-ի զոհերի ընտանիքների անդամներին: Եվ ոչ մի մարդ արարած, ոչ մի մայր կամ հայր չի կարող այն բաներից հետո, ինչ որ ես լսեցի երեկ, մնալ անսիրտ և չփորձել ձեռնարկել քայլեր՝ այդ հարցերին լուծում տալու համար», - նշեց FIDH-ի նախագահը:

Նա Հայաստանի իշխանություններին հիշեցրեց, որ պետք է ամեն ինչ անել, որպեսզի բացահայտվեն այդ դեպքերը: «Անշուշտ, տառապանքը հավերժ է, բայց պետք է փորձել մեղմել: Եվ անշուշտ, այդ ոճիրները չպետք է մնան անպատիժ, պետք է ամեն ինչ անել դրանք բացահայտելու համար», - ընդգծեց բանախոսը:

Անդրադառնալով քաղբանտարկյալների խնդրին՝ Բելասենը նշեց, որ FIDH-ն ամեն ինչ անելու է նրանց ազատման համար: «Մենք չենք եկել Հայաստան՝ պարզևեր բաժանելու ոմանց: Պետք է այդ բոլոր ոճիրները բացահայտվեն և մեղավորները պատժվեն», - հայտարարեց նա՝ նշելով, որ FIDH-ի ղեկավարները հանդիպել են քաղբանտարկյալների ընտանիքների անդամներին:

Բելասենը հանդիպել է նաև ՀՀ առաջին նախագահ, Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանին: «Նա մեծ հույսեր է կապում մեր այցի հետ: Թե՛ մեզ, թե՛ նրա համար առաջնահերթ խնդիրը քաղբանտարկյալների ազատությունն է», - նշեց FIDH նախագահը:

<http://tert.am/am/news/2010/04/06/belassen/>

ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՂՄՆ ԵՆ (Լրացված)

06.04.10

Lragir.am

Ինչպես հայտնի է, այսօր Երևանում մեկնարկել է Մարդու իրավունքի համաշխարհային կազմակերպության համաժողովը, որը քննարկում է Հայաստանում դատավարության խնդիրները: Համաժողովի մասնակիցները FIDH նախագահ Սուեր Բելասենի գլխավորությամբ քիչ առաջ միացել են Մատենադարանի մոտ ընթացող Հայ Ազգային կոնգրեսի հանրահավաքին: Նիգերիայից իրավապաշտպան Եզիկե Իբուկիուկու Օհաբուեյնայուն ողջունել է հանրահավաքի մասնակիցներին, դատապարտել ազատության սահմանափակումները, պահանջել ազատ արձակել քաղբանտարկյալներին: Վատ է, երբ մարդիկ չեն պայքարում ազատության համար, ասել է նա: Լեւոն Զուրաբյանը հայտարարել է, թե ձեռք ենք բերել հավատարիմ բարեկամներ, որոնք աշխարհով մեկ տարածելու են մեր ձայնը եւ ճեղքելու են տեղեկատվական բլոկադան:

FIDH համաժողովի մասնակիցները լուսանկարվել են Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ:

Ելույթ ունենալով հանրահավաքին, FIDH նախագահ Սուեր Բելասենը հայտարարել է, թե բոլորս այստեղ ենք հանուն քաղբանտարկյալների ազատության: FIDH իր ողջ կազմով ձեզ հետ է: Այստեղ բազմաթիվ երկրների ներկայացուցիչներ կան, եւ նրանցից ամեն մեկը կասի, որ ձեզ հետ է: Պահանջում ենք քաղբանտարկյալների ազատ արձակում, ասել է Բելասենը եւ հայերեն վանկարկել Ազատություն: Նրանից հետո ելույթ են ունեցել համաժողովի այլ մասնակիցներ:

Արամ Խաչատրյանի արձանի մոտ ժամը 13-ից մեկնարկել է «Քաղաքական բանտարկյալների և հալածյալների պաշտպանության կոմիտեի» կազմակերպած բողոքի ակցիան, որի մասնակիցները հանդես էին գալիս «Ազատություն քաղբանտարկյալներին» կոչով: Ակտիվիստները կրում են բանտարկյալների համազգեստ ու ձեռնաշղթաներ և պարզել են քաղբանտարկյալների լուսանկարներ:

Մինչ այդ Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում մեկնարկել էր Մարդու իրավունքի միջազգային ֆեդերացիայի՝ FIDH-ի 37-րդ կոնգրեսը, որի շրջանակներում Երևանում են գտնվում աշխարհի 140 երկրներից ժամանած ավելի քան 300 պատվիրակներ:

FIDH նախագահ Սուեր Բելասենը մինչև շենք մտնելը մի քանի րոպե կանգ առավ ցուցարարների մոտ, համբուրեց նրանցից մի քանիսին և բռունցքը վեր պարզած կանգնեց նրանց կողքին:

Համաժողովի մասնակիցները պարերաբար դուրս էին գալիս, մոտենում շենքի առջև հավաքված բողոքի ցույցի մասնակիցներին, զրուցում նրանց հետ: Նրանցից մի քանիսը բջջայիններով, խցիկներով նկարահանում էին ակցիան: Բողոքի ակցիայի մասնակիցներից մեկն արտասահմանցի հյուրերին բարձրախոսով ներկայացրեց հայաստանյան իրականությունը, այն, որ 2008 թ-ի մարտյան դեպքերից հետո

ձերբակալված 14 քաղբանտարկյալ դեռ անազատության մեջ են, որ իրենք պահանջում են նրանց շուտափույթ ազատ արձակումը:

Նիգերիայից ժամանած իրավապաշտպան Եզիկե Իբուկիուկու Օհաբուեյնայուն՝ CLO կազմակերպությունից, ոգևորեց ակցիայի մասնակիցներին՝ իրավապաշտպանը նրանց հետ «Ազատություն» ու 'Freedom' գոչեց՝ ձեռնաշղթան անցկացնելով իր ձեռքին՝ «Մենք այստեղ ենք, որ առաջին հերթին Ձեզ լսենք, նրանց, ովքեր անարդարության մեջ են: Մենք ձեր կողքին ենք», պայքարողներին ասաց Օհաբուեյնայուն:

Լիբանանցի իրավապաշտպան Նեհմե Ջուման «Ալտիում» կազմակերպությունից լուսանկարվեց քաղաքացիների հետ ու նշեց՝ «Ուրախ եմ, որ մարդիկ իրենց երկրում պայքարում են ազատության ու արդարության համար»:

«Տիկին Բելասենը մինչ համաժողովի սկսվելը մի շարք կարևոր հանդիպումներ է ունեցել Երևանում, բացի այդ, աշխարհի տարբեր երկրներից իրավապաշտպաններ են եկել մեր երկիր: Ապասելիքներս ու ակնկալիքներս, իհարկե, այդքան մեծ չեն, բայց այն փաստը, որ համաժողովի մասնակիցները անընդհատ դուրս են գալիս դահլիճից ու ոգևորում քաղաքացուն, պիկետի մասնակցին, խոսուն փաստ է», ասում է ՀԱԿ ներկայացուցիչ Արամ Մանուկյանը:

<http://www.lragir.am/armsrc/country33725.html>

Արդարադատության նախարարը քաղբանտարկյալների վերաբերյալ հարցին չպատասխանեց

06.04.10

Tert.am



ՀՀ արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանից, ով այսօր մասնակցում էր Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համագումարին, լրագրողները հետաքրքրվեցին, թե ինչպես է նա վերաբերվում այս կառույցի կողմից Հայաստանի արդարադատության հասցեին հնչեցրած մեղադրանքներին: Հիշեցնենք, որ FIDH-ը մտահոգություն է հայտնել հայաստանյան բանտերում պահվող

քաղբանտարկյալների և Մարտի 1–ին 10 մարդկանց սպանության դեպքերի չբացահայտման առնչությամբ և իշխանություններին հորդորել է այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկել:

«Յուրաքանչյուր չբացահայտված հանցագործություն՝ մարտմեկյան դեպքերի հետ կապված, թե չկապված, խնդիր է իրավապահ մարմինների և հասարակության համար: Իհարկե, դա խնդիր է: Ինչ վերաբերում է դատավարությունների ընթացքին, ես արդեն հանգամանորեն դրանց անդրադարձել եմ, մատնանշել եմ և՛ գործնական, և՛ օրենսդրական հարցադրումները»,- ասաց նախարարը՝ այդպես էլ չներկայացնելով իր կարծիքը քաղբանտարկյալների վերաբերյալ:

Ըստ Դանիելյանի՝ ցանկացած սպանություն, անկախ նրանից, թե դա ինչ իրավիճակում է տեղի ունեցել, մտահոգում է իրավապահներին:

Երբ լրագրողները Դանիելյանին խնդրեցին որպես արդարադատության նախարար ներկայացնել իր դիրքորոշումը քաղբանտարկյալների վերաբերյալ, նա ասաց. «Ես այդ հարցին արդեն պատասխանեցի: Հարցերը կրկնվում են, շնորհակալություն»:

Նախարարը նաև առիթն օգտագործեց և ասաց, որ FIDH-ն է իրեն խնդրել ելույթով հանդես գալ համագումարում:

«Ինքս չեմ խնդրել ելույթ ունենալ, ինձ խնդրել են՝ բավարարել եմ: Թող իրենք նկատի ունենան, որ մենք իրենց կողմից իրականացված միջոցառումներին նույնպես մասնակցում ենք»,- նշեց նախարարը:

<http://tert.am/am/news/2010/04/06/danielyan/>

Խաղաղության Նոբելյան մրցանակակիրը՝ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության մասին

06.04.10

Panorama.am

Իրանից եկած իրավապաշտպան և Խաղաղության 2003 թվականի Նոբելյան մրցանակակիր Շիրին Էբադին (Shirin Ebadi) այսօրվա ասուլիսում կարծիք հայտնեց, որ հետխորհրդային երկրների շարքում Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության առումով վիճակը բարվոք է: «Դրա համար էլ որոշեցինք այստեղ կազմակերպել Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ համագումարը», -այսօրվա ասուլիսում հայտարարեց նա՝ չմոռանալով դրա համար շնորհակալություն հայտնել Հայաստանի իշխանություններին:

Իրանցի իրավապաշտպանը դեպքեր մեջբերելով նշեց, որ շատ երկրներում, մասնավորապես իր հայրենիքում, լրագրողներ են պահվում զնդաններում, իրավապաշտպանների գործունեությունն է սահմանափակվում:

«Ես Ղազախստանից մի լրագրող ընկեր ունեի, որին լռեցնելու համար նրա երկու դստերին սպանեցին հենց նրա աչքի առաջ: Նույն անագատ վիճակն է նաև Տաշքենդում ու Բաքվում», -նկատեց Խաղաղության Նոբելյան մրցանակակիրը:

Լրագրողի դիտարկմանը, թե Հայաստանը, ի տարբերություն իրանցի բանախոսի թվարկած երկրների, Եվրոպայի խորհրդի անդամ է և համեմատել պետք է եվրոպական արժեքներ կրող երկրների հետ, Շիրին Էբադին չպատասխանեց, այլ ուղղակի նկատեց.

«Մենք որ այստեղ էինք գալիս, գիտեինք, որ մարդու իրավունքների խախտումներ Հայաստանում կան: Բոլորս միասին կաշխատենք իրավիճակը հարթելու համար»:

<http://panorama.am/am/law/2010/04/06/nobel-prizer-iranian/>

«Ամոթ, ամոթ» վանկարկումը ՄԴ նախագահին չամաչեցրեց

06.04.10

Tert.am



Արամ Խաչատրյանի անվան ֆիլիարմոնիկ մեծ համերգասրահում այսօր աշխատանքներն սկսեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) «Արդարադատություն. անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք. նոր մարտահրավերներ» թեմայով 37-րդ համագումարը:

Համագումարի մասնակիցների շուրջ 90 տոկոսը տարբեր երկրներից Հայաստան ժամանած մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կառույցների ներկայացուցիչներ էին, Հայաստանից մասնակիցների թիվը շատ քիչ էր:

Ավելին, հայաստանյան պաշտոնյաների կողմից նույնպես համագումարն անտեսվել էր. ներկա էին միայն Սահմանադրական դատարանի նախագահը, արդարադատության նախարարն ու արտաքին գործերի փոխնախարարը: Դահլիճը կիսադատարկ էր: Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը նախապես էր հրաժարվել համագումարում ելույթ ունենալուց և միայն ունկնդրի կարգավիճակում էր:

Համագումարում ելույթ ունեցան FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը, Եվրամիության ընդլայնման հարցերով հանձնակատար Ստեֆան Ֆյուլեն, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Աբդու Դիուֆը և այլք: Երբ հերթը հասավ ՄԴ նախագահ Գագիկ Հարությունյանի ելույթին, նախկին քաղբանտարկյալ Վարդգես Գասպարին, քաղբանտարկյալների պաշտպանությամբ զբաղվող ընդդիմադիրները և Գյումրիի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի ներկայացուցիչներն սկսեցին բացականչել «Ամոթ, ամոթ, ամոթ իշխանություններին»: «Ասպարեզ» ակումբը դահլիճում պարզել էր «Ազատություն 14 քաղբանտարկյալներին» բովանդակությամբ պաստառը:

«Սա քաղաքացիական հասարակության կայացման ձև ընդունենք», - կատակեց Գագիկ Հարությունյանը և խոսեց հայաստանյան արդարադատությունից: Նա չժխտեց, որ Հայաստանում դատական համակարգում կան թերություններ և հույս հայտնեց, որ դրանց արդյունավետ լուծում կտրվի նաև այս համագումարի շնորհիվ:

FIDH-ի նախագահը դարձյալ իշխանություններից պահանջեց ազատ արձակել քաղբանտարկյալներին:

Համագումարի ամբողջ ընթացքում համերգասրահի շենքի առջև, ի պաշտպանություն քաղբանտարկյալների, բողոքի ակցիա էր անցկացնում «Քաղաքական բանտարկյալների և հալածյալների պաշտպանության կոմիտեն»:

<http://tert.am/am/news/2010/04/06/congress/>

FIDH համագումարը մեկնարկում է. Սպասվում են բողոքի ակցիաներ

06.04.10

Panorama.am

Այսօր Երևանում տեղի է ունենալու «Արդարադատություն, նոր մարտահրավերներ Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք» թեմայով և Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) կազմակերպած 37-րդ համագումարը, որը շարունակվելու է մինչև ապրիլի 8-ը:

Ակնկալվում է, որ համագումարին ներկա է գտնվելու շուրջ 250 մասնակից:

Նկատենք, որ մինչև երևանյան համագումարը FIDH-ը մի շարք կազմակերպությունների հետ համատեղ հրապարակել էր Հայաստանում արդարադատության իրականացմանը նվիրված փաստաթուղթը: FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը խոսելով փաստաթղթի մասին, նշել էր. «Մեր նպատակն է հրավիրել իշխանությունների ուշադրությունը Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված խնդիրներին, ինչպես նաև արդարադատության ոլորտում առկա լուրջ խնդիրներին, որոնք էապես խոչընդոտում են Հայաստանում օրենքի գերակայությանը: Այս փաստաթղթում մենք հրապարակել ենք կարևոր առաջարկներ և հուսով ենք, որ ֆորումը ազդակ կհանդիսանա առաջնության և այդ առաջարկների իրականացման համար: Այսպիսով, մենք վերահաստատում ենք մեր առաջարկները, որոնք ներկայացրել ենք այս և վերջին տարիներին հրապարակված մի շարք փաստաթղթերում: Մասնավորապես, մենք հույս ունենք, որ ֆորումը կմեկնարկի Հայաստանում, ուր այլևս չկան քաղբանտարկյալներ: Մեծագույն կարևորություն ունի նաև այն, որ իրականացվի 2008 թ մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ արժանահավատ և արդյունավետ քննություն: Քաղբանտարկյալներին ազատ արձակելը և նման քննություն իրականացնելը կնշանավորեն այն, որ Հայաստանը գնում է դեպի օրենքի գերակայություն»:

«Քաղաքական բանտարկյալների և հալածյալների պաշտպանության» կոմիտեն իր հերթին նախօրեին հայտարարություն է տարածել, որով տեղեկացնում է, որ ապրիլի 6-ից 8-ը Կոմիտեն պիկետներ և բողոքի ակցիաներ է կազմակերպելու այն վայրերում որտեղ ֆեդերացիան անց է կացնելու իր համաժողովները՝ պահանջելով քաղբանտարկյալների ազատ արձակումը:

«Հեղինակավոր իրավապաշտպանների մասնակցությունը կոնֆերանսին բացառիկ հնարավորություն է ստեղծում ճնշումներ գործադրել ինչպես վարչախմբի, այնպես էլ իրավապաշտպան հանրության վրա 14 քաղաքական բանտարկյալներին անհապաղ ազատ արձակելու նպատակով: «Քաղբանտարկյալների պաշտպանության» կոմիտեն բոլորին կոչ է անում ակտիվորեն մասնակցել՝ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված այս միջոցառումներին», - ասված է հայտարարության մեջ:

<http://panorama.am/am/law/2010/04/06/fidh/>

**FIDH-ը ՀՀ իշխանություններին կոչ է անում ազատ արձակել քաղբանտարկյալներին
06.04.10**



Tert.am

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համաժողովի բացման արարողությանը այսօր FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը հրապարակել է Համաժողովի կոչը, որով Հայաստանի իշխանություններից պահանջում են բոլոր քաղբանտարկյալներին անհապաղ ազատ արձակել: FIDH-ը մեկ անգամ ևս կոչ է անում 2008թ. մարտի 1-ի իրադարձությունների և իրավապահ

մարմինների կողմից ուժի անհամաչափ կիրառման վերաբերյալ արդյունավետ քննություն անցկացնել: FIDH-ը նաև արտահայտում է իր մտահոգությունը ընտրական գործընթացի թերությունների և ազատ մամուլին խոչընդոտելու վերաբերյալ □

«Մենք արտահայտել ենք այս մտահոգությունները շարունակաբար վերջին ամիսների ընթացքում Հայաստանի իշխանությունների առջև ամենաբարձր ատյաններում և այսօր կեսօրին մեկ անգամ ևս ասել ենք այս մասին Հայաստանի Հանրապետության նախագահին, ինչպես խոստացել էինք զոհերի և քաղբանտարկյալների ընտանիքներին, որոնց հանդիպել էինք երեկ», - ասել է Սուեր Բելասենը: «Բոլոր այս հարցերը FIDH-ի համաժողովի համար կարևորագույն են, և այն լրջագույն կոչ է հղում այսօր իշխանություններին: Մենք հուսով ենք, որ կստանանք կոնկրետ պատասխաններ մեր բոլոր մտահոգությունների վերաբերյալ: Մենք շարունակելու ենք մեր հարցադրումները մինչև որ պատասխան կստանանք», - ավելացրել է նա □

FIDH-ի հայաստանյան անդամ կազմակերպության՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի ներկայացուցիչ Արտակ Կիրակոսյանն ասել է, որ քաղբանտարկյալներին ազատելը և մարտի մեկի տասը զոհերի մահվան համար մեղավորներին պատասխանատվության ենթարկելը Հայաստանում արդարադատության համակարգի արդյունավետության երկու գլխավոր պայմաններն են:

<http://tert.am/am/news/2010/04/06/politicalprisoners/>

FIDH-ի համաժողովի մասնակիցները ջերմորեն շփվել են ցուցարարների հետ

06.04.10

Tert.am



Օպերայի «Արամ Խաչատրյան» համերգասրահում անցկացվող FIDH-ի համաժողովի մասնակիցները պարերաբար դուրս են գալիս, մոտենում շենքի առջև հավաքված «Քաղաքական բանտարկյալների և հալածյալների պաշտպանության կոմիտեի» կազմակերպած բողոքի ցույցի մասնակիցներին, ջերմորեն զրուցում նրանց հետ: Չնայած համաժողովի կարճատև ընդմիջումն ավարտվել է, այնուամենայնիվ, մասնակիցները չեն շտապում վերադառնալ:

«Մենք եկել ենք ձեզ համար, արդարադատություն պետք է իրականացվի», - ցուցարարներին ասաց համաժողովին մասնակցող Կոլումբիայի ներկայացուցիչ, FIDH-ի ղեկավարներից Լուիս Լիգերմո Պերեսը՝ վստահեցնելով. «Մենք ձեր կողքին ենք»:

«Ուրախ կլինենք բոլոր քաղբանտարկյալներին ազատության մեջ տեսնել: Ուրախ ենք, որ դուք պայքարում եք ձեր ազատությունների և քաղբանտարկյալների ազատության համար», - հայտարարեց իրավապաշտպան կազմակերպության ներկայացուցիչը:

Իսկ FIDH նախագահ Սուեր Բելասենը մինչև շենք մտնելը մի քանի բռպե կանգ առավ ցուցարարների մոտ, համբուրեց նրանցից մի քանիսին և բռունցքը վեր պարզած կանգնեց նրանց կողքին, մինչ ցուցարարները վանկարկում էին «Ազատություն» □

<http://tert.am/am/news/2010/04/06/protectors/>

FIDH-ի համագումարը Երևանում. իրավապաշտպանները հանդիպում են՝ քննարկելու արդար դատաքննության խնդիրները
06.04.10
ArmeniaNow.com

ԳԱՅԱՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, «ԱրմենիաՆաուի» թղթակից
Երեքշաբթի՝ ապրիլի 6-ին, Երևանում կմեկնարկի Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համագումարը: 140 երկրների մոտ 300 պատվիրակներ երկօրյա համագումարում քննարկելու են արդար դատաքննության խնդիրները աշխարհում և Հայաստանում:

Մինչ համագումարի մեկնարկը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անկախ կազմակերպությունները բոյկոտել են համագումարի աշխատանքները՝ բողոքելով, որ բացման պատիվը վերապահվել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, իսկ իրենց չի տրվել ելույթի և Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություն:

Երկուշաբթի՝ ապրիլի 5-ին, FIDH նախագահ Սուեր Բելասենը հանդիպել էր նաև մարտի 1-ի զոհերի հարազատների հետ, որի ընթացքում 10 զոհերի ծնողները պատմել են եղելությունը և ասել, որ «դատախազությունը մեղավորներին բացահայտելու համար ոչինչ չի անում, այլ ընդհակառակը՝ ամեն ինչ անում է մարտի 1-ի էջը փակելու համար»:

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասենը հայտարարել է, որ մարտի 1-ի թեման եղել և մնալու է կազմակերպության ուշադրության կենտրոնում:

«Ես պաշտոնապես խոստանում եմ, որ ինձ հասանելի բոլոր բարձր ատյաններում կբարձրացնեմ ձեզ հուզող հարցերը», - հայտարարել է Բելասենը:

Նա ընդգծել է, որ նման իրավիճակներում հայտնված որոշ երկրներում իրենց կազմակերպությանը հաջողվել է պատասխանատվության ենթարկել մեղավորներին՝ միջազգային տրիբունալներում պատժվել են անգամ նախագահներ:

«Հավատացեք, որ այդ հսկայական փորձով մենք չենք եկել այստեղ ինչ-որ մարդկանց ձեռք սեղմելու, մենք եկել ենք ցույց տալու մեր փորձը ու պահանջելու, որ արդարադատություն իրականացվի: Առանց այստեղ գալու մենք չէինք կարող բարձրաձայնել այս կարևոր հարցերի մասին», - ասել է Բելասենը:
http://www.armenianow.com/hy/social/human_rights/22074/human_rights_conference_yerevan



**FIDH-ը ունի բավականաչափ ինֆորմացիա
Մարտի 1-ի վերաբերյալ**

06.04.10

Tert.am

FIDH-ի Երևանյան համաժողովի մասնակիցներից Ռուսաստանի ներկայացուցիչ, «Մեմորիալ» կենտրոնի իրավաբան Կիրիլ Կուրատենը Tert.am-ի հետ զրույցում այսօր ասաց, որ 2008թ.

մարտի 1-ի դեպքերից անմիջապես հետո ինքը եկել է Հայաստան: Նշենք, որ նա Մարտի 1-ի իրադարձությունների վերաբերյալ FIDH-ի զեկույցի համահեղինակներից է և իր խոսքերով, մեկը նրանցից, ով փորձում է վերականգնել կատարվածի իրական պատկերը: «Մեծ աշխատանք է տարվել այդ ուղղությամբ, և շատ ինֆորմացիա կա», - ասաց Կիրիլ Կուրատենը:

Ըստ նրա՝ այս համաժողովը հնարավորություն կտա ստիպել իշխանություններին՝ հաշվի առնել իրավապաշտպան կազմակերպությունների կարծիքը: «Աշխարհի տարբեր մասերից գալիս են այստեղ՝ քննարկելու մարդու իրավունքների գլոբալ խնդիրները, և իշխանությունները ստիպված կլինեն քայլ կատարել մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Ես հուսով եմ, որ այս համաժողովը դրական արդյունքներ կտա», - ասաց նա:

Նշենք նաև, որ FIDH համաժողովի բոլոր մասնակիցներին Հայ ազգային կոնգրեսի երիտասարդները մինչև դահլիճ մտնելը բաժանում էին ծրարներ, որոնց մեջ կային Մարտի 1-ի դեպքերը պատկերող տեսասկավառակներ, քաղբանտարկյալների մասին պատմող ֆիլմ և Փաստահավաք խմբի զեկույցները:

<http://tert.am/am/news/2010/04/06/march1/>

Երևանում մեկնարկեց FIDH-ի 37-րդ համագումարը



06.04.2010

Radio Free Europe / Radio Liberty

Հասմիկ Սմբատյան
Երեքշաբթի օրը Երևանում իր աշխատանքը սկսեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համագումարը, որին մասնակցում են 140 երկրներից շուրջ 300 պատվիրակներ:

«Հետխորհրդային երկրների շարքում Հայաստանում մարդու իրավունքների վիճակը համեմատաբար բարվոք է, եւ այդ պատճառով էլ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան Հայաստանում է անցկացնում իր 37-րդ համագումարը», - մինչեւ համաժողովի մեկնարկը լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց իրանցի իրավապաշտպան, Խաղաղության Նոբելյան մրցանակակիր Շիրին Էբադին:



Իրանցի իրավապաշտպան, Խաղաղության Նոբելյան մրցանակակիր Շիրին Էբադին «Համագումարն այստեղ անցկացնելու որոշում կայացնելիս մենք չէինք պնդում կամ հավատում, որ այստեղ մարդու իրավունքների ոտնահարումներ չկան, մենք գիտենք, որ դրանք առկա են: Ամեն դեպքում մենք որոշեցինք այստեղ անցկացնել, քանի որ մտածեցինք, որ այստեղ այնքան վատ չէ, որքան մյուս երկրներում: Մենք միասնաբար կաշխատենք անել ամեն ինչ՝ իրավիճակը բարելավելու համար», - ասաց Շիրին Էբադին:

«Մենք եկել ենք, որպեսզի Հայաստանը իրական առաջընթաց արձանագրի արդարադատության ոլորտում», - հայտարարեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասենը՝ հավելելով. - «Մեր գալու նպատակն այստեղ այն է, որ Հայաստանը իրական

առաջընթաց ապրի, իսկ յուրաքանչյուր առաջընթաց հենվում է նախեւառաջ արդարադատության իրականացման վրա»□

Համագումարը նվիրված է հենց արդարադատության ոլորտի նոր մարտահրավերներին:

«Հայաստանում մարդու իրավունքների վիճակը, մարտի 1-ի դեպքերի բացահայտումն

ու քաղաքական բանտարկյալներն են լինելու մեր ուշադրության կենտրոնում», - հայտարարեց Բելասենը՝ վերահաստատելով այն, ինչ ասել էր երեկ Մարտի 1-ի գոհերի հարազատների հետ ունեցած իր հանդիպման ժամանակ: - «Ես չեմ եկել միայն պաշտոնատար անձանց ձեռքերը սեղմելու համար, եւ երեկ ես դա ասացի գոհերի հարազատների հետ հանդիպմանը: Ոչ մի մարդ արարած, ոչ մի հայր կամ մայր չի կարող այն բաներից հետո, ինչ ես լսեցի երեկ, մնալ անսիրտ եւ չփորձել ձեռնարկել հնարավորը, որպեսզի այդ հարցերին լուծում տրվի: Հետեւաբար մենք պետք է հիշեցնենք իշխանություններին, որ չի կարելի լռության մատնել այս ամենը, նրանք պետք է անեն ամեն ինչ, ամեն ինչ պետք է բացահայտվի: Մենք չենք եկել այստեղ պարզենք բաժանելու ոմանց, այդ բոլոր ռճիրները պետք է բացահայտվեն, եւ որեւէ մեկը չպետք է մնա անպատիժ: Ամեն ինչ անելու ենք նաեւ քաղբանտարկյալներին ազատ արձակելու համար: Վստահ եղեք, որ միջազգային համերաշխությունը ձեր կողքին է, եւ մենք կհասնենք նրանց ազատ արձակմանը»:

Հարկ է նշել, որ տեղացի իրավապաշտպաններից ոմանք բոյկոտել են համագումարը:

«Դա իրենց՝ մեր կոլեգաների դիրքորոշումն է, եւ մենք ողջունում ենք ցանկացած դիրքորոշում», - ասաց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիային անդամակցող «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» կազմակերպության կառավարման խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանը:

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը եւս հրաժարվել է ելույթ ունենալ համագումարում:

«Մեզ համար կարեւոր էր, որ քաղբանտարկյալներին եւ մարտի 1-ին առնչվող հարցերը համագումարում բարձրացվեին առավելագույնս ապակուսակցական ձևով, սակայն օմբուդսմենը հրաժարվեց ելույթ ունենալու իր հնարավորությունից՝ պատճառաբանելով թե՛ այդ ֆորմատով չի կարող ներկայացնել իր կարծիքը: Օմբուդսմենի բացակայության բացը կլրացնի Արտակ Զեյնալյանը, ով զբաղվում է թե՛ գոհերի հարազատների իրավունքներով եւ թե՛ քաղբանտարկյալներ հարցերով», - ասաց Արտակ Կիրակոսյանը:

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասենին այսօր ընդունել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Երկրի նախագահը հաջողություն է արդյունավետ աշխատանք է մաղթել համաժողովի մասնակիցներին եւ հույս հայտնել, որ նրանք այս օրերին նաեւ հնարավորություն կունենան ծանոթանալու մեր երկրի պատմությանն ու ավանդույթներին □

<http://www.azatutyun.am/content/article/2003905.html>

Քաղբանտարկյալների հարազատները չհավատացին

05.04.10

A1+



Ողջունելով հանդերձ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) ներկայացուցիչներին՝ ներկա եւ նախկին քաղբանտարկյալների հարազատներն այսօր կազմակերպության նախագահ Սուեր Բելասենին հայտնեցին, որ չեն հավատում նրա գեղեցիկ խոսքերին:

«Մենք չենք հավատում Ձեր կազմակերպությանը, քանի որ այն իրավապաշտպան կազմակերպությունները, որոնք այս երկու տարիների ընթացքում եղել են մեր կողքին, այսօր բոլորովին են Ձեր համաժողովը», - տիկին Բելասենին ասացին քաղբանտարկյալների կանայք: Քաղբանտարկյալների հարազատների խոսքերն անակնկալ էին FIDH-ի ներկայացուցիչների համար:

Սուեր Բելասենը հայտնեց, որ 2008թ. մարտի 1-ի դեպքերի եւ դրանց հետեւանքների գնահատականը FIDH-ը տվել է դեպքերից անմիջապես հետո եւ չի խուսափել «քաղբանտարկյալ» բառից:

Նա խոստացավ, որ վաղը Երեւանում մեկնարկվող համաժողովի ընթացքում մանրամասն քննարկվելու է մարտի 1-ի դեպքերի, քաղբանտարկյալների առկայությունը: «Մենք ՀՀ եւ ընդհանրապես որեւէ իշխանությունների հետ բարեկամություն չենք անում: Մենք նրանց հետ շփվում ենք՝ տեղի ունեցած ոտնահարումները ուղղելու եւ կանխելու համար», - ասաց FIDH-ի ներկայացուցիչ Անտուան Բեռնարը:

Իրենց խոսքն ավելի արժանահավատ դարձնելու համար՝ տիկին Բելասենը հիշեցրեց, որ 22 տարի առաջ FIDH-ն միջնորդել է, որպեսզի ազատ արձակվի քաղբանտարկյալ Լեւոն Տեր-Պետրոսյանը: «Մենք հավատարիմ ենք մեր սկզբունքներին եւ մեզանից կախված ամեն ինչ անելու ենք, որպեսզի ՀՀ-ում ազատ արձակվեն բոլոր քաղբանտարկյալները: Մենք մեր կոնֆերանսն անցկացնելու համար 5 երկրի ընտրություն ունեին, սակայն եկանք Հայաստան, քանի որ ՀՀ-ում այնպիսի վիճակ է, որ երկիրը կամ պետք է առաջ գնա կամ խիստ հետընթաց արձանագրի», - ասաց նա:

Քաղբանտարկյալների հարազատները FIDH-ի ներկայացուցիչներին հրավիրեցին վաղը նախատեսված Հայ Ազգային Կոնգրեսի հանրահավաքին: Մինչ այդ առաջարկեցին շրջել մարզային ավտոկայաններում եւ տեսնել, թե իշխանություններն ինչպես են փակում ճանապարհները:

Ի տարբերություն մարտի 1-ի 10 զոհերի հարազատների՝ FIDH-ի եւ քաղբանտարկյալների հարազատների հանդիպումն անցավ լարված մթնոլորտում: Քաղբանտարկյալների հարազատները Սուեր Բելասենից պահանջեցին կոնֆերանսից

հետո ՀՀ-ում մարդու իրավունքների ոլորտի վերաբերյալ հայտարարություն անել հենց մեր երկրում եւ ոչ թե հեռանալուց հետո: «Մինչեւ Երեւան գալը, մենք հայտարարել ենք, որ պետք է անհապաղ ազատ արձակվեն բոլոր քաղբանտարկյալները, եւ մեր հայտարարությունը ուժի մեջ է», - ասաց տիկին Բելասենը: Հիշեցնենք, որ FIDH-ի համաժողովում Մարդու Իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը հրաժարվել է ելույթ ունենալ: Նրա համար նախատեսված ժամանակը FIDH-ն առաջարկել է իրավապաշտպան Արտակ Զեյնալյանին: Վերջինս համաձայնվել է ելույթ ունենալ 2008թ. Մարտի 1-ի դեպքերի եւ քաղբանտարկյալների մասին:

<http://a1plus.am/am/politics/2010/04/5/women>

Մուեր Բելասեն. Ես հավատարիմ եմ իմ կոչմանը



05.04.10
Hra.am

Այսօր «Քաղաքացիական հասարակության ինստիտուտում» «Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի» (FIDH) նախագահ Մուեր Բելասենը հանդիպեց քաղաքանտարկյալների՝

կանանց հետ: Հանդիպումը կազմակերպվել էր տիկին Բելասենի նախաձեռնությամբ՝ «Արդարադատություն, նոր մարտահրավերներ.անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք» թեմայով համաժողովի նախօրեին:



Մուեր Բելասենը հանդիպման սկզբում նշեց, որ քաղաքանտարկյալների տիկնանց հետ հանդիպելով՝ համոզված է, որ նրանք հասկանում են՝ ովքեր են իրենք և ինչպես կարող են օգնել.

«Հուսով եմ, որ հասկանում եք նաև, որ եթե եկել ենք այստեղ 400

հոգով հանդիպելու, այդ նրա համար չէ, որ բարձրաստիճան պաշտոնյաների ձեռքը սեղմենք, այլ, որ օգնենք իրավապաշտպաններին ու այն մարդկանց, ովքեր դարձել են անարդարության զոհ»□

Բելասենը նշեց, որ FIDH-ի միջամտության արդյունքում ավելի քան 1000 մարդ ազատ է արձակվել և այդ թվում է եղել նաև առաջին նախագահ Լևոն-տեր Պետրոսյանը, ով որպես քաղաքանտարկյալ Մոսկվայում ձերբակալված է եղել□

«Մենք երբեք չենք կարող որևէ մեկի ազատության մասին մտածել՝ նստելով նեղ շրջապատում: Եթե բարձրաստիճան ներկայացուցիչներին հրավիրում ենք ֆորում, այդ նրա համար է, որ հնարավորություն ունենանք ուղղակիորեն նրանց դիմելու,- ասաց նա,-Հետևաբար պատահական չէր, որ մենք ցանկացանք հանդիպել ձեզ հետ նախքան ֆորումը, ու ձեր խոսքը փոխանցենք հանդիպման մասնակիցներին: Այս ամենն արվում է ձեր ամուսինների կողմերի ու տղաների ազատության համար ու իզուր չէ, որ մեզ հետ եկել են նաև միջազգային քրեական դատարանի գլխավոր դատախազն ու այլ շատ իրավապաշտպաններ»□

Քաղաքանտարկյալ Աշոտ Մանուկյանի տիկին Անահիտ Կիրակոսյանը տիկին Բելասենին առաջարկեց վաղը գիտաժողովի ընթացքում կայանալիք հանրահավաքի ժամանակ FIDH-ի

անդամներից որևէ մեկին ուղարկել քաղաք Վանաձոր, որպեսզի տեղում տեսնեն, թե ինչպես քաղաքացիներին թույլ չեն տալիս գալ Երևան ու մասնակցել հանրահավաքին □

Նախկին քաղաքանտարկյալ Գրիգոր Ոսկերչյանի կինը՝ Մարինե Հարությունյանը մտահոգություն հայտնեց, որ մի քանի իրավապաշտպաններ բոյկոտում են ֆորումը □

«Ինձ շատ է անհանգստացնում, որ ֆորումին չեն մասնակցելու այնպիսի մարդիկ, ովքեր իրականում զբաղվում են մարդու իրավունքների պաշտպանությամբ ու չզիտեն՝ ում կարծիքն է ներկայացվելու ֆորումում: Ինձ անհանգստացնում է փաստը, որ Միքայել Դանիելյանը, որ մեզ երկար ժամանակ ներկայացրել է որպես իրավապաշտպան, հրաժարվում է մասնակցել ձեր ֆորումին» □

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ հկ-ի (ՔՀԻ) խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանի խոսքով, իրենց դիրքորոշումը միշտ եղել է հստակ՝ պետք է ազատ արձակվեն բոլոր քաղաքանտարկյալները.

«Մենք օգտագործել ենք ցանկացած առիթ՝ այդ մասին բարձրաձայնելու համար և ուրախ ենք, որ այս քննարկումների ընթացքում կարող է հարցը բարձրացվել ոչ միայն պաշտոնական մակարդակով, այլ այդ մասին կիմանան աշխարհի տարբեր իրավապաշտպանների շրջանակներում» □

Մուեր Բելասենն էլ ավելացրեց, որ վերջին անգամ դեկտեմբերի է եղել Հայաստանում ու հանդիպել Սաշա Դավթյանի հետ.

«Մեր միջամտությունն էլ որոշ չափով նպաստեց, որ նրան ազատ արձակեցին ու ինձ բոլորվին պետք չէ բացատրել ինչպես է անցնում գործընթացը իշխանական մարմինների հետ կապված: Հայաստանը միակ դեպքը չէ, որ մարդու իրավունքների տեսակետից վատ վիճակում է» □

Նախկին արտգործնախարար ու նախկին քաղաքանտարկյալ Ալեքսանդր Արզումանյանի տիկին Մելիսա Բրաունն էլ ասաց, որ ինքը FIDH-ի ներկայացուցչի հետ հանդիպել է 2 տարի առաջ ու հիմա մտահոգված է, որ Գագիկ Հարությունյանին, Գևորգ Դանիելյանին այս ֆորումին հրավիրելով՝ շանս է տրվում.

«Նրանք կերևան հեռուստացույցով՝ ձեռքսեղմումով և ժպիտներով, ինչը մեր դեմ կօգտագործվի: Մենք Միանմար և Զինբաբվե չենք, բայց նրանք քայլ առա քայլ հասան այն ահավոր վիճակին, որ հիմա այդ ճանապարհի վրա ենք գտնվում այսօր», ասում էր Մելիսա Բրաունը □

Մուեր Բելասենը հավաստիացրեց, որ իրենք մտածել են բոլոր հավանական ու հնարավոր տարբերակները, որ պետությունը վատ գնալու ճանապարհից շեղվի ու լավ ուղղով գնա □

«Հիմա Հայաստանը կանգնած է այն ուղղու վրա, որ կամ լրիվ վատ վերջաբան կունան կամ լավ: Մենք ուզում էինք գալ հենց այս երկիր, որ միասին պայքարենք՝ թույլ չտալով

շրջվել վատ ուղղությամբ ու դրա համար էլ հիմա վճռական պահն է հասել, որ պետք է պայքարել»,- ասաց նա □

Արտակ Կիրակոսյանն էլ հավելեց, որ իրենք փորձել են ֆորումի միջոցով հնարավորինս օպտիմալ մոտենալ քաղբանտարկյալների ու մարդու իրավունքների հետ կապված խնդիրներին, որպեսզի իրենց աշխատանքն էլ չկուսակցականացվի □

Քաղբանտարկյալ Մուշեղ Մաղաթեյանի որդի Սևակ Մաղաթեյանը դիմեց տիկին Բելասենին՝ ասելով, որ վերջինս «գեղեցիկ խոքեր ասաց», առաջինը չէր, որ նման բաներ է ասում, բայց թող ներեն իր կարծիքի համար.

«Չեմ հավատում, որ կարող եք օրինական ճանապարհով որևէ բան անել՝ քաղբանտարկյալներին ազատ արձակելու համար: Հավատում եմ ու հուսով եմ, որ հավտարիմ եք մարդու իրավունքների հետ կապված ձեր կոչմանը ու ձեզանից կախված ամեն ինչ անելու եք» □

Մուեր Բելասենը, ի պատասխան Սևակ Մաղաթեյանի, ասաց, որ ինքը հավատարիմ է իր կոչմանը, դրա համար էլ այստեղ է □

<http://www.hra.am/am/hr-reviews/2010/04/05/meeting>

Մենք նրանց կողքին ենք, ովքեր տառապում են

05.04.10

Hra.am



Ապրիլի 5-ին «Քաղաքացիական հասարակության ինստիտուտում» Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի /FIDH/ նախագահ տիկին Սուեր Բելասենի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում մարտի 1-ի գոհերի հարազատների հետ □

Չոհերի հարազատները տիկին Բելասենին պատմեցին դեպքերի մանրամասներ: Նրանք փաստեցին, որ իրենց որդիները բախման հետևանքով չեն գոհվել, այլ խաղաղ ցույցի էին դուրս եկել ու կրակոցներից գոհվել իրենց իսկ մայրաքաղաքի կենտրոնում՝ խաղաղ պայմաններում □

Չոհվածներից՝ Արմեն Ֆարմանյանի հայրը՝ Վաչագան Ֆարմանյանը նշեց, որ թեպետ արյունալի դեպքերից անցել է երկու տարի, սակայն սպանությունները դեռ բացահայտված չեն □

«Դատախազությունը, իրավապահ մարմինները ոչնչով չեն զբաղվում, ընդհակառակը՝ անընդհատ ուզում են փակել Մարտի 1-ի էջը: Իմ որդին ո՛չ զենք է ունեցել, ո՛չ լուր, ո՛չ բենզին: Մի՞ թե խաղաղ ցուցարարին սպանում են» □

Մամվել Հարությունյանի հայրը պատմեց, որ իր որդին հայտնաբերել է մարտիմեկյան դեպքերից 3 օր անց՝ մարտի 4-ին՝ հիվանդանոցում՝ անճանաչելի վիճակում, իսկ 41 օր անց նա մահացել է □

«Քրիստոնեական կրոնի համաձայն, այսօր մեռելոց է, և մենք պիտի գերեզման գնայինք, բայց եկել ենք այստեղ հավատով, որ դուք այս հարցին ճիշտ լուծում կտաք», -ասաց Մամվել Հարությունյանի հայրը □

Գոռ Քլոյանը ծնողները նշեցին, որ Գոռը իրենց միակ որդին է եղել, ով երկու երեխա թողել որբ, որից մեկին 40 օրական □

«Մինչև հիմա էլ չեմ կարողանում հասկանալ, թե ինչու իմ որդին այդ օրը տուն չվերադարձավ, չե՞ որ նա տանից առանց զենքի էր դուրս եկել», - հարցնում էր Գոռ Քլոյանի մայրը □

Զինճառայող Տիգրան Աբգարյանի մայրը արցունքները աչքերին դիմեց տիկին Բելասենին

«Ախր, իմ երեխան 18 տարեկան էր, ոստիկանական զորքերի զինճառայող: 40 օր անգիտակից պառկած էր, 19 -ամյակը հենց հիվանդանոցում լրացավ: Եթե իմ որդին զոհվեր սահմանի վրա կամ ռազմի դաշտում, կմտածեի, որ հայրենիքի համար տվեցի: Ես նրան հայրենիքի պաշտպան էի ուղարկել: Քաղաքի կենտրոնում ո՞վ սպանեց իմ զինվորին»□

«Չերյոմուխա-7» հատուկ միջոցից զոհված Տիգրան Խաչատրյանի մայրը՝ Ալլա Հովհաննիսյանը նշեց.

«Այդ զենքը՝ Չերյոմուխան, օգտագործել են 4 ոստիկաններ, բայց նրանք այսօր էլ աշխատում են ոստիկանական համակարգում ու անգամ որպես կասկածյալ չեն հարցաքննվել»□

Դավիթ Պետրոսյանի մայրը վստահ է, որ իր որդու և մյուս զոհերի մահը բախման հետևանք չէր

«Մարդը մարդուն, որ փողոցում էլ բախվի, չի մահանա: Քաղաքում այդ օրը զորք կար, տանկեր, զինված ոստիկաններ»□

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ տիկին Սուեր Բելասենը լսելով զոհերի ծնողներին՝ ասաց

«Ես մայր եմ, նաև տատիկ, և այն տարիքները, որ դուք նշում էինք՝ 18, 23, 28, 35 տարեկան, հասկանում եմ, թե որքան ցավալի է Ձեզ համար՝ որպես ծնողներ: Դուք ապրում եք այդ վիշտը Ձեր հոգում, այդուհանդերձ պետք է օգնել Ձեզ արդարադատությամբ և ճշմարտությամբ: Դա Ձեր ցավն է, ճիշտ է, սակայն մեր աշխատանքն է գտնել ճշմարտությունը և վեր համել այն: Դա մեր աշխատանքն է այստեղ և ողջ աշխարհում: Հասկանում եմ, որ դա Ձեր ցավը չի մեղմացնի, սակայն, գիտակցում, որ գործի բացահայտումը կօգնի Ձեզ»□

Տիկին Բելասենը ընդգծեց, որ նմանատիպ իրավիճակներում հայտնված որոշ երկրներում իրենց կազմակերպությունը հասել է նրան, որ պատժվեն մեղավորները՝ ընդհուպ մինչև նախագահներ: Եվ եթե նրանք իրենց երկրի ներսում չեն կանգնել դատարանի առաջ, ապա դա տեղի է ունեցել միջազգային տրիբունալներում□

«Հավատացեք, որ այդ հսկայական փորձով մենք չենք եկել այստեղ ինչ-որ մարդկանց ձեռք սեղմելու, մենք եկել ենք, ցույց տալու մեր փորձը ու պահանջելու, որ արդարադատություն իրականացվի: Առանց այստեղ գալու մենք չէինք կարող բարձրաձայնել այս կարևոր հարցերի մասին: Մենք եկել ենք ասելու, որ նրանց կողքին ենք, ովքեր տառապում են, ում սպանում են: Մենք աշխատում ենք հանուն նրանց, ովքեր զոհվել են սեփական արժանապատվության համար», - շեշտեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահը□

Տիկին Բելասենը նշեց նաև, որ մարտի 1-ից հետո շուրջ 5 անգամ Հայաստան են եկել իրենց կազմակերպության ներկայացուցիչները□

«Հավատացեք, մենք հենց այնպես չենք գալիս Հայաստան, միշտ ցանկանում ենք շաշափելի արդյունքների հասնել: Վաղը աշխարհի տարբեր 300 ներկայացուցիչ է գալու Հայաստան, և Ձեր երեխաների պատմությունը կներկայացվի նրանց: Լավ է, որ հենց Ձեզնից լսեցի այդ ամենը, քանի որ ծնողները երբեք ոչինչ չեն չափազանցնում: Ես պաշտոնապես խոստանում եմ, որ ինձ հասանելի բոլոր բարձր ատյաններում կբարձրացնեմ Ձեզ հուզող հարցերը»□

Ձոհերի հարազատներին ուղեկցում էին և հանդիպմանը ներկա էին ՀԱԿ-ի ներկայացուցիչ Առաքել Սեմիրջյանը, Մարտի 1-ի զոհերի շահերի ներկայացուցիչներ Վահե Գրիգորյանն ու Արտակ Ձեյնալյանը, ինչպես նաև Քաղաքացիական հասարակության ինստիտուտի ներկայացուցիչներ Արտակ Կիրակոսյանն ու Արման Դանիելյանը□

<http://www.hra.am/am/point-of-view/2010/04/05/fidh>

Աջակցում էին զոհերի հարազատներին

05.04.10

Hra.am



Մինչ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտում» (հ/կ)մարտի մեկի զոհերի հարազատները հանդիպում էին «Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի» նախագահ Սուեր Բելասենի հետ, շենքի դիմաց զոհերի հարազատներին աջակցող ակտիվիստները ակցիա էին կազմակերպել □

Չոհերի հարազատների հետ հանդիպումը կազմակերպվել էր ապրիլի 6-ին Երևանում «Արդարադատություն.Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք նոր մարտահրավերներ» թեմայով համաժողովից առաջ՝ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի(FIDH) նախագահ Սուեր Բելասենի նախաձեռնությամբ: □

Հայ ազգային կոնգրեսի ակտիվիստ Արամ Մանուկյանն ասում է, որ Սուեր Բելասենի համարձակ նախաձեռնությունը առիթ է տալիս հավատալու, որ «միջազգային այդ կազմակերպությունն ավելի ազատ է, քան եվրոպական չինովնիկական մյուս կառույցները» □

«Մենք որպես աջակից 10 զոհվածների ծնողների նախաձեռնությամբ ու իրենց կազմած տեքստով եկել ենք տիկին Բելասենի մոտ,- ասաց նա,-2 տարի անցել է, բայց զոհվածներից որևէ մեկի սպանության հետ կապված որևէ առաջընթաց չկա, իսկ մարդու իրավունքները միշտ ավելի գիժ ու համարձակ են, մենք հույս ունենք, որ միջազգային կառույցներում ձայն կբարձրացվի» □

Ակցիային մասնակից ակտիվիստ կանայք բռնել էին 10 զոհերի լուսանկարները, մինչ հարազատները ներսում իրենց փաստաբան Արտակ Զեյնալյանի հետ զրուցում էին Սուեր Բելասենի հետ □

Ակցիայիմասնակից Օֆելյա Մարգարյանը, չնայած համառորեն պայքարում է մյուս ակտիվիստների հետ, համոզված է, որ այս անգամ էլ ոչինչ չի ստացվելու □

«Եթե այսքան ժամանակ մայրերին ձեռք էն փողոցներում, էլ ինչ կարելի է սպասել իշխանություններից, ես ոչ մի բանի էլ չեմ հավատում», - ասաց նա □

Վիոլետ Ղազարյանն էլ ասաց, որ մարտի մեկն իրենց համար միշտ էլ բաց վերք կմնա, որի վրա ամեն առիթով աղ ու բիբար են լցնում□

<http://www.hra.am/am/events/2010/04/05/victim>

Ընդդիմության առաջնորդը հանդիպել է FIDH-ի նախագահի հետ

05.04.10

Panorama.am

ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը նախօրեին հանդիպել է Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասսենին, տեղեկացնում են ՀԱԿ լրատվական ծառայությունից:

Ինչպես հայտնում են ՀԱԿ-ից, հանդիպման ընթացքում «Լևոն Տեր-Պետրոսյանը ներկայացրել է Հայաստանում ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտում տիրող անմխիթար վիճակը, դատական համակարգի լիակատար կախվածությունն ու իշխանությունների պատժիչ գործիքի վերածվելու հանգամանքը և մասնավորապես քաղբանտարկյալների առկայության փաստը»:

Ըստ աղբյուրի, Տեր-Պետրոսյանը նշել է, որ եթե առաջիկայում տեղի ունենալիք ՄԻՄՖ կոնգրեսը սկզբունքային դիրքորոշում չարտահայտի այս հարցերի վերաբերյալ, ապա դա «մի կողմից խոր հիասթափություն կպատճառի հասարակությանը, մյուս կողմից մեծ նվեր կհանդիսանա Հայաստանի բռնապետական իշխանությանը՝ նրանց խրախուսելով էլ ավելի խստացնել քաղաքական ճնշումներն ու հալածանքները»:

Հանդիպմանը մասնակցել են նաև Հայ Ազգային Կոնգրեսի կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչներ Լևոն Զուրաբյանը և Ավետիս Ավագյանը:

<http://panorama.am/am/politics/2010/04/05/opposition-fidh/>

FIDH-ի համաժողովը Մարտի 1-ի զոհերի և նրանց հարազատների համար է. Սուեր Բելասեն

05.04.10

Tert.am



Այսօր առավոտյան Մարտի 1-ի զոհերի հարազատները և նրանց աջակցող Հայ ազգային կոնգրեսի ակտիվիստները զոհերի նկարները ձեռքներին երթով գնացին դեպի Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, որտեղ զոհերի հարազատների հետ հանդիպեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենը: Չոհերի հարազատները պատմեցին, որ իշխանություններն ամեն ինչ անում են

իրենց հարազատների սպանության գործը կոծկելու համար, ավելին՝ «այդ գործն իրականացնողները վաղը էլույթ են ունենալու FIDH-ի համաժողովի ժամանակ»□

Չոհերի հարազատները տիկին Բելասենին խնդրեցին, որպեսզի նա այդ հարցերը վաղը համաժողովի ժամանակ բարձրացնի և հետամուտ լինի դրանց լուծմանը: Նրանք իրենց դժգոհություններն ամփոփող ու իրենց ստորագրություններով նամակ հանձնեցին տիկին Բելասենին:

Սուեր Բելասենը վստահեցրեց, որ համաժողովը Հայաստանում է անցնում Մարտի 1-ի զոհերի և նրանց հարազատների համար:

«Մենք եկել ենք այնպիսի երկրներից, որտեղ մարդիկ նույնպես բախվում ենք նմանատիպ հրեշավոր և ծանր իրավիճակների: Ես ուզում եմ ասել, որ այսպիսի դեպքերում, երբ իրավիճակը թվում էր նույնքան անելանելի և փակուղային, ինչպես այստեղ, որոշ երկրներում մենք հասել ենք նրան, որ մեղավորները ամենաբարձր մակարդակներում, այդ թվում՝ գործող նախագահների, էթե չեն կանգնել ազգային դատարանի առջև, ապա միջազգային ատյանների առջև կանգնել են: Վստահ եղեք, որ մենք չենք եկել այստեղ, որպեսզի սեղմենք որոշ մարդկանց ձեռքերը, այլ եկել ենք, որ ցույց տանք այդ փորձը և ասենք, թե ինչ ենք մենք ուզում և ինչին ենք ձգտում: Մենք որոշել ենք զալ, որ ցույց տանք, որ մենք նրանց կողմից ենք, ովքեր տառապում են, մենք նրանց կողմից ենք, որոնց սպանում են, նրանց կողմից, ովքեր զոհվել են ազատության և սեփական արժանապատվության համար... Այդ սարսափելի իրադարձություններից անմիջապես հետո մեր կազմակերպությունը Հայաստան ուղարկեց առաջին փորձագիտական պատվիրակությունը: Դրանից հետո մենք 5 անգամ վերադարձել ենք Հայաստան», - ասաց Սուեր Բելասենը:

Բելասենը նաև նշեց, որ իրենք երբեք հենց այնպես չեն գալիս և միշտ հասնում են արդյունքի: «Ես ուզում եմ ասել, որ ավելի քան 140 երկրների ներկայացուցիչներ են գալու Երևան: Վաղը մոտ 300 մասնակիցներ մեզանից մանրամասն կիմանան, թե ինչ է իրականում կատարվել ձեր երեխաների հետ», - ասաց նա՝ վստահեցնելով, որ իրեն հասանելի ամենաբարձր մակարդակներում կպատմի այն, ինչ լսեց այսօր զոհվածների ծնողներից:

<http://www.tert.am/am/news/2010/04/05/fidh/>

«ՄԴ-ն մասնակից է մարտի 1-ի սպանություններին»

05.04.10

A1+



Ո՞վ է իրավունք տվել ՀՀ իշխանություններին կրակել մեր երեխաների վրա,- 2008թ. մարտի 1-ի՝ 10 զոհերի հարազատներն այսօր այս հարցն ուղղեցին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենին:

«Այս հարցում մենք փորձ ունենք, եւ մեր աշխատանքի արդյունքում հասել ենք, նրան, որ շատ բռնատերեր, եթե ոչ ներպետական

դատական ատյաններում, ապա միջազգային դատարաններում կանգնել են արդարադատության առաջ ընդհուպ երկրի նախագահներ»,- զոհվածների հարազատներին ասաց տիկին Բելասենը:

Զոհվածների հարազատներին վիրավորում է այն փաստը, որ վաղը Երեւանում մեկնարկվող FIDH-ի համաժողովի բացման խոսքը վստահված է եղել Մերժ Սարգսյանին, իսկ այնուհետեւ որոշվել է, որ նրան պետք է փոխարինի ՄԴ նախագահ Գագիկ Հարությունյանը:

«Մեր երեխաների սպանությունների մեջ իրենց մեղքի բաժինն ունի նաեւ Գագիկ Հարությունյանը: ՄԴ-ն իր 2008թ. փետրվարի 19-ի նախագահի կեղծված ընտրությունները չեղյալ չհայտարարելով, մասնակից դարձավ մեր երեխաների սպանություններին: Մենք գտնում ենք, որ կոնֆերանսին ելույթ ունենալու իրավունք չունի նաեւ Արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանը, Դավիթ Հարությունյանը, ընդհանրապէս բոլոր իրավապահ մարմինների ներկայացուցիչները, որոնք 2 տարի շարունակ կոծկել են երեխաների սպանությունները»,- տիկին Բելասենին ասաց 10 զոհերից Տիգրան Խաչատրյանի մայրը՝ Ալլա Հովհաննիսյանը:

Տիկին Բելասենը վստահեցրեց, որ համաժողովին հրավիրվել են պաշտոնյաններ՝ ոչ թե նրանց ձեռքերը սեղմելու, այլ նույն զոհերի հարազատների բողոքի ձայնը տեղ հասցնելու համար: Տիկին Բելասենի հետ հանդիպման ներկա էին 10 զոհերից 9-ի հարազատները: Նրանք, չզսպելով իրենց արցունքները, մանրամասն ներկայացրեցին որդիների հարազատների սպանությունների հանգամանքները:

Զոհերից Գոռ Քլոյանի հայրը՝ Մարգիս Քլոյանը պատմեց, որ մարտի 1-ին մասնակցել է հանրահավաքի եւ իր աչքերով տեսել, թե ինչպէս սադրիչները ժողովրդին ներքաշում ոստիկանության հետ բախման. «28 տարեկան իմ որդին զոհվել է «Չերյոմուխա 7»-ի դիմահար կրակոցից; Նրան սպանել են ոստիկանները»:

Զոհերից Արմեն Ֆարմանյանի հայրը՝ Վաչագան Ֆարմանյանը, հայտարարեց, որ այս 2 տարին ՀՀ իշխանություններն օգտագործել են միայն 10 զոհերի սպանությունները կոծկելու համար եւ տիկին Բելասենին կոչ արեց խնդրին մոտենալ իբրեւ մայր: Զոհերից Սամվել Հարությունյանի ծնողները պատմեցին, որ մարտի 1-ից դեպքերից միայն 3 օր հետո են կարողացել գտնել իրենց որդուն, որը 40 օր անգիտակից վիճակում մնալուց հետո՝ հիվանդանոցում մահացել է:

18-ամյա զինծառայող Տիգրան Աբգարյանի մայրը գտնում է, որ իր որդու սպանության բացահայտումը իշխանությունների պատվի խնդիրն է. «Որդուս սպանել են Լեռնի

փողոցի վրա, որտեղ ցուցարարներ չեն եղել: Ինչպե՞ս պատահեց, որ իմ որդին զոհվեց: Ո՞վ է կրակել 18 ամյա զինվորի վրա»,-տիկին Խաչատրյանը հուզմունքից չկարողացավ ավարտել խոսքը: Լսելով ներկա բոլոր զոհերի հարազատներին՝ տիկին Բելասենը ասաց. «Որեւէ մեկը չի կարող մեղմել ձեր վիշտը: Այն Ձեզ ուղեկցելու է ամբողջ կյանքում: Ես Ձեզ խոստանում եմ, որ մինչեւ վերջ կլինեմ Ձեր կողքին եւ ամեն ինչ կանենք, որպեսզի բոլոր մեղավորներն՝ անկախ իրենց զբաղեցրած պաշտոնից եւ դիրքից, պատասխան տան կատարած հանցանքի համար»:

<http://a1plus.am/am/politics/2010/04/5/mitting>

Պահանջել ես՝ ազատել տուր

04.04.10

Zhamanak.com

Ելենա Պետրոսյան



Երկու բաց նամակ FIDH-ի նախագահին

Մարտի 1-ի զոհերի եւ քաղբանտարկյալների հարազատները երեկ բաց նամակներ են հղել Մարդու իրավունքների միջազգային Ֆեդերացիայի՝ FIDH-ի նախագահ Սուեր Բելասենին:

Հիշեցնենք, որ ապրիլի 6-ից Հայաստանում կմեկնարկի FIDH-ի համաժողովը, որին, որպես բողոքի նշան, արդեն հրաժարվել են մասնակցել բազմաթիվ իրավապաշտպաններ, քանի որ համարել են, որ նման պայմաններում Հայաստանում համաժողով անցկացնելը ընդամենը լեգիտիմացնում է գործող իշխանություններին: Այդ ճնշումների տակ FIDH-ի ղեկավարությունը ստիպված եղավ որոշ փոփոխություններ մտցնել համաժողովի օրակարգում, իսկ տիկին Բելասենին էլ օրեր առաջ հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ հույս հայտնեց, որ իրենց համաժողովը կկայանա այնպիսի Հայաստանում, որտեղ այլևս չկան քաղբանտարկյալներ, ինչպես նաև ամեն ինչ կարվի, մարտի 1-ի սպանությունների արդար հետաքննություն անցկացնելու համար:

Մենք չենք ուզում ապրել հերթական հիասթափությունը

Մարտի 1-ի զոհերի հարազատները իրենց նամակում հիշեցրել են, որ թեև իրենց հարազատների սպանություններից արդեն ավելի քան երկու տարի է անցել, սակայն դրանցից եւ ոչ մեկը չի բացահայտվել, իսկ հեռանկարում՝ դա չի էլ սպասվում: «Այդ մասին է վկայում առաջին իսկ օրից եւ առ այսօր իշխանության որդեգրած վարքագիծը: Մենք շատ դժվարությամբ, միայն ամիսներ անց, հասարակական ճնշման տակ, կարողացանք հասնել այն բանին, որ ճանաչվենք որպես տուժողի իրավահաջորդներ: ...Միջազգային կառույցներն իրենց փաստաթղթերում մեկ անգամ չէ, որ պահանջել են կատարված սպանությունների փաստերով քրեական գործեր հարուցել եւ բացահայտել դրանք: Առ այսօր այդ ուղղությամբ ոչինչ արված չէ: Միջազգային այդ ճնշումների տակ հաջողվեց միայն 2008-ի աշնանը ստեղծել ընդդիմության եւ իշխանության ներկայացուցիչների հավասար մասնակցությամբ փորձագետների Փաստահավաք խումբ, որի խնդիրն էր առաջին հերթին պարզել կատարված սպանությունների հանգամանքները: Այն բանից հետո, երբ հրապարակվեց Փաստահավաք խմբի առաջին զեկույցը, իշխանությունը լուծարեց այն, քանի որ այս մարմինը սպանությունների հետ կապված շատ կարևոր նյութեր եւ փաստեր էր հավաքել ու հրապարակել: ...Մենք այլևս ոչ մի տարակույս չունենք, որ իշխանությունն ամեն ջանք գործադրել ու շարունակում է գործադրել մեր հարազատների սպանությունները չբացահայտելու համար, ինչը միայն մեկ շարժառիթ կարող է ունենալ, այն է՝ իրենք են դրա մեղավորը, իրենց մեջ, իշխանության ամենաբարձր մակարդակներում են հանցագործները: ...Մեր պատկերացմամբ՝ FIDH-ի համաժողովի

անցկացումը պատիվ է ամեն մի երկրի համար, որը կամ օրինակելի է մարդու իրավունքների պաշտպանության եւ արդարադատության իրականացման արդյունավետության տեսակետից, կամ էական քայլեր է անում այդ ուղղությամբ: Հայաստանն այսօր շատ հեռու է թե՛ մեկից, թե՛ մյուսից: Վերջերս Դուք հայտարարեցիք՝ մինչեւ FIDH-ի ապրիլի 6-ի համաժողովը քաղբանտարկյալներին ազատ արձակելու ու «Մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ արժանահավատ ու արդյունավետ քննության» անհրաժեշտության մասին: ...Մենք չենք ուզում ապրել հերթական հիասթափությունը եւ ցավը: Հավատացեք, դա չափազանց ծանր է որդի, եղբայր, հայր, ամուսին կորցրածներիս համար եւ հերթական անգամ անողոքաբար բորբոքում է մեր վիշտը: Եթե Ձեր դրած պայմաններից առաջինը՝ քաղաքական բանտարկյալների ազատումը կատարվի, մենք հույս կունենանք, որ տեղից կարող է շարժվել նաեւ մեր մերձավորների սպանությունների բացահայտման գործը: Այլապես, FIDH-ի համաժողովի անհետեւանք անցկացումը ռեժիմը կօգտագործի երկրում իր դիրքերն ամրացնելու համար: Դրանով Դուք կբազմապատկեք մեր ցավը, օբյեկտիվորեն կնպաստեք ամեն մի քաղաքացու՝ կյանքի իրավունքը լրացուցիչ վտանգելուն, սպանվելու թիրախ դառնալուն»:

Մենք մեր տարակուսանքը, այժմ նաեւ մեր հիասթափությունն ենք հայտնում

Իրենց նամակում քաղբանտարկյալների հարազատները գրել են, որ չափազանց ուրախացել եւ հավատով են լցվել, երբ տեղեկացել են տիկին Բելասենի կողմից արած վերոհիշյալ հայտնի հայտարարության մասին: «Մենք դա համարեցինք ուղղակի եւ արդարացված նախապայման, որի բացակայությամբ համաժողովի անցկացումը Հայաստանում տեղի չէր կարող ունենալ: Դա ավելի քան բնական կլիներ, քանի որ հակառակ դեպքում մեծապես պիտի վնասվեր միջազգային հեղինակավոր կազմակերպության վարկը. կստացվեր, որ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան իր համաժողովն է անցկացնում մի երկրում, որտեղ ամենակոպիտ ձեռով խախտվում են մարդու իրավունքները, որտեղ դեռեւս առարկայացված են այդ խախտումներն իրենց ամենաձայրահեղ ու խայտառակ տեսքով՝ ի դեմս քաղբանտարկյալների առկայության: ...Այս իրավիճակին իրենց գնահատականներն են տվել ԵՄԽՎ-ն, Freedom House եւ Human Rights Watch միջազգային կազմակերպությունները, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, ԱՄՆ Պետդեպարտամենտը, ԵՄ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն: Այս փաստաթղթերի, մասնավորապես վերջին երեքում ներկայացված փաստերը եւ գնահատականները, որ զարհուրելի իրականության մի մասն են միայն արտահայտում, ավելի քան բավարար են համոզվելու համար, որ մարդկանց ձերբակալությունները եղել են զուտ քաղաքական հիմքի վրա, նրանց ներկայացվել են շինծու մեղադրանքներ, իրականացվել է անարդար ու անհավասար դատաքննություն, իսկ դատարանները, նրանց անհիմն դատապարտելով, կատարել են վարչախմբի քաղաքական պատվերը: Այլ խոսքով՝ կոպտորեն խախտվել են մարդու իրավունքները: ...ՀՀ իշխանությունները ներկայացնող որեւէ ղեկավար կամ պաշտոնյա FIDH-ի հետ որեւէ առնչություն կարող է ունենալ միմիայն պատասխանողի դերում, քանզի մարդու իրավունքների ոտնահարման մրցավազքում նրանք չեն զիջում աշխարհում ամենատխուր հռչակ ունեցող հայտնի բռնատիրական ռեժիմների իրենց գործընկերներին: ...Մենք մեր տարակուսանքը, այժմ նաեւ մեր հիասթափությունն ենք հայտնում, որ FIDH-ի համաժողովը տեղի է ունենում «մի Հայաստանում, որտեղ քաղբանտարկյալներ կան», որտեղ ամենակոպիտ ձեռով շարունակում են խախտվել

մարդու իրավունքները, ժողովրդավարությունը: Եթե FIDH-ը ձեռն չգտնի գեթ մինչև իր համաժողովի ավարտը հասնել քաղբանտարկյալների ազատմանը, կստացվի, որ նա եկավ Հայաստան խրախուսելու ու իշխող բռնապետական վարչախմբին մղելու մարդու իրավունքների նորանոր խախտումների: Կնշանակի, որ FIDH-ը եւս քաղաքական պատվեր կատարեց», - մասնավորապես գրել են քաղբանտարկյալների հարազատները: <http://www.zhamanak.com/article/14559/>

Տիկին Սուեր Բելասսենին. Քաղբանտարկյալներ կան

03.04.10

Հայկական ժամանակ

Երեկ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահ Սուեր Բելասսենին ուղղված հայտարարություն են արել Մարտի 1-ի զոհերի ու քաղբանտարկյալների հարազատները: Զոհերի հարազատների հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. «Հարգաբաժան տիկին Բելասսեն, Մեր մերձավոր հարազատները սպանվել են 2008թ. մարտի 1-ին, Երեւանում՝ խաղաղ ցույցի ժամանակ, երբ իշխանությունն այն ցրելու համար օգտագործեց ոստիկանության եւ բանակի զինված ստորաբաժանումներ: ...Ավելի քան 2 տարի է անցել, սակայն մեր հարազատների սպանություններից ոչ մեկը չի բացահայտվել: ...Վերջերս Դուք հայտարարեցիք՝ մինչև FIDH-ի ապրիլի 6-ի համաժողովը քաղբանտարկյալներին ազատ արձակելու ու «Մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ արժանահավատ ու արդյունավետ քննության» անհրաժեշտության մասին: ...Եթե Ձեր դրած պայմաններից առաջինը՝ քաղաքական բանտարկյալների ազատումը կատարվի, մենք հույս կունենանք, որ տեղից կարող է շարժվել նաեւ մեր մերձավորների սպանությունների բացահայտման գործը: Այլապես, FIDH-ի համաժողովի անհետեւանք անցկացումը ռեժիմը կօգտագործի երկրում իր դիրքերն ամրացնելու համար: Դրանով Դուք կբազմապատկեք մեր ցավը, կնպաստեք ամեն մի քաղաքացու՝ կյանքի իրավունքը լրացուցիչ վտանգելուն»: Իսկ ահա քաղբանտարկյալների հարազատները Բելասսենին գրել են. «Մենք մեր տարակուսանքը, այժմ նաեւ մեր հիասթափությունն ենք հայտնում, որ FIDH-ի համաժողովը տեղի է ունենում «Մի Հայաստանում, որտեղ քաղբանտարկյալներ կան», որտեղ ամենակոպիտ ձեռով շարունակում են խախտվել Մարդու իրավունքները, ժողովրդավարությունը: Եթե FIDH-ը ձեւ չգտնի գեթ մինչև իր համաժողովի ավարտը հասնել քաղբանտարկյալների ազատմանը, կստացվի, որ նա եկավ ՀՀ խրախուսելու ու մղելու իշխող բռնապետական վարչախմբին՝ Մարդու իրավունքների նորանոր խախտումների: Կնշանակի, որ FIDH-ն եւս քաղաքական պատվեր կատարեց»:

<http://www.armtimes.com/5228>

FIDH-ը եւ լեզիտիմությունը

03.04.10

Aravot

Քաղաքականությանը կանայք, ինչպես նաեւ մի շարք հասարակական եւ քաղաքական գործիչներ հինգշաբթի օրը դիմել են Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիային (FIDH)՝ բողոքելով Երեւանում կայանալիք Մարդու իրավունքների համաժողովին Սերժ Սարգսյանի եւ Գեորգ Դանիելյանի մասնակցության դեմ: Շարադրելով 2008 թվականի ընտրություններին հետեւած հայտնի իրադարձությունները եւ տալով դրանց, իմ կարծիքով, միանգամայն ճիշտ գնահատական (ընտրությունները կեղծվել են, դրանց հետեւել են իշխանությունների կողմից խաղաղ ցուցարարների նկատմամբ կազմակերպված բռնությունը, սպանող, ինչպես նաեւ ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ պետական բռնաճնշումները)՝ նամակագիրները հայտնում են հետեւյալ մտահոգությունը. «Հիմա տպավորություն է ստեղծվում, որ FIDH-ի կոնֆերանսը նպատակ է դրել այլ երկրներում մարդու իրավունքների իրավիճակները քննարկելու ֆոնին լեզիտիմացնել Հայաստանի այն ղեկավարներին, որոնք մարդու իրավունքների ոտնահարման մրցավազքում չեն զիջում Բիրմայի, Եմենի, Աֆղանստանի, Ուզբեկստանի, Չինաստանի, Ռուանդայի, Կոլումբիայի, Կամբոջայի, Քենիայի, Չեչնիայի իրենց գործընկերներին»□

Բնական է, որ ընդդիմադիր շրջանակները փորձում են օգտագործել ցանկացած առիթ՝ իրենց արդար պահանջները բարձրաձայնելու համար: Ճիշտ է նաեւ այն արձանագրումը, որ մարդու իրավունքների վիճակը Հայաստանում ողբալի է: Սակայն ինձ թվում է, որ այդ արդար նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է, որ փաստարկները լինեն անխոցելի: Տվյալ դեպքում Ուզբեկստանի կամ Ռուանդայի հետ համեմատությունն այնքան էլ տեղին չէ: Այդ երկրներում, որքան գիտեմ, ընդդիմությունը հանրահավաքներ չի անում, ասուլիսներ չի անցկացնում եւ իր տպագիր լրատվամիջոցները չունի: Դրա պատճառը, բնականաբար, այն չէ, որ Հայաստանի իշխանություններն ավելի ժողովրդավար են, քան, ասենք, Բիրմայինը: Պարզապես թվարկած երկրները ավելի քիչ կախում ունեն միջազգային հանրությունից, եվրոպական կառույցներից, նրանց գնահատականներից եւ զեկույցներից: Հայաստանում այդ զեկույցներն ամբողջությամբ արհամարհել հնարավոր չէ, կարելի է դրանք չկարդալ, ձեռք անել՝ իբր արձագանքում եւ, մշակել ձեռական ժամանակացույցեր, «բարեփոխել օրենսդրությունը» եւ այլն: Բայց հայտարարել, որ այդ կառույցների գնահատականները իրենց բացարձակապես չեն հետաքրքրում, մեր իշխանությունները չեն կարող: Դա է ժողովրդավարության առումով Հայաստանի եւ Ռուանդայի գլխավոր տարբերությունը, որը չնկատել հնարավոր չէ:

Չնայած քաղաքականության մեջ շանտաժը պայքարի ընդունված ձեւ է, անձամբ ինձ այդ գործելաճիւղը բացարձակապես դուր չի գալիս: Հավանաբար, աշխարհի բոլոր կազմակերպությունների կամ անհատների յուրաքանչյուր քայլ կարիք չկա կապել ՀՀ իշխանությունների լեզիտիմության խնդրի հետ: Թե չէ՝ ցանկացած մարդու ամեն մի փոշտոցից հետո անհրաժեշտություն կառաջանա հարցնել՝ «ձեր փոշտոցը լեզիտիմացնո՞ւմ է իշխանությանը, թե՞ հակառակը՝ պայքարում է ռեժիմի դեմ»:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

<http://aravot.am/am/articles/politics/77104/view>

Առարկություն. իրավապաշտպանները զայրացած են, որ նախագահը մասնակցելու է FIDH-ի ֆորումին

02.04.10

ArmeniaNow.com

ՄԻՐԱՆՈՒՅՇ ԳԵԻՈՐԳՅԱՆ, «ԱրմենիաՆաուի» թղթակից

Հայաստանի իրավապաշտպան մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ նամակով դիմել են Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա (International Federation of Human Rights-FIDH), որում իրենց դժգոհությունն են հայտնում կազմակերպության երևանյան կոնֆերանսի բացման պատիվը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին վերապահելու վերաբերյալ:

Նամակի հեղինակները նշում են, որ 2008 թվականի նախագահական ընտրությունների արդյունքը, որը վիճարկվել է բազմահազար մարդկանց խաղաղ հանրահավաքներով, կասեցվել է բիրտ ուժի միջոցով, և ամրապնդել հասարակության մեջ ընտրության օրն առաջացած կասկածը:

«Այս պայմաններում մեզ համար անհասկանալի է, թե ինչպե՞ս և ինչո՞ւ է FIDH-ի կոնֆերանսի բացման պատիվը վերապահվել Սերժ Սարգսյանին, ով կասկածելի լեգիտիմությամբ դեռևս շարունակում է ղեկավարել Հայաստանի Հանրապետությունը», - գրում են բաց նամակի հեղինակները:

«Արդարադատություն-նոր մարտահրավերներ, Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք» ֆորումը կանցկացվի Երևանում 2010 թվականի ապրիլի 6-8-ը, որին կհաջորդի FIDH-ի (www.fidh.org) 37-րդ համագումարը:

FIDH համագումարին կմասնակցեն միայն ֆեդերացիայի անդամ կազմակերպությունների պատվիրակներ 105 երկրներից, իսկ ֆորումը բաց է մասնակցության համար:

Նամակը ստորագրել են Հայաստանի քաղբանտարկյալների կանայք («Շահիաթուն»)՝ ի դեմս Մելիսա Բրաունի, Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը, «Իրավաբաններն ընդդեմ խոշտանգումների» կազմակերպության ներկայացուցիչ Արտակ Չեյնայանը, 2008 թվականի մարտի 1-ի դեպքերն ուսումնասիրող փաստահավաք խմբի անդամ Անդրանիկ Քոչարյանը, «Սոցիոսկոպ» կազմակերպության ներկայացուցիչ Աննա Ժամկոչյանը, իրավաբան Արայիկ Ղազարյանը և գրող, հրապարակախոս Տիգրան Պասկեհյանը:

Նրանք նաև նշում են, որ վերոնշյալ մարդիկ, եթե պետք է ներկա լինեն FIDH-ի նման հեղինակավոր կազմակերպության կոնֆերանսին, ապա միայն պատասխանողի դերում:

«Նրանք պետք է պատասխան տան, թե ինչո՞ւ են կեղծում ընտրությունները, թե ինչո՞ւ են հետապնդում քաղաքական գործիչներին և քաղաքական հայացքներ ունեցող մարդկանց, նրանք պիտի բացատրություն տան, թե ինչո՞ւ տասը զոհի գնով եկան իշխանության», - ասվում է նամակում:

Հայաստանի հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանն «ԱրմենիաՆաուին» ասաց, որ իրենք դեռ պատասխան չեն ստացել FIDH-ից, և դժվարացավ պատասխանել, թե արդյոք ֆեդերացիան հաշվի կառնի՞ իրենց նկատառումները:

http://www.armenianow.com/hy/news/22045/international_human_rights_forum_armenia

Հայկական իրավապաշտպան ՀԿ-ներին - FIDH ֆորում Երևանում

29.03.10

Kornelij Glas

Պետք է որ հետաքրքրի, քանի որ նման մեծության հավաքներ հաճախ չեն լինում, առավելևս Հայաստանում: Գրացնման համար մի քանի օր է մնում

Ապրիլի 6-8-ը Երևանում տեղի կունենա «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ-Նոր մարտահրավերներ, Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք» Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) միջազգային ֆորումը:

Ֆորումը բաց է մասնակցության համար: Մասնակիցների քանակը կարող է սահմանափակվել դահլիճների տեխնիկական հնարավորություններով: Ֆորումին մասնակցելու համար նախապատվությունը կտրվի իրավապաշտպաններին և իրավաբաններին:

Գրանցվելու համար խնդրում ենք լրացնել գրանցման ձևը, որը տեղակայված է www.csi.am կայքում, նշելով այն նիստերը, որոնց ցանկանում եք մասնակցել: Լրացրած ձևը ուղարկեք forum@csi.am հասցեով մինչև ապրիլի 2-ը: Մասնակիցները կստանան հարվիրատոմսեր ԲՀԻ գրասենյակից :

<http://kornelij.livejournal.com/779289.html>

Ձեռագրված չի բավարարում ՀՀ օմբուդսմենին

30.03.10

Ա1+

Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը չի մասնակցի ապրիլի 6-8-ը Երևանում նախատեսված Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) ֆորումին: Նա ներկա կլինի հրավիրյալի կարգավիճակով, բայց ելույթ չի ունենա:

«Արդարադատություն. Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք» թեմայով ֆորումին ելույթ ունենալու համար Արմեն Հարությունյանին առաջարկված ձեռագրված էլ թեման նրան հնարավորություն չեն տա ինչպես հարկն է ներկայացնել Հայաստանում տիրող իրավիճակը:

Պարոն Հարությունյանն այսօր «Ա1+»-ին տեղեկացրեց, որ ֆորումում իր ելույթ ունենալու մասին նա տեղեկացել է միայն էլեկտրոնային հաղորդագրությունից:

«Ես այստեղ հանդիպեցի ֆեդերացիայի նախագահի հետ եւ նրան հայտնեցի, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն այդ միջոցառմանն իր խոսքն այլ կերպ է պատկերացնում եւ ես այս ձեռագրված չեմ մասնակցի», - ասաց նա:

Ֆորումին մասնակցելու դեպքում պարոն Հարությունյանը կանդրադառնար այն փաստին, որ ՀՀ-ում դատարաններում արդյունավետ պաշտպանության իրավունքի մասին խոսելն ավելորդ է. «Դատարաններում չկա մրցակցություն: Դատավորներն ու դատախազներն ըստ էության հավասար կարգավիճակում են: Մեզ համար շատ տարօրինակ է, որ կալանքը շարունակում է մնալ որպես հիմնական խափանման միջոց: Դատական արդարության հետ կապված մենք շատ խնդիրներ ունենք: Ֆորումում ելույթ ունենալու դեպքում, ես դրանց կանդրադառնայի ավելի կոնկրետ»:

«Ես չեմ խուսափում «քաղբանտարկյալ» բառից»

Մարտի 1-ի դեպքերին առիթով բոլոր դատավարություններին հետեւող Մարդու իրավունքների պաշտպանից «Ա1+»-ը փորձեց պարզել, թե ինչու է նա խուսափում «քաղբանտարկյալ» բառի կիրառումից.

«Ես չեմ խուսափում: Ես պարզապես գտնում եմ, որ ճիշտ չէ, որ օմբուդսմենը նման տերմինոլոգիա օգտագործի: Եթե, ես լինեի քաղաքական գործիչ, ապա այլ տերմիններ կօգտագործեի: «Քաղբանտարկյալ» տերմինը իրավաբանական կատեգորիա չէ: Դուք չեք գտնի որեւէ միջազգային կառույց, որն օգտագործի այդ տերմինը», - ասաց նա:

Մարտի 1-ի դեպքերով ընդդիմության ներկայացուցիչները չեն դատապարտվել իրենց քաղաքական հայացքների, քաղաքական գործունեության համար՝ մեր այս հարցին՝ պարոն Հարությունյանը պատասխանեց. «Երբ ուսումնասիրենք գործերը, շատ դեպքերում կարող են հիմնավորումներ բերել իրավաբանական տեսանկյունից: Այդ դեպքում, երբ դու նույնիսկ ներքին համոզմունք ունես, դժվար է միանշանակ ասել, որ դա քաղաքական է: Մենք կարող ենք ասել, որ չենք ընդունում այն գործերը, որտեղ վկանները միայն ոստիկաններ են եւ այլն»:

Արմեն Հարությունյանը գտնում է, որ նա տվել է իր գնահատականները՝ դատավարությունների ընթացքում տեղի ունեցած իրավական խախտումներն արձանագրելով եւ նաեւ կանխատեսելով, թե ինչ է սպասվում այդ վճիռներին Եվրադատարանում:

«Ասե՛ն՝ ՀՀ իշխանությունների հետ չե՞նք խոսում»

ԵՆԽՎ-ում ՀՀ հարցով համազեկուցողները Պրեսկոտի եւ Կոլումբիեի հայտարարությանը անդրադառնալով, որտեղ նրանք ողջունում են ՀՀ

իշխանություններին՝ 2008թ. մարտի 1-ի դեպքերի հետեւանքները վերացնելուն ուղղված ժամանակացույց ներկայացնելու պատրաստակամության համար, Արմեն Հարությունյանն ասաց.

«Նրանք քաղաքական գործիչներ են, իսկ ես չեմ մեկնաբանում քաղաքական գործիչների զեկույցներն ու հայտարարությունները»:

Նա նկատեց, որ այդ հայտարարությունը ՀՀ-ում ընդդիմությունն ու իշխանությունները մեկնաբանում են իրենց տեսանկյունից՝ չանդրադառնալով ամենակարեւոր հատվածին.

«Ըստ էության, շատ հստակ, շատ հավասարակշիռ զեկույց է՝ պահպանելով էթիկայի նորմերը: Նրանք ողջունում են ՀՀ իշխանությունների պատրաստակամությունը, սակայն ամենակարեւորն այն է, որ համազեկուցողները նշում են, որ իրենց համար ավելի կարեւոր է գործը: ՀՀ-ում մարդիկ ցանկանում են, որ Պրեսկոտն ու Կոլումբիեն ԵՄԽՎ-ն թողնեն գան կամ մեր ԱԺ-ի պատգամավոր դառնան կամ Հայ Ազգային Կոնգրեսին անդամակցեն: Ի՞նչ, ասե՛ն ՀՀ իշխանությունների հետ չենք խոսում եւ վերջ»:

Ինչ վերաբերում է ԵՄ-ի Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեի, ինչպես նաեւ ԱՄՆ պետդեպարտամենտի զեկույցներին, ապա պարոն Հարությունյանը գտնում է, որ դրանք հիմնականում ներկայացնում է իրականության եւ շատ հարցերում համընկնում է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի զեկույցին:

Արմեն Հարությունյանը համարում է, որ այսօր ՀՀ-ում առաջնային խնդիր է քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների եւ ազատությունների լիակատար երաշխավորումն ու պաշտպանությունը. «Երկրում առկա սոցիալ տնտեսական, մենաշնորհների հետ կապված բոլոր խնդիրները հետեւանք են այդ իրավունքների ոտնահարման»:

Պարոն Հարությունյանը բոլորին կոչ արեց պայքարել իրենց իրավունքների համար՝ վստահեցնելով, որ ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանությունը պատշաճ մակարդակի վրա դնելը ժամանակի խնդիր է:

<http://www.a1plus.am/am/politics/2010/03/30/ombud>

«Այսօր հայաստանում միահեծան իշխանություն է»

27.03.10

168ժամ

Ասում է ԱԺ Արտաքին հարաբերությունների հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ ՀՅԴ-ական Արմեն Ռուստամյանը

- ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացրած զեկույցի համաձայն՝ 2009թ. այլ երկրներում ապաստան է հայցել 6226 հայաստանցի: 44 երկրներում ապաստան խնդրող հայաստանցիների թիվը 43 տոկոսով աճել է: Ձեր կարծիքով՝ ինչի՞ արդյունք է դա:

- Երկրում առկա սոցիալ-տնտեսական այս ծանր իրավիճակի դրսևորումն է դա: Եվ, բնականաբար, դա ՀՀ կառավարության վարած քաղաքականության արտահայտությունն է: Մարդիկ այստեղ պարզապես չեն կարողանում ոչ աշխատանք գտնել, ոչ սոցիալական խնդիրները հոգալ, ոչ էլ հեռանկար են տեսնում: Եվ այս ամենի գումարային արդյունքը միշտ էլ դրսևորվել է հայկական առանձնահատուկ ձևով՝ դա արտագաղթն է: Թողնում եւ հեռանում են: Ամբողջ աշխարհում ճգնաժամ էր, եւ սկզբում տպավորություն էր ստեղծվել, թե քանի որ մեր հայրենակիցների վիճակը դժվար է դրսում, իսկ այստեղ իբր թե ճգնաժամը քիչ է, նրանք ետ կվերադառնան: Նման ակնկալիքներ էր առաջացնում կառավարությունն իր հայտարարություններով: Բայց այս օրինակն էլ ցույց է տալիս, որ ձախողվել են նույն կառավարության հակաճգնաժամային քայլերը, կառավարությունից սպասումներն ավելի բացասական են դարձել, եւ ժողովուրդը այլ ելք չի տեսնում, քան արտագաղթի ճանապարհը բռնելը: Այո, այս վերջին տարիներին արտագաղթի աճ է արձանագրվել: Դրսում թեեւ ճգնաժամ է, դժվարություններ ունեն նաեւ մեր հայրենակիցները, բայց պարզվում է, որ դրսի դժվարությունները շատ ավելի ընդունելի, տանելի են եւ հեռանկար են խոստանում:

- Միայն սոցիալ-տնտեսական իրավիճակն է պատճառը, որ արտագաղթն անցած տարի ավելացել է: Իսկ մարտի 1-2-ի իրադարձությունները, մարդու իրավունքների ոտնահարման փաստերը պատճառ չեն դարձել, որ ՀՀ քաղաքացիներն այլ երկրներում ապաստան խնդրեն:

- Դրանք իրար հետ են, մարտի 1-ը, սոցիալ-տնտեսական վիճակը: Ընդհանրապես 3 հիմնական՝ ազգային, ժողովրդավարական, սոցիալական խնդիրները փոխկապակցված են: Մեկը մյուսին կարող են օգնել, որպեսզի լուծվեն, կամ հակառակը՝ խնդիրները բազմապատկվեն: Չես կարող սոցիալական խնդիրները լուծել, երբ ժողովրդավարական լուրջ խնդիրներ ունես երկրում: Ի՞նչ իրավական պետության մասին կարող է խոսքը գնալ, երբ ամեն քայլափոխին տեսնում ենք այդ իրավունքների ոտնահարում: Այս բոլոր խնդիրների գումարման արդյունքում արտագաղթ է լինում: Եվ եթե կառավարությունն ուզում է իմանալ, թե ինքը ճիշտ է աշխատում, հասարակությունը դրական սպասելիքներ տեսնում է, պետք է հետեւի արտագաղթի դինամիկային:

- Ինչո՞ւ եք անընդհատ կառավարությանը քննադատում: Միգուցե խնդիրն ավելի՞ վերին օղակներում է: Մեր երկրում կառավարությունն ինքնուրույն կարող է ձեր թվարկած խնդիրները լուծել:

- Երբ ասում եմ՝ կառավարություն, հասկանում եմ ողջ իշխանական բուրգը, որովհետեւ այսօր ՀՀ-ում միահեծան իշխանություն է: Իշխանությունների տարանջատում չկա: Մինչդեռ պետք էր, որ նախագահ-ԱԺ-կառավարություն եռանկյունին իրար նկատմամբ

վերահսկողական գործառնություններ իրականացնել, մեկը մյուսին հակակշռներ եւ զսպել: Մենք ասում էինք, թե տնտեսությունն ու քաղաքականությունն են սերտաճել, բայց հիմա ավելի վատ վիճակի մեջ ենք հայտնվել՝ պետություն-իշխանություն նույնացումից գնում ենք կուսակցության ու պետության նույնացման: Բնական է, որ այս իրավիճակը բացասական հետեւանքներ է ունենալու: Եվ չի զգացվում, որ հնարավոր է լուծել այս խնդիրը:

- Եթե այդքան դժգոհում եք գործող իշխանություններից, այդ դեպքում ի՞նչ ելք եք տեսնում Ձեր բարձրագրած խնդիրների լուծման համար:

- Ելքը շատ հստակ է, պետք է այս քաղաքականությունը կտրուկ փոխել: 2 ճանապարհ կա՝ կամ պիտի այս իշխանություններն արագ հասկանան, որ այս ճանապարհը կործանարար է, եւ հետ կանգնեն, շատ արագ փոխեն իրենց մոտեցումները, կամ, այո, իշխանափոխություն է պետք: Գան ուժեր, որոնք տիրապետում են այս խնդիրներին, ունեն ավելի իրատեսական ծրագրեր, լուծումներ, եւ ժողովուրդն էլ վստահ լինի, որ նորից չեն խաբի իրենց: Որ մի ծրագրով չգնան ընտրությունների, ընտրություններից հետո բոլորովին այլ ծրագիր իրականացնեն: Եվ պատահական չէ, որ մինչեւ իշխանության գալը, ուժը լինի աջ թե՛ ձախ, հիմնականում օգտագործում է սոցիալական խնդիրներն ու լոզունգները: Բայց գալուց հետո չի իրականացնում, հրաժարվում է դրանցից: Սա նշանակում է, իսկապես, լավ աշխատել, նախ՝ անաչառ եւ ճիշտ կադրային քաղաքականություն իրականացնել, եւ ոչ թե իրենց շրջապատել յուրայիններով, որոնք այդ մասնագիտական կարողությունը չունեն: Այսօր տնտեսության հիմնական ախտը մենաշնորհներն են: Մի քանի տասնյակ մարդիկ, նույնիսկ շատ եմ ասում, տնօրինում են տնտեսության շարժը: Իշխանությունն այս իրավիճակը չի կարողանում փոխել: Տնտեսությունը պայմանավորված է նույն մենաշնորհների գոյությամբ: Ազատություն տվեք մրցակցության մեջ:

- Այդ խնդիրը մեր երկրում կա արդեն տարիներ շարունակ, ու նաեւ այն ժամանակ, երբ ՀՅԴ-ն իշխանության մեջ էր, ու ՀՀ նախագահը Ռոբերտ Քոչարյանն էր: Ինչո՞ւ այն ժամանակ իշխանություններին այսքան սուր չէիք քննադատում եւ ազատ մրցակցություն չէիք պահանջում:

- Այո, այն ժամանակ էլ այս բոլոր խնդիրները կային, բայց կար նաեւ այդ խնդիրների լուծման որոշակի տենդենց: Բայց էլի դա մեզ չէր բավարարում, լուծման տեմպերը դանդաղ էին: Հիմա հասկանալի չէ, թե այս իշխանությունն ինչ ուղղություն է վերցրել: Արտաքինը մի կողմ դնեմ, սոցիալ-տնտեսական ի՞նչ ուղղություն է վերցրել: Մի բան հոչակվում է, բայց բոլորովին այլ իրականության հետ գործ ունենք: Եվ ոչ միայն առաջընթաց չկա, այլ եղած ուժն է մսխվում, եւ սա արդեն հետընթացի նշաններ է առաջացրել: Մենք դժգոհություն ունեցել ենք նույն Ռ.Քոչարյանի ժամանակ էլ, երբ կոալիցիայի մեջ էինք: Ասել ենք, որ մեզ կաշկանդող հիմնական հարցը եղել է արտաքին քաղաքական ուղեգիծը: Դրա համար էլ շատ բաներ մեզ զսպել ենք: Հիմա Հայաստանում այնպիսի միահեծան վիճակ է, որ դու կարող ես 13 նախարար էլ ունենալ եւ իշխանություն չլինել:

- Ռ.Քոչարյանի նախագահության տարիներին իշխանությունը Ձեր ասածի նման միահեծան չէ՞ր:

- 2003թ. նույն կոալիցիան, որ մենք կազմեցինք, արդեն ներսում առաջացնում էր լուրջ քննարկումներ, բախումներ էին լինում: Հաճախ դա դուրս էր գալիս, եւ հասարակությունը տեսնում էր: Տարբեր տեսակետներ կային ի վերջո: Ես չգիտեմ՝ հիմա կա՞ն տարբեր տեսակետներ: Չեմ տեսնում:

- Վերջերս հրապարակվեցին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եւ ԵՄ խոշտանգումների կանխարգելման կոմիտեի զեկույցները, որոնք քննադատել էին ՀՀ դատական եւ Ոստիկանության համակարգերը: Կիստ՝ մ եք այս կառույցների մտահոգությունները:

- Համաձայն եմ: Ավելին՝ շատ ավելի վաղուց էր պետք այդ խնդիրներին անդրադառնալ: Այդ զեկույցներում դեռ ամեն ինչ չէ ասված: Այս ոլորտներում կոնկրետ բարեփոխումներ են պետք: Չի կարող իրավական պետություն լինել, եթե դատական համակարգն իրապես անկախ չէ եւ չի կարող լիարժեք արդարադատություն իրականացնել: Վստահություն չկա դատական համակարգի նկատմամբ, մարդիկ ուզում են դատը դուրս տեղափոխել, որ իրենց խնդիրը լուծեն: Միակ ձեռքբերումը որ ունեցել ենք, այն է, որ Եվրոպական դատարան դիմելու հնարավորություն ունեցանք: Այսօր մարդիկ ամեն ինչ անում են, որ ներպետական գործընթացն ավարտեն, գործը հասունացնեն ու տեղափոխեն Եվրոդատարան: Սահմանադրական բարեփոխումներով դա տեղի ունեցավ: Դրա համար եմ ասում, որ այն ժամանակ դրական տենդենց կար:

- Նախորդ իշխանությունների տարիներին «դրական տենդենց տեսնելու» հանգամանքն է, որ ենթադրության տեղիք է տալիս, թե ՀՅԴ-ն ուզում է Ռ.Քոչարյանին իշխանության վերադարձնել:

- Դա տարածել են լրագրողները: ՀՅԴ-ն ինչ ցանկանում է, ինքն է ասում:

- Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենը հանդես է եկել հատուկ ուղերձով, որով ՀՀ իշխանություններին կոչ է անում ազատել քաղբանտարկյալներին, մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ իրականացնել արժանահավատ ու արդյունավետ քննություն: Ուղերձում Բելասենը հույս է հայտնել, որ «ֆորումը կմեկնարկի Հայաստանում, ուր այլևս չկան քաղբանտարկյալներ»: Համաձայն յն եք Ս.Բելասենի հետ:

- Մենք կատարեցինք դժվարին քայլը եւ փոխեցինք Քրեական օրենսգրքում եղած հոդվածները, որոնք քաղաքական բովանդակություն ունեին: Իսկ վերջին՝ քաղաքական քայլը լիարժեք չկատարվեց: Համաներումն անհրաժեշտ էր, եւ եթե դա պայմանավորում էինք մարտի 1-2-ի դեպքերով, իսկ համաներման տեքստում գրված էր, որ դրա հետ է կապվում, ուրեմն պետք էր կապել լիարժեք, առանց որեւէ բացառության: Բոլորը պետք է համաներվեին: Չարվեց դա: Եվ արդյունքում՝ մենք նորից ունենք կիսատ-պռատ կատարված քայլ: Եվ սա է պատճառը, որ հիմա այս իրավիճակը գոյություն ունի: Այդ խնդիրները պետք է քաղաքական լուծում ունենան: Եթե ուզում ենք մարտի 1-2-ի էջը փակել, պետք է կտրուկ քաղաքական միջոցներ անենք: Քանի չենք արել, էջը փակ չէ: Էջը փակ չէ նաեւ այն պատճառով, որ այդ դեպքերի շարժառիթները, հետեւանքներն ամբողջությամբ պարզաբանված չեն, բացահայտված չեն հատկապես 10 զոհերի մահվան հանգամանքները: Սա շատ ծանր բան է, որից պետք է օր առաջ ազատվել: Այդ քաղաքական կամքը չդրսեւորվեց:

<http://www.168.am/am/articles/22193>

ՀԱՄԱԺՈՂՈՎ ԱՌԱՆՑ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ

29.03.10

Lragir.am

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը lragir.am-ին տված հարցազրույցում անդրադարձել է Երեւանում ապրիլին նախատեսված՝ Մարդու իրավունքի միջազգային ֆեդերացիայի համաժողովի շուրջ ստեղծված իրավիճակին

Դուք հրաժարվեցիք Քաղաքացիական հասարակության ինստիտուտի հետ համատեղ հայտարարության տակ ձեր ստորագրությունը դնել, ինչը մամուլում բուռն քննարկումների թեմա դարձավ: Դրան հետևեցին նոր զարգացումներ, ինչը դատելով արձագանքներից բավականին լուրջ բնույթ է ստանում: Արդեն իսկ շատ իրավապաշտպաններ հրաժարվել են մասնակցել համաժողովին: Ինչու այդքան հեշտությամբ հրաժարվեցին մասնակցել մարդու իրավունքներին նվիրված միջազգային մի համաժողովի, որի կարիքն այդքան ուներ Հայաստանը:

Նախ, բացի զուտ հայտարարությունից պետք է հասկանալ, թե որն էր նման զարգացումների բուն պատճառը: Մինչ հայտարարությունն արդեն իսկ տեղի էին ունեցել նախնական զարգացումներ կոնֆերանսի նախապատրաստման և անցկացման հարցի հետ կապված:

Հայաստանում Մարդու իրավունքների միջազգային համաժողովի անցկացման մասին խոսվում էր դեռևս անցած տարի, երբ FIDH-ի(Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա) ներկայացուցիչներն այցելել էին Երևան: Բնականաբար, ենթադրվում էր, որ հայաստանյան իրավապաշտպան կազմակերպությունները պետք է ընդգրկվեին նախապատրաստական աշխատանքներում: Հատկապես որ FIDH-ի գործընկեր Քաղաքացիական հասարակության ինստիտուտն այդ ժամանակ բավականին սերտ համագործակցում էր այդ դաշտում գործող կազմակերպությունների մեծ մասի հետ և կար համագործակցության այնպիսի մի մակարդակ, ինչը թույլ էր տալիս մտածել համաժողովին լիարժեքորեն մասնակցելու մասին:

Սակայն տեղի ունեցավ զարմանալի մի բան: Համաժողովի օրակարգի մասին մենք տեղեկացանք շատ պատահական՝ FIDH-ի կայքէջից: Այն կազմվել էր առանց մեր մասնակցության: Առաջին դժգոհություններն առաջ եկան այն ժամանակ, երբ տեսանք, որ որպես համաժողովի մեկնարկ ներկայացված էր Սերժ Սարգսյանի ողջույնի խոսքը: Նախագահի մասնակցությունը արդար դատաքննություն թեմայով համաժողովին մեզ համար անհասկանալի էր: Օրակարգի մյուս հատվածում՝ պլենար նիստերում նույնպես ընդգրկված էին ելույթներ Հայաստանից, Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դավիթ Ավետիսյանը, Արդարադատության նախարար, նաև օմբուդսմենը: Հրավիրված է նաև գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանը: Պլենար նիստերում հայաստանյան իրավապաշտպան կազմակերպություններից որևէ մեկի զեկույցն ընդգրկված չէր: Մա մեր առաջին անհանգստության և դժգոհության պատճառը դարձավ:

Իսկ ի՞նչ քայլերի դիմեցին հայաստանյան իրավապաշտպանները օրակարգը փոխելու և անհրաժեշտ հարցերն ընդգրկելու ուղղությամբ:

Իրավապաշտպան դաշտում գործող ՀԿ-ների հետ նախաձեռնեցինք մի շարք հանդիպումներ և Քաղաքացիական հասարակության ինստիտուտում և առանձին-առանձին: Նշեմ, որ ի սկզբանե մերծվել և համաժողովին չէր հրավիրվել Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը: Նշեմ նաև, որ վերջինիս հետ կապված

2008-ի հուլիսին տեղի ունեցած միջադեպը (Դանիելյանի նկատմամբ Տիգրան Ուլիխանյանի կողմից գազային ատրճանակի կիրառման փաստը) չէր ընդգրկվել FIDH-ի տարեկան զեկույցում: Սա ի դեպ:

Մեզ համար անընդունելի էր, թե ինչպես կարող է արդար դատաքննությանը նվիրված մարդու իրավունքների միջազգային համաժողովը բացել մի մարդ, ով անմիջականորեն պատասխանատու է Հայաստանում մարդու իրավունքների այսպիսի այլանդակ վիճակի համար: Մարդ, որը 10 քաղաքացիների սպանության գնով, ընտրությունների կեղծման միջոցով եկավ իշխանության: Մարդ, ով անմիջական պատասխանատուն է խայտառակ դատավարությունների, բանտերում գտնվող տասնյակ քաղբանտարկյալների քրեական հետապնդման համար: Մեզ համար նաև մերժելի էր այն, որ սրան զուգահեռ իրավապաշտպան կազմակերպություններին հնարավորություն չէր տրվում պլենար նիստերում հանդես գալ այլընտրանքային զեկույցներով: Բացահայտվեց նաև մեկ այլ բան, երբ քաղբանտարկյալների կանայք առաջարկել են կոնֆերանսի շրջանակներում ցուցադրել Տիգրան Պասկևիչյանի քաղբանտարկյալների մասին նկարահանած լուսանկարները՝ ֆիլմը, այն ևս մերժվել է: Ավելին, մեզ առաջարկվեց առանձին մի տեղում կազմակերպել այդ ֆիլմի ցուցադրությունը և հրավիրել կոնֆերանսի այն մասնակիցներին, ովքեր կցանկանան դիտել ֆիլմը:

Առանձնահատուկ ուզում եմ ընդգծել, որ կոնֆերանսի նախապատրաստումն ու օրակարգի ձևավորումը տեղի է ունեցել այնպիսի գաղտնապահության մթնոլորտում, որտեղ մեր մասնակցությունը զրոյական էր: Չմոռանանք, որ նման համաժողովի անցկացումը նախաձեռնել է միջազգային իրավապաշտպան կազմակերպություն և այն նվիրված է Հայաստանում մարդու իրավունքների վիճակին: Եթե գաղտնապահությամբ էին առաջնորդվում, թող ասեին մեր կոնֆերանսն է՝ մենք այսպես ենք անցկացնում, բայց երբ մենք ընդվզեցինք, նրանք փորձեցին մեզ հետ եզրեր փնտրել, թե ինչպես կարելի է արդյունավետ օգտագործել այս հնարավորությունը, որպեսզի Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ լրջագույն ինֆորմացիան ներկայացնենք: Ավելացնեմ նաև, որ այս փուլում մեզ հստակ ասվեց, որ օրակարգը հնարավոր չէ փոխել, և որ այն Փարիզում է հաստատվել: Նաև այն, որ մասնակցության հնարավորությունը խիստ սահմանափակ է, սակայն, այդուհանդերձ փոփոխություններ եղան օրակարգում:

Բացման խոսքով հանդես եկող Մերժ Սարգսյանին փոխարինեց ՄԴ նախագահ Գազիկ Հարությունյանը, ինչը նույնպես անընդունելի է: Մարդ, ով հայտարարված արտակարգ դրության ժամանակ ընտրակեղծիքների վիճարկման վերաբերյալ որոշում կայացրեց:

Նշված փոփոխությունները տեղի ունեցան շատ կարճ ժամանակահատվածում, մեր դժգոհություններից ու ընդվզումից հետո: Ավելացվեց նաև արդար դատաքննության վերաբերյալ Արման Դանիելյանի զեկույցը, ինչը տրամաբանական կարող էր լինել, եթե նման զեկույցի հնարավորությունը տրվեր մեկ ուրիշ կազմակերպության և ոչ թե նրան, ով կազմակերպում է համաժողովը: Ստացվում է, որ Քաղաքացիական հասարակության ինստիտուտը ինքը ելույթ է ունենում իր կոնֆերանսում:

Սա կամ պետք է գնահատել որպես անվստահություն մյուս իրավապաշտպան կազմակերպությունների նկատմամբ կամ էլ գործում է նույն գաղտնապահության սկզբունքը և համաժողովի կազմակերպման տրամաբանությունը թույլ չի տալիս բազմազանության ապահովումը, ինչն էլ թույլ չի տալիս այլ կազմակերպությունների լիարժեք ներգրավումը այդ ֆորմատում: Սա շատ զարմանալի էր: Նույնքան զարմանալի էր այդ նույն կազմակերպության խորհրդի նախագահ Արտակ Կիրակոսյանի հայտարարությունն այն մասին, որ որևէ փաստաթղթի հրապարակում այլևս չի

նախատեսվում և հանկարծ հայտնվում է արդեն ձեռք հայտնի աղմուկ հանած արդար դատաքննության վերաբերյալ հայտարարությունը, որին ես անմիջապես արձագանքեցի:

Ինձ համար տարօրինակ էր նաև այն, որ նրանց արձագանքը լրատվական միջոցներով իմ հնչեցրած տեսակետին, տարբեր էին: Մեկ ասում են, թե իբր ես ասել եմ, ինչ տեքստ էլ լինի՝ կստորագրեմ, մյուս դեպքում՝ թե Փարիզի հետ է պետք համաձայնեցնել: Մեկնաբանությունների նման հակասությունը ինձ համար խիստ տարօրինակ է: Իմ տեսակետը, ես ասել եմ հստակ և հիմա էլ պնդում եմ, որ դեմ եմ եղել գնահատականին, թե 10 զոհված քաղաքացիներն ու 200 վիրավորները եղել են բախման արդյունքում: Սա իրականությունն է և իմ սկզբունքային մոտեցումը: Տեսակետը, թե նրանք զոհվել են բախումների արդյունքում, առնվազն անբարոյականություն է:

Սակայն հենց այդ հարցի առնչությամբ FIDH-ն իր հայտարարության մեջ անդրադարձ էր կատարել:

Ձևակերպումները փոխվում են, բայց ֆորմատը մնում է նույնը: Պետք է արձանագրել, որ մեր դժգոհությունների արդյունքում համաժողովը կոսմետիկ փոփոխությունների է ենթարկվում, բայց մասնակցության առումով այն փոփոխության չի ենթարկվում, կարծես արգելք կա դրված: Մեր որևէ առաջարկ միևնույնն է չընդգրկվեց օրակարգում: Ցավոք, այնպիսի տպավորություն է, թե պայքարում ես իշխանական մի կառույցի դեմ, որպեսզի փոփոխության հասնես ի նպաստ մարդու իրավունքների:

Ըստ ձեռք, ինչպիսի հանգամանքների դեպքում կարող էին նման ձևով՝ գաղտնապահության սկզբունքով առաջնորդվել: Ինչ հետևության է սա ձեռք բերել:

Հիշենք, որ մեր դժգոհություններից հետո FIDH-ի նախագահը հանդես եկավ նոր հայտարարությամբ, որտեղ ընդգրկվեց քաղաքատարկյալների ու սպանությունների քննության վերաբերյալ խնդիրը: Ստացվում է, որ մենք ստիպում ենք ասել այն, ինչը պետք է ասվեր: Պլենար նիստերում փոփոխությունների անհնարինությունը մի հարց է ձևակերպում. որո՞նք են այն ինստիտուտները, որոնք պատասխանատու են այդ օրակարգի մշակման համար: Եթե դա FIDH-ն է ու Քաղաքացիական հասարակության ինստիտուտը, ապա ինձ համար բացարձակապես անհասկանալի է, թե ինչպես է որ միջազգային իրավապաշտպան ու ոչ կառավարական կազմակերպությունները անընկալունակ են մեր կողմից առաջարկվող փոփոխություններին:

Շատ կարևոր մի բան ևս. բազմիցս ասվում է, որ համաժողովը զուտ հայաստանյան թեմաներով չէ, քանի որ տարբեր երկրներ են ներկայացվելու: Եթե դա այդպես է, ապա Վճռաբեկ դատարանի նախագահը Հայաստանի մասին է խոսելու, թե՞ Կոնգոյի: Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանի մասին է խոսելու, թե՞ Նիկարագուայի: Արդարադատության նախարարը Հայաստանի թեմայով չի՞ խոսելու: Իսկ այս ելույթները հետաքրքիր է մնացած երկրների մասնակիցների համար: Եթե Հայաստանի թեման այստեղ զուտ խորհրդանշական է ներկայացվելու, ապա ի՞նչ տրամաբանությամբ է իշխանության ներկայացուցիչներին այդպիսի մեծ տեղ տրվում:

Սա մարդու իրավունքների կոնֆերանս է, որը փակ է իրավապաշտպանների համար: Եվ սրա համար պատասխանատուն են Քաղաքացիական հասարակության ինստիտուտն ու Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան: Միջազգային այս կազմակերպությունը Հայաստանում իր դեմքը փրկելու հնարավորություն ունի մինչև ապրիլի 6-ը, և ոչ միայն Հայաստանում: Ակնհայտ է, որ FIDH-ի նախագահը հայտնվել է ցայտնոտային իրավիճակում՝ իր կողմից նախապես չճշգրտված քայլեր անելով, ինչպիսին վերջին հայտարարությունն էր:

Ուզում եք ասել, որ Մարդու իրավունքների միջազգային համաժողովը անցկացվելու է իշխանությունների կողմից ձևավորած մթնոլորտում: Այդ դեպքում ում էր պետք նման կոնֆերանսի անցկացումը...

Իշխանություններն ուզում են ցույց տալ, որ իրավիճակը վերահսկելի է և այն կարելի է փոխել կոնկրետ քայլերով ու գործողություններով, ինչը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Այս համաժողովը ձևական, պրոտոկոլային բնույթ է կրելու: Սա իշխանությունների կողմից անցկացվող հերթական մի միջոցառում է լինելու:

Որքան ինձ է հայտնի, այն կազմակերպությունները, որոնք դեռևս հստակ չեն հայտնել իրենց դիրքորոշումը համաժողովին մասնակցելու առումով, դիմել են FIDH-ին՝ օրակարգում փոփոխություններ մտցնելու ակնկալիքով:

Նորից եմ կրկնում, այս կոնֆերանսի հիմքում դրված է գաղտնապահության սկզբունքը: Նրանք լուրջ խնդրի առջև կկանգնեն, եթե պրոցեսի ընթացքում փոխեն այդ գաղտնապահության մոդելի սկզբունքը:

Այնուամենայնիվ, որքանով է հավանական օրակարգի փոփոխությունը, շատ քիչ ժամանակ է մնացել համաժողովի մեկնարկին:

Դա, իհարկե, անհավանական է, որովհետև FIDH-ի նախագահը անցյալ շաբաթ՝ Հայկական ժամանակին՝ տված հայրցազրույցում ասում է, որ իշխանությունները բավականին մեծ մասնակցություն են ունեցել լոգիստիկայի առումով: Ուշադրություն դարձրեք լոգիստիկան՝ նկատի ունի համաժողովի տրամաբանությունը և կազմակերպական այլ հարցերը: Այսինքն իշխանությունն ի սկզբանե այնքան մեծ դեր է ունեցել այս կոնֆերանսի կայացման հարցում, որ միջազգային կազմակերպության նախագահը ուղղակի ամրագրում է, որ այդ լոգիստիկան հնարավոր չէ փոխել: Նշեմ, որ արված կոսմետիկ փոփոխությունները ամեննին բովանդակային նշանակություն չունեն:

Հարցազրույցում FIDH-ի նախագահը բոլոր այդ հարցերին շատ դիվանագիտորեն էր պատասխանել...

Ես օգտագործեցի նրա գործած լոգիստիկա բառը, որպեսզի ցույց տամ, որ իրոք լոգիստիկան չի կարող փոխվել: Տեսեք, թե որքան մեծ է գաղտնապահության սինդրոմը, նույնիսկ այդ կազմակերպության նախագահն իր հարցազրույցում ասում է, որ չգիտի, թե ինչ պատճառով է Սերժ Սարգսյանը հրաժարվել բացման արարողությանը մասնակցելուց: Ինչպես կարող է նման բան լինել: Քո նախաձեռնած կոնֆերանսի օրակարգում կարևոր փոփոխություն է տեղի ունենում և դու չգիտես՝ պատճառը: Եթե հնարավոր էր օրակարգում փոփոխություն անել, այդ դեպքում, ինչո՞ւ չէք ընդունում մեր առաջարկած փոփոխությունը: Ես համոզված եմ, որ մինչև համաժողովի մեկնարկը դեռ շատ բան է բացվելու և նոր զարգացումներ են տեղի ունենալու:

Ի վերջո ովքեր են մասնակցելու կոնֆերանսին, կարծես թե հրաժարվողների թիվը մեծանում է: Մամուլում արդեն եղել են հրապարակումներ այդ մասին:

Ես չգիտեմ: ասում էին, որ շուրջ 40 կազմակերպություններ են մասնակցելու, սակայն հիմա այդ թվի մասին՝ էլ չեն խոսում: Հիմա նշվում է, թե համաժողովը բաց է... արձանագրենք ևս մի փոփոխություն: Անընդհատ նույն միտքն է ինձ տանջում, թե ինչպես կարելի է մարդու իրավունքների կոնֆերանսում ինչ որ բան փոխել պայքարի արդյունքում: Ակամայից զուգահեռներ ես տանում իշխանության և կոնֆերանսի կազմակերպիչների միջև:

Տեսակետներ կան, որ համաժողովի կազմակերպումը աջակցություն է Սերժ Սարգսյանին՝ հայ թուրքական հարաբերությունների համատեքստում, հատկապես, որ կոնֆերանսը հիմնականում նվիրված է լինելու ցեղասպանության հարցին:

Շատ տարօրինակ է, որ ցեղասպանության հարցը դրվում է արդար դատաքննությանը նվիրված կոնֆերանսում: Ցեղասպանության հարցը ավելի շատ քաղաքական նշանակություն ունեցող հարց է և այդ հարցի նախաձեռնողը ֆուտբոլային դիվանագիտության հայր Սերժ Սարգսյանինն է: Այդ հարցի տեղավորումը համաժողովում ուղղակիորեն իրականանում է: Կամ FIDH-ն է գործիք կամ ինքը կամավոր է գնում գործիք դառնալուն այն խնդրի համատեքստում, որն այս պահին Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ է տեղի ունենում: Արդյոք այսօր տեղի չի ունենում մի գործընթաց, ինչը տեղի ունեցավ 2008-ի նախագահական ընտրություններից հետո, երբ քաղաքական կուսակցությունների տեղն ու դերը հանրության համար հստակեցվեց: Կարելի է ասել, որ հիմա նույնը տեղի է ունենում իրավապաշտպան կազմակերպությունների դեպքում:

Ինչպես նշում է միջազգային այդ կազմակերպության նախագահը Հայաստանի տիպի երկրներում նման միջոցառումներ անցկացնելիս անխուսափելի է իշխանությունների դերը: Թե իշխանության որ թևի մասին է խոսքը, դա արդեն պետք է ենթադրել. արտգործնախարարություն, թե՛ նախագահի աշխատակազմ: Եթե քաղաքական պրոցեսների ընթացքում տարանջատում կամ հստակեցում է լինում, դա նշանակում է, որ այն պայմանավորված է իշխանությունների վարքագծով: Տես, անմարդկային և անգրագետ այդ վարքագիծը այնքան պարզունակ է, որ լողալու տեղ չի թողնում:

Ինչո՞ւ այդ երևույթը տեղափոխվեց քաղաքացիական հասարակության դաշտ: Ինչո՞ւ է այդ պրոցեսը այժմ ընթանում այդքան հստակ: Մի կողմից սա բացահայտում է այն, ինչ որ այս կամ այն ձևով շղարշված էր, իսկ մյուս կողմից այդ հստակեցումը շատ կարևոր է մեր հետագայի, մեր գոյության ու զարգացումների տեսանկյունից, որովհետև կան ակնհայտ իշխանական իրավապաշտպան կազմակերպություններ և քաղաքականացված իրավապաշտպան կազմակերպություններ:

Մարտի 1-ից հետո մի խայտառակ բան տեղի ունեցավ: Երբ քաղաքական հետապնդումների արդյունքում առաջացավ մի քաղբանտարկյալների մի ստավար զանգված, մարդու իրավունքներով զբաղվելը կապվեց քաղաքականության հետ: Հարցն այսպես էր դրվում. եթե տվյալ քաղաքական դեմքը ինձ համար ընդունելի մարդ է, ուրեմն ես նրա իրավունքների պաշտպանությամբ կզբաղվեմ, եթե անընդունելի է, ուրեմն ես նրա իրավունքների պաշտպանությամբ չեմ զբաղվի: Այսինքն, մենք ունենք քաղաքականացված իրավապաշտպանություն, որը բացահայտվեց նաև այս համաժողովի շրջանակներում: Իրավապաշտպանությունը իրավունքն չունի քաղաքական նպատակահարմարությունից ելնելով գնահատական տալ:

Այս ընթացքում նաև մամուլը փորձեց հավասարության նշան դնել իրավապաշտպանների միջև՝ թացն ու չորը խառնելով իրար, ինչն իր մեջ, կարծես, իրավապաշտպաններին վարկաբեկելու միտումներ ուներ:

Խնդիրները, որոնք առաջացել են այս համաժողովի հետ կապված, այնքան անակնկալ են շատերի համար և իրենց բովանդակությամբ նոր, որ շատ լրագրողների դեպքում կամ տեղեկատվության պակաս կա կամ պրոֆեսիոնալիզմի խնդիր է: Ի վերջո, դա ինձ չի հետաքրքրում: Դա ավելի շատ խոսում է լրագրողի աշխատանքի բնույթի մասին և լրագրողը չէ, որ պիտի որակի ով է իրավապաշտպան և ով՝ ոչ: Կարևոր հարցն այն է, թե իրականում նրանք տեսնում են ընթացող պրոցեսի առանձնահատկությունները, թե՛ ոչ:

Եթե քաղաքացիական հասարակության ինստիտուտը չի ընկալվում որպես իրավապաշտպան կազմակերպություն, դա չի նշանակում, թե Միքայել Դանիելյանը իրավապաշտպան չէ: Հարցադրումը, թե ով է իրական իրավապաշտպանը, ընդհանրապես վարկաբեկող մոտեցում է: Խնդիրը շատ հստակ է. Հայաստանում

կազմակերպվում է մարդու իրավունքներին նվիրված միջազգային կոնֆերանս, որտեղ իշխանությունները նույն Հայաստանի վիճակը ներկայացնելու համար ունեն մեծ հնարավորություններ, ինչից զրկված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և ՀՀ քաղաքացիներն ընդհանրապես: Կոնֆերանսին նվիրված աշխատանքները տեղի են ունեցել գաղտնիության սկզբունքով և շարունակվում են նույն ոգով:

Սա նշանակում է ապակողմնորոշել, սքողել իրական հանգամանքները: Վտանգավորը ոչ թե սուտն է, այլ կիսատ ճշմարտությունը, երբ ճշմարտությունը ասվում է կեղծիքի հետ զուգահեռ՝ խառնաշփոթ ստեղծելու համար:

Ու՞մ է դա պետք:

Միանշանակ է, որ իշխանություններին և նրանց օգնող, սատարող քաղաքացիական հասարակության կառույցներին: Մարտի 1-ից հետո քաղաքացիական հասարակության ինստիտուտ հասարակական կազմակերպության նկատմամբ անվստահություն կար: Նրանք իրենց գործելակերպով այսօր փարատեցին բոլոր այդ կասկածները և ամրապնդեցին իրենց նկատմամբ անվստահությունը:

Քանի որ մարդու իրավունքներին նվիրված այս համաժողովի անցկացման մասին հայտարարվեց նախորդ հանրահավաքում և լայն զանգվածները տեղյակ են դրա մասին, հնարավոր համարո՞ւմ եք կոնֆերանսի ձախողումը:

Այն, որ բացման արարողությունը սկզբում նախատեսված էր օպերայի և բալետի թատրոնում, իսկ հետագայում, մեր դժգոհությունների արդյունքում փոխվեց, ակնհայտ դարձրեց, որ իշխանությունները խուսափեցին Ազատության հրապարակում ակցիաների հնարավոր վերսկսումից:

<http://ragir.am/armsrc/interview33482.html>

Նամակ FIDH-ի ղեկավարին

28.03.10

Ժամանակ

Մեր տեղեկություններով՝ Հայ Ազգային Կոնգրեսի Կենտրոնական գրասենյակի անունից երեկ պաշտոնապես նամակ է փոխանցվել Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH-ի նախագահ Սուեր Բելասենին: Նամակի բովանդակությունը առայժմ չի հրապարակվում, սակայն, մեր տեղեկություններով, Կոնգրեսի ներկայացուցիչների նամակը հազեցած է եղել բավականին կոշտ գնահատականներով եւ պնդումներով:

<http://www.zhamanak.com/news/10488/>

Մի՛ լեզիտիմացրու ռեժիմը, Սուեր

27.03.2010

Առավոտ

Կոչ են անում հ/կ-ները

Երեկ հայաստանյան մի շարք հ/կ-ներ, այդ թվում՝ «Հայաստանի քաղաքական բանտարկյալների եւ հալածյալների պաշտպանության կոմիտեի», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտեի», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի եւ «Հայաստանի քաղաքական բանտարկյալների կանանց կոմիտեի» ղեկավարները բաց նամակով դիմել են Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենին: Ողջունելով նախօրեին տիկին Բելասենի արած հայտարարությունը, որտեղ ասված էր նաեւ, թե՛ «Մասնավորապես մենք հույս ունենք, որ ֆորումը կմեկնարկի Հայաստանում, ուր այլեւս չկան քաղբանտարկյալներ: Մեծագույն կարեւորություն ունի նաեւ այն, որ իրականացվի 2008թ. մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ արժանահավատ եւ արդյունավետ քննություն:

Քաղբանտարկյալներին ազատ արձակելը եւ նման քննություն անցկացնելը կնշանակեն այն, որ Հայաստանը գնում է դեպի օրենքի գերակայություն», գոհունակություն են հայտնել քաղբանտարկյալների թեման ուշադրության կենտրոնում պահելու համար: «Միաժամանակ ակնկալում ենք, որ եթե մինչեւ ապրիլի 6-ը բոլոր քաղբանտարկյալները ազատ չարձակվեն, ապա ֆեդերացիան կհրաժարվի մի այնպիսի երկրում համաժողով անցկացնելու որոշումից, որի բանտերը լցված են քաղբանտարկյալներով: Հակառակ դեպքում կստացվի, որ FIDH-ն նպաստում է այն ռեժիմի լեզիտիմացմանը, որը քաղբանտարկյալներ պահելով, քաղաքական հալածանքներ իրականացնելով՝ ամենակոպիտ ձեւերով ոտնահարում է մարդու իրավունքները: Դա կհակասի ՄԻՄՖ առաքելությանը: Հուսով ենք, որ Դուք հավատարիմ մնալով իրավապաշտպանի Ձեր կոչմանը՝ կվարվեք Ձեր իսկ արած հայտարարության ոգուն ու տառին համապատասխան եւ հայաստանյան բանտերում քաղբանտարկյալների առկայության պարագայում Երեւանում համաժողով չեք անցկացնի»,- հայտարարել են հ/կ-ների ղեկավարները:

<http://aravot.am/am/articles/politics/76783/view>

Մերժման պատճառները անհայտ են

26.03.10

Հայկական ժամանակ

Ապրիլի 6-8-ը Երևանում կայանալիք Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի 37-րդ համաժողովի շուրջ վերջին օրերին տարբեր գնահատականներ են հնչում: Ստորեւ ներկայացնում ենք ՄԻՄՖ-ի նախագահ Սուեր Բելասսենի հետ մեր հարցազրույցը, որի ընթացքում փորձեցինք ստանալ այս օրերին հնչած գնահատականների եւ կարծիքների վերաբերյալ նրա մեկնաբանությունները եւ պարզաբանումները:

- Տիկին Բելասսեն, ՄԻՄՖ-ի 37-րդ «Արդարադատություն. Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» թեմայով համաժողովը Երևանում անցկացնելու որոշումը, ինչո՞վ է պայմանավորված: Արդյոք այդ որոշման վրա ազդեցություն է ունեցել վերջին երկու տարիներին Հայաստանի դատարաններում ընթացող քաղաքական դատավարությունների փաստը:

- Ֆորումը ընթանալու է ՄԻՄՖ-ի 37-րդ համաժողովի շրջանակներում: Այս կազմակերպությունը ստեղծվել է 1922թ, եւ գումարվող համաժողովները երկար տարիների հաստատված ավանդույթներ ունեցող հիշարժան պահեր են, որոնց ձեւաչափը միշտ մնում է անփոփոխ՝ որ երկրում էլ անցկացվի: Այս անգամ եւս համաժողովի գումարման որոշումը ընդունվել է ՄԻՄՖ-ի միջազգային գրասենյակի կողմից, որի անդամները բոլոր մայրցամաքներից ընտրված ներկայացուցիչներ են: Որոշման չափանիշներից մեկն էլ այն է, որ այս հավաքներն անպայման հերթականությամբ տեղի ունենան աշխարհի տարբեր տարածաշրջաններում: 2009 թվականը Բեռլինի պատի փլուզման քսանամյա հոբելյանի տարին էր: Կարելոր էր, որպեսզի համաժողովը կազմակերպվի նախկին ԽՍՀՄ-ի նորանկախ հանրապետություններից մեկում: Գտնվելով Մարդու իրավունքների պաշտպանության տեսակետից բավական փխրուն եւ սառեցված հակամարտություններ ունեցող տարածաշրջանում՝ Հայաստանը կարող է լինել միաժամանակ հարուստ եւ հետաքրքիր միջավայր՝ Մարդու իրավունքների պաշտպանության համար մտահոգ միջազգային համայնքին հյուրընկալելու համար: Իրոք, մի շարք կարելոր խնդիրներ, ինչպես՝ արդարադատության իրականացումը, Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ փակ սահմանները, հարեւանությունը Իրանի եւ Վրաստանի հետ (որը վերջերս պատերազմի թատերաբեմ էր), Հայաստանը դարձնում են խորհրդանշական վայր՝ միջազգային արդարադատության առաջադրած նոր մարտահրավերների շուրջ բանավեճերի համար: Մենք ողջունում ենք վերը նշված բոլոր պետությունների ներկայացուցիչների մասնակցությունը այս համաժողովին: Այսպիսով, ֆորումի նպատակն է դառնալ լավագույն ռազմավարությունների եւ պրակտիկայի զարգացման համար փոխանակման վայր, որը Մարդու իրավունքների ոտնահարման եւ միջազգային հանցագործությունների զոհերին թույլ կտա գտնել ճշմարտություն, արդարություն եւ հատուցում, ինչպես նաեւ թույլ կտա մշակել այստեսակ հանցագործությունների կանխարգելման ավելի գործունե եւ արդյունավետ եղանակներ: Նաեւ այս առումով մեզ համար կարելոր է թվացել, որպեսզի համաժողովը տեղի ունենա Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցից մի քանի օր առաջ, ինչպեսեւ համընկնի Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ վերաբացված երկխոսության փորձերի հետ: Նախատեսված է

Համաժողովի մասնակիցների այցելությունը Հայոց ցեղասպանության գոհերի հուշարձանին:

- Տիկին Բելասսեն, Հայաստանում կարծիքներ կան, որ ՀՀ իշխանությունների առաջարկով է համաժողովը Երեւանում անցկացվում, ճի՞շտ է դա արդյոք, թե՛ ոչ:

- Ոչ, որոշումը ոչ մի դեպքում չի կայացվել հայկական իշխանությունների առաջարկով, այլ՝ ՄԻՄՖ-ի միջազգային գրասենյակի: Կրկին հիշեցնենք, որ այս համաժողովի նպատակը փորձառությունների փոխանակումն է, համատեղ ռազմավարությունների մշակումը եւ ՄԻՄՖ-ի անդամ-կազմակերպությունների ու գործընկերների միջեւ փոխադարձ համագործակցության ամրապնդումը: Մենք ցանկանում ենք նաեւ նպաստել, որպեսզի քաղաքացիական հասարակությունը եւ քաղաքական գործիչները ճանաչեն եւ յուրացնեն Հայաստանում եւ տարածաշրջանում անպատժելիության դեմ պայքարի հետ կապված իրավիճակը: Հիշեցնենք, որ ՄԻՄՖ-ը Հայաստանում եւ այլուր իր վճիռներն ու որոշումները կայացնում է լիովին ինքնուրույն:

- Հայաստանի իրավապաշտպանների շրջանում դժգոհություն է առաջացրել, որ իրենց, ի տարբերություն ՀՀ պաշտոնյաների, հիմնական ելույթով հանդես գալու հնարավորություն տրված չէ: Հայաստանի իրավապաշտպաններից մի քանիսը արդեն հայտարարել են, որ հենց այս պատճառով իրենք հրաժարվում են համաժողովին մասնակցել: Ինչպե՞ս կմեկնաբանեք սա:

- Մեր ցանկությունն է, որ այս համաժողովը Մարդու իրավունքների ոտնահարման գոհերին պաշտպանելու ամենաարդյունավետ միջոցների շուրջ ազգային եւ տարածաշրջանային մակարդակով բանավեճեր ծավալելու առիթ հանդիսանա: Այս կապակցությամբ, ինչպես սովորություն ունենք, այդպես էլ վարվում ենք բոլոր երկրներում, մենք հրավիրում ենք հարցին առնչվող կառավարական մարմիններին, որպեսզի կարողանանք ստիպել նրանց՝ բավարար ուշադրություն կենտրոնացնել իրավունքների հարգման եւ պաշտպանության անհրաժեշտության վրա: Սակայն մեր հիմնական գործակիցն ու խոսակիցը մնում է քաղաքացիական հասարակությունը, որը լայնորեն հրավիրված է մասնակցելու համաժողովի աշխատանքներին: Ամեն դեպքում, բոլոր մասնակիցների միջեւ փոխանակման տարածքներ նախատեսված են. նրանք կարող են օգտվել արդարադատության բնագավառում միջազգային որակյալ փորձագետների ներկայությունից: Եթե որոշ կազմակերպություններ չեն մասնակցում համաժողովին, ցավում ենք դրա համար, սակայն մեր դրները բաց են, ֆորումը բաց է բոլորի համար:

- Կարելի՞ է տեղեկանալ, թե ինչու է համաժողովի օրակարգից հանվել Սերժ Սարգսյանի բացման խոսքը եւ ինչ հանգամանքներով է այդ փաստը պայմանավորված:

- ՄԻՄՖ-ի ավանդույթի համաձայն, համաժողովների բացման արարողությանը միշտ խոսք է տրվում տվյալ երկրի իշխանություններին, քանի որ մեր նպատակն է Մարդու իրավունքների պաշտպանության գործը առաջ տանել կառուցողական ձևով: ՄԻՄՖ-ը, հետեւելով այս ավանդույթին, հրավիրել էր Սերժ Սարգսյանին: Սկզբում մենք դրական պատասխան ստացանք, սակայն մեզ վերջին օրերին տեղեկացրին, որ նա այլեւս չի ցանկանում մասնակցել: Մերժման պատճառները մեզ չեն հայտնվել:

- Տիկին Բելասսեն, որքա՞ն է կազմելու համաժողովի կազմակերպման ֆինանսավորումը, ի՞նչ աղբյուրների հաշվին, մասնավորապես, դրանում արդյո՞ք մասնաբաժին ունի ՀՀ կառավարությունը: Եթե այո, ապա այն ընդհանուր ֆինանսավորման, որ մասն է կազմում:

- ՏԻԴՀ անդամ-կազմակերպությունների 155 ներկայացուցիչներին, ինչպես նաեւ նրա գործակիցներին (պարտնյորներ) եւ միջազգային փորձագետներին Հայաստան բերելու

համար նախատեսված գումարների ծավալը, իհարկե, նշանակալի է: Ֆինանսավորման մեր աղբյուրները նշված են Ֆորումի ինտերնետային կայքում (www.fidh.org). Վճարողների շարքում ամենակարեւորներն են՝ Ֆրանսախոսության միջազգային կազմակերպությունը, որի նախագահ պրն Աբդու Դիուֆը այս առիթով առաջին անգամ կայցելի Հայաստան, Եվրոպական Միությունը, Ջարգացման միջազգային համագործակցության շվեդական գործակալությունը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը եւ այլք: Հայկական իշխանությունները մեզ ոչ մի ֆինանսական աջակցություն չեն ցույց տվել, բայց ակնհայտ է, որ առանց նրանց համաձայնության եւ լոգիստիկ օգնության, հատկապես՝ վիզաների հարցով (հարյուր տարբեր երկրից մարդկանց տեղափոխության դեպքում սա կարեւոր հանգամանք է), շատ դժվար կլիներ կազմակերպել եւ անցկացնել այս համաժողովը:

<http://www.armtimes.com/4460>

FIDH-Ը ԲՈԼՈՐԻՆ ԻՐԱՐ ԽԱՌՆԵՑ

26.03.10

Առավուտ

Հայրենի իրավապաշտպանները սկսել են վիճարկել, թե իրենցից ով իրավապաշտպան կոչվելու իրավունք ունի

Ապրիլի 6-10-ը Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) եւ այդ կազմակերպությանն անդամակցող հայաստանյան միակ կազմակերպության՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ»-ի նախաձեռնությամբ Երեւանում տեղի է ունենալու FIDH-ի 37-րդ համագումարն ու նաեւ ֆորում: Այդ միջոցառումից օրեր առաջ՝ երեկ, հրապարակվել է FIDH-ի նախագահ Սուեր Բելասենի հայտարարությունը, որում անդրադարձ կա նաեւ այդ կազմակերպության եւ հայաստանյան «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ», «Հայաստանի հելսինկյան կոմիտե», «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» եւ «Ընդդեմ իրավական կամայականության» հ/կ-ների կողմից համատեղ ընդունված եւ ուրբաթ օրը հրապարակված՝ Հայաստանում արդարադատության իրականացմանը նվիրված փաստաթղթին: Հիշեցնենք, որ նաեւ մարտիմեկյան դեպքերին անդրադարձող 11 էջանոց այս փաստաթղթում առկա որոշ ձեւակերպումների շուրջ արդեն մի քանի օր թեւ հեռակա, բայց թեժ բանավեճ է ծավալվել հենց հայաստանցի իրավապաշտպանների միջեւ, որոնք այսօր արդեն հստակորեն բաժանվել են երկու ճամբարի: Խոսքը համատեղ հայտարարությունում եղած՝ «2008թ. մարտին նախագահական ընտրություններին հաջորդող ցույցերի ընթացքում իրավապահների կողմից ուժի չափազանց կիրառման հետեւանքով բախումներ տեղի ունեցան ոստիկանության եւ ընդդիմության միջեւ, որոնք հանգեցրին զանգվածային ձերբակալությունների եւ կալանավորումների: 10 մարդ զոհվեց եւ 200 մարդ տարբեր տեսակի վնասվածքներ ստացավ բախումների արդյունքում» ձեւակերպման մասին է: Հայաստանյան իրավապաշտպան հեղինակավոր մի շարք կազմակերպություններ, ինչպիսիք են Միքայել Դանիելյանի գլխավորած «Հելսինկյան ընկերակցությունը», Արթուր Սաքունցի՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը», Լեւոն Բարսեղյանի՝ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբն ու նաեւ Վարդան Հարությունյանի ղեկավարած «Իրավունքի եւ ազատության» կենտրոնը, համաձայն չեն, որ զոհերը եղել են ընդդիմության եւ ոստիկանության միջեւ «բախումների» արդյունքում: Մասնավորապես Արթուր Սաքունցը, որը հրաժարվել է այդ փաստաթղթի տակ ստորագրելուց, երեկ էլ «Առավուտի» հետ զրույցում պնդեց, որ «Մարտի 1»-ին քաղաքացիները սպանվել են ոչ թե ոստիկանության հետ բախումների, այլ ռեժիմի կողմից զենքի ապօրինի կիրառման արդյունքում, ինչը, նրա գնահատմամբ՝ բովանդակությամբ ու էությամբ տարբեր բաներ են: Իրավապաշտպանի ասելով, մարտիմեկյան դեպքերի զոհերի մեջ կան մարդիկ, ովքեր ոչ թե բախման արդյունքում, այլ թիկունքին արձակած կրակոցով են սպանվել: Ի դեպ, հայաստանյան հիշյալ հ/կ-ների ղեկավարները նաեւ հայտարարել են, թե չեն պատրաստվում մասնակցել FIDH-ի հրավիրած համագումարին, որտեղ ի տարբերություն պետական իշխանության ներկայացուցիչների, իրենց էլույթի իրավունք չի տրվելու:

FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը երեկվա հայտարարության մեջ վիճահարույց այդ փաստաթղթի վերաբերյալ արդարացել է, թե՛ դրա հրապարակմամբ իրենք նպատակ են ունեցել «հրավիրել իշխանությունների ուշադրությունը Հայաստանում մարդու

իրավունքների հետ կապված, ինչպես նաև արդարադատության ոլորտում առկա լուրջ խնդիրներին, որոնք էապես խոչընդոտում են Հայաստանում օրենքի գերակայությանը»: «Մենք հույս ունենք, որ ֆորումը կմեկնարկի Հայաստանում, ուր այլևս չկան քաղաքանտարկյալներ: Մեծագույն կարեւորություն ունի նաև այն, որ իրականացվի 2008 թ. մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ արժանահավատ եւ արդյունավետ քննություն: Քաղաքանտարկյալներին ազատ արձակելը եւ նման քննություն իրականացնելը կնշանավորեն այն, որ Հայաստանը գնում է դեպի օրենքի գերակայություն», - հայտարարել է տիկին Բելասենը:

Երեկ «Առավոտի» հետ զրույցում, անդրադառնալով իրավապաշտպանների միջև ծագած բանավեճին, «Հայաստանի Հելսինկյան կոմիտեի» ղեկավար Ավետիք Իշխանյանը ներկայացրեց միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների եւ ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից հրապարակված, նաև այս տարվա մարտին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի զեկույցները, որտեղ եւս ձեւակերպումները ճիշտ այնպիսին են, ինչպիսին է FIDH-ի հետ իրենց համատեղ հայտարարության մեջ: Այսպես՝ մասնավորապես «Human Rights Watch»-ի կողմից այս տարի հրապարակված «Ժողովրդավարությունը քարքարոտ ճանապարհին» զեկույցի առաջին էջում կարդում ենք՝ «2008 թվականի մարտի 1-ին ոստիկանության եւ ցուցարարների միջև բախումներ տեղի ունեցան՝ ավելի սրելով երկրում փետրվարյան նախագահական ընտրությունների արդյունքների վիճարկումը»: ԱՄՆ պետդեպարտամենտի հրապարակած «Մարդու իրավունքների զեկույց 2009թ.» փաստաթղթում Հայաստանին վերաբերող գլխի երկրորդ էջում գրված է «Տարվա ընթացքում իշխանությունները երկու քրեական գործ են հարուցել ութ ոստիկանների դեմ, ովքեր ենթադրաբար թույլ են տվել քրեորեն հետապնդելի գործողություններ 2008թ. մարտին անվտանգության ուժերի, կողոպտիչների ու 2008թ. փետրվարի նախագահական ընտրությունների արդյունքները վիճարկող ցուցարարների միջև բախումների ժամանակ: Բախումների արդյունքում զոհվել են ութ քաղաքացիական անձ եւ երկու ոստիկան»:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընդամենը վերջերս հրապարակած զեկույցում եւս կա այսպիսի ձեւակերպում՝ «2008թ. մարտի 1-ին եւ 2-ին ոստիկանության եւ ցուցարարների միջև Երեւանում տեղի ունեցած բռնի բախումների արդյունքում, որի հետեւանքով առկա էին զոհեր եւ բազմաթիվ վիրավորներ»:

Ա. Իշխանյանը տարակուսանք հայտնեց, թե ինչո՞ւ իր գործընկեր իրավապաշտպանները ժամանակին այդքան բուռն չեն արձագանքել մատնանշված զեկույցներում եղած եւ իրենց համար վիճահարույց համարվող նույնպիսի ձեւակերպումներին, որքան հիմա՝ իրենց համատեղ հայտարարության առնչությամբ: Ճիշտ նույն հարցով մենք դիմեցինք Ա. Սաքունցին: Վերջինս ի պատասխան նախ՝ ասաց, թե ամեն մարդ իր հեղինակած կամ ստորագրած զեկույցի համար է պատասխանատու, իսկ մեր մատնանշած զեկույցների տակ իր ստորագրությունը դնելու հարց չի առաջացել, որ ինքն էլ համաձայնություն կամ անհամաձայնություն հայտնեք: «Ես անհամաձայնություն եմ հայտնել եւ հրաժարվել եմ ստորագրել մի փաստաթղթի տակ, որտեղ եղած ձեւակերպման հետ սկզբունքորեն համաձայն չեմ: Մյուս կողմից, ես կարող եմ ձեր մատնանշած զեկույցներից ավելի շատ մեջբերումներ անել, որտեղ շատ հստակ մատնանշված է, որ մարտի 1-ին ոստիկաններն անհամաչափ ուժ են կիրառել անգն եւ իրենց վրա չհարձակվող քաղաքացիների նկատմամբ: Նույն ԱՄՆ պետդեպի զեկույցում շեշտված է, որ քաղաքացիների նկատմամբ իրավապահ մարմինների գործողությունները քաղաքի տարբեր հատվածներում եւ տարբեր ժամերին՝ հանգեցրին մահվան դեպքերի եւ վնասվածքների: Եվ ընդհանրապես բարի եղեք՝

հատվածական ու տենդենցիոզ մեջբերումներ չանել, այլ դրանք դիտարկել զեկույցների ընդհանուր տրամաբանության համատեքստում»,- հայտարարեց Ա. Սաքունցը:
<http://www.aravot.am/am/articles/politics/76726/view>

Եթե մինչև ապրիլի 6-ը ազատ չարձակվեն

26.03.10

A1+

Ապրիլի 6-ից Երևանում մեկնարկելու է Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի /FIDH/ «Արդարադատություն. Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» թեմայով 37-րդ միջազգային համաժողովը: Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահին Սուեր Բելասեին հայաստանյան մի շարք ՀԿ ներկայացուցիչներ նամակ են հղել:

«Մենք ուրախությամբ ծանոթացանք համաժողովին ընդառաջ արված Ձեր հայտարարությանը, որտեղ ի թիվս Հայաստանում արդարադատության վիճակին վերաբերող Ձեր մտահոգությունների անդրադարձել էիք նաև քաղաքատարկյալների խնդրին՝ ասելով. «Մասնավորապես մենք հույս ունենք, որ ֆորումը կմեկնարկի Հայաստանում, ուր այլևս չկան քաղաքատարկյալներ: Մեծագույն կարեւորություն ունի նաև այն, որ իրականացվի 2008թ. մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ արժանահավատ եւ արդյունավետ քննություն: Քաղաքատարկյալներին ազատ արձակելը եւ նման քննություն անցկացնելը կնշանակեն այն, որ Հայաստանը գնում է դեպի օրենքի գերակայություն»:

Մենք ողջունում ենք Ձեր այս հայտարարությունը եւ մեր գոհունակությունն ենք հայտնում Ձեզ՝ քաղաքատարկյալների թեման ուշադրության կենտրոնում պահելու համար:

Միաժամանակ ակնկալում ենք, որ եթե մինչև ապրիլի 6-ը բոլոր քաղաքատարկյալները ազատ չարձակվեն, ապա ֆեդերացիան կհրաժարվի մի այնպիսի երկրում համաժողով անցկացնելու որոշումից, որի բանտերը լցված են քաղաքատարկյալներով:

Հակառակ դեպքում կստացվի, որ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան նպաստում է այն ռեժիմի լեգիտիմացմանը, որը քաղաքատարկյալներ պահելով, քաղաքական հալածանքներ իրականացնելով, ամենակոպիտ ձեւերով ոտնահարում է մարդու իրավունքները: Դա կհակասի FIDH առաքելությանը: Հուսով ենք, որ Դուք հավատարիմ մնալով իրավապաշտպանի Ձեր կոչմանը կվարվեք Ձեր իսկ արած հայտարարության ոգուն ու տառին համապատասխան եւ հայաստանյան բանտերում քաղաքատարկյալների առկայության պարագայում Երևանում համաժողով չեք անցկացնի», -ասված է նամակում, որը ստորագրել են՝

Կարապետ Ռուբինյանը(Հայաստանի քաղաքական բանտարկյալների եւ հալածյալների պաշտպանության կոմիտե), Նատալյա Մարտիրոսյանը՝

(Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտե), Արթուր Մաքունցը(Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ),Լեւոն Բարսեղյանը (Ժուռնալիստների «Ասպարեզ»ակումբ), Մարինե Հարությունյանը (Հայաստանի քաղաքական բանտարկյալների կանանց կոմիտե):

<http://www.a1plus.am/am/politics/2010/03/26/fidh>

FIDH-ը Հայաստանի իշխանություններին կոչ է անում ազատել քաղաքատարկյալներին 25.03.10

Ազատություն» ռադիոկայան

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Սուեր Բելասենը հանդես է եկել հատուկ ուղերձով, որով կոչ է անում Հայաստանի իշխանություններին ազատել քաղաքատարկյալներին եւ 2008 թվականի մարտի 1-2-ին տասը քաղաքացիների սպանության առնչությամբ իրականացնել արժանահավատ ու արդյունավետ քննություն, ինչը, «կնշանավորի այն, որ Հայաստանը գնում է դեպի օրենքի գերակայություն»:

Ուղերձում նաեւ արձանագրվում է, որ Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված կան խնդիրներ, իսկ արդարադատության ոլորտում էլ առկա են լուրջ խնդիրներ, որոնք էապես խոչընդոտում են Հայաստանում օրենքի գերակայությանը:

Նշենք, որ Սուեր Բելասենի ուղերձը հրապարակվում է ապրիլի 6-8-ը Երեւանում կայանալիք FIDH-ի 37-րդ կոնգրեսին եւ ֆորումին ընդառաջ: Ուղերձում Բելասենը հույս է հայտնել, որ «ֆորումը կմեկնարկի Հայաստանում, ուր այլեւս չկան քաղաքատարկյալներ»:

Հայաստանյան իրավապաշտպան մի շարք հեղինակավոր կառույցներ չեն մասնակցելու կամ սպառնում են չմասնակցել նշված միջոցառմանը:

«Ես ընդհանրապես հրավեր չեմ ստացել», - «Ազատություն» ռադիոկայանին ասաց Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը: - «Ես համարում եմ, որ կան իրավապաշտպաններ եւ ոչ իրավապաշտպաններ: Այն մարդիկ, որոնք հրավիրում են այդ կոնգրեսը ոչ իրապաշտպան են»:

Հայտարարությամբ է հանդես եկել «Իրավունքի եւ ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Վարդան Հարությունյանը, ում խոսքով՝ ինքը թեեւ հրավեր ստացել է, բայց հրաժարվում է մասնակցել կոնգրեսին, որովհետեւ միջոցառմանը ելույթներով հանդես են գալու «2008-ի մարտյան դեպքերին հաջորդած անօրինական դատավարությունների հեղինակներն ու կատարողները»:

«Իսկ մենք հայտնվելու ենք լոկ լսողի դերում եւ զրկված ենք լինելու պատասխան խոսք ասելու հնարավորությունից», - հավելեց Հարությունյանը:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը նույնպես հրաժարվել է մասնակցությունից, թեեւ հրավեր ստացել է: Նա բերեց նույն փաստարկները՝ հավելելով թե, քանի որ միջոցառմանը իրավապաշտպան կառույցների ներկայացուցիչների ելույթներ նախատեսված չեն, ապա հետագա հնարավոր եզրափակիչ փաստաթղթում հաշվի կառնվեն միայն Հայաստանի պետական մարմինների ներկայացուցիչների տեսակետները: Մասնակցության հրավեր ստացել է նաեւ Հելսինկյան կոմիտեի նախագահ Ավետիք Իշխանյանը, ով «Ազատություն» ռադիոկայանին ասաց, թե կմասնակցի միայն այն դեպքում, եթե ելույթի իրավունք ունենա:

Հայաստանից FIDH-ին անդամակցող միակ կազմակերպության՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ Արման Դանիելյանը «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում պարզաբանելով, թե ինչու հայաստանյան իրավապաշտպան կառույցների ներկայացուցիչներին ելույթի իրավունք չի տրվում՝ ասաց, որ կոնգրեսը նախելառաջ կենտրոնանալու է միջազգային իրավապաշտպան խնդիրների շուրջ, իսկ Հայաստանում մարդու իրավունքների վիճակի

մասին ելույթով հանդես կգա ինքն անձամբ ու կլիտսի նաեւ 2008-ի մարտյան դեպքերի ու
դրանց հաջորդած զարգացումների մասին:

<http://www.armenialiberty.org/content/article/1993652.html>

Ո՞վ է իրավապաշտպանների ձեռքերով իր համար շագանակներ հանում կրակից

25.03.10

Ժամանակ

2010 թվականի մարտի 19-ին, մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա (FIDH) իրավապաշտպան կազմակերպության ինտերնետային կայքում տեղադրվել է հայտարարություն՝ Հայաստանում արդար դատաքննության վերաբերյալ, որը ստորագրել են Քաղաքացիական հասարակության ինստիտուտը, Հայաստանի Հելսինկյան կոմիտեն, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, Համագործակցություն հանուն ժողովրդավարության եւ Ընդդեմ իրավական կամայականության կազմակերպությունները:

Մակայն, երեկ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (ղեկավար Արթուր Սաքունց) հետ է վերցրել իր ստորագրությունը, քանի որ այնտեղ անդրադառնալով 2008թ. մարտի 1-2-ի իրադարձություններին՝ նշվում է, որ տասը մարդ սպանվել է եւ 200 հոգի վնասվածքներ են ստացել «բախումների հետեւանքով», այնինչ ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի՝ քաղաքացիները սպանվել են «ռեժիմի կողմից զենքի ապօրինի կիրառման արդյունքում»: Դրանից մի քանի ժամ անց հայտարարություն է տարածում արդեն Քաղաքացիական հասարակության ինստիտուտի (ՔՀԻ) ղեկավար Արման Դանիելյանը, որտեղ նշում է, որ իրենց կազմակերպությունը մարտի 16-ին դիմել էր մի քանի կազմակերպությունների՝ խնդրելով ցանկության դեպքում միանալ իրենց կողմից կազմված հայտարարությանը: Նշվում է նաեւ, որ հայտարարությունը մշակել են Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) եւ Քաղաքացիական հասարակության ինստիտուտը, որը վերաբերում է Հայաստանում արդարադատության իրականացմանը: Դրանից հետո, ըստ Ա.Դանիելյանի, մարտի 19-ին Արթուր Սաքունցը զանգահարել է իրեն, ներկայացրել մի քանի առաջարկ եւ նշել, որ իր կազմակերպությունը միանշանակ միանում է փաստաթղթին՝ անկախ նրանից, թե «իր առաջարկները կընդունվեն, թե ոչ»:

Մեզ այս պատմության մեջ հետաքրքրում էր ոչ այնքան այն, թե արդյո՞ք Ա.Սաքունցը սկզբնական համաձայնություն տվել է այդ հայտարարության տակ ստորագրելու համար եւ հետո հետ վերցրել իր ստորագրությունը, որքան այն, թե ինչո՞ւ է ծնվել նման հայտարարություն, որտեղ մարտի 1-ի դեպքերը ներկայացվել են որպես ոստիկանների հետ բախում եւ վերջապես, ինչո՞ւ Սաքունցի առաջարկները հաշվի չեն առնվել: Այս հարցերի շուրջ մենք խոսեցինք հենց իր՝ Ա.Սաքունցի հետ, ով նշեց. «Ինձ համար շատ էական նշանակություն ունի, որ սպանությունները չորակվեն որպես բախման արդյունք, որը նախ հակասում է իրականությանը, երկրորդ՝ դա հանգամանքները խեղաթյուրելու միտում ունի եւ լիովին տեղավորվում է այն հայտարարությունների տրամաբանության մեջ, թե եկեք փակենք մարտի 1-ի էջը: Ես հեռախոսային խոսակցության ժամանակ այս ամենի մասին նրանց ասել եմ, բայց նրանք առանց հայտարարության վերջնական տեքստը մեզ տրամադրելու եւ համաձայնեցնելու, միանգամից հրապարակել են, որտեղ մեր առաջարկությունը հաշվի չի առնվել: Այնինչ մենք ասել ենք, որ եթե այդ փոփոխությունը չկատարվի, մենք չենք միանա այդ հայտարարությանը»: Նա նշեց նաեւ, որ իրականությանը չի համապատասխանում այն հայտարարությունը, թե իրենք անկախ ամեն ինչից միանում են այդ հայտարարությանը: Հարցին, թե ինչպե՞ս էք բացատրում, որ իշխանությունների կողմից ապօրինի զենքի կիրառման փոխարեն, հայտարարության մեջ տեղ է գտել «ոստիկանների հետ բախումներ» եզրը, եւ արդյո՞ք

ինքն այդտեղ միտում կամ ուղղորդում է տեսնում, իրավապաշտպանը պատասխանեց, որ այս ամենը կապված է առաջիկայում Հայաստանում անցկացվելիք Արդար դատաքննության իրավունքին եւ մարդու իրավունքների վերաբերող կոնֆերանսի հետ, որի կազմակերպիչը նույն մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) է եւ Քաղաքացիական հասարակություն ինստիտուտը: Բանն այն է, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը այդ կոնֆերանսի հետ կապված ունի որոշակի վերապահումներ, քանի որ այդ կոնֆերանսում ելույթ են ունենալու իշխանությունը ներկայացնող անձինք, սակայն օրակարգով չի ապահովվելու հասարակական կազմակերպությունների կողմից ելույթներ, որպեսզի իրավիճակն այլընտրանքային ձևով ներկայացվի: Ըստ Սաքունցի՝ այդ կոնֆերանսի բացման արարողությունը, ըստ օրակարգի, պետք է ողջուներ Սերժ Սարգսյանը, որը խիստ կերպով քննադատության է արժանացել իրենց կողմից, որից հետո որոշվել է, որ Սերժ Սարգսյանի փոխարեն այդ ողջույնի խոսքը պետք է ասի ՄԴ նախագահ Գագիկ Հարությունյանը: «Այսինքն՝ իրենք կարող են օրակարգում փոփոխություններ անել, բայց մեզ խոսքի իրավունք չեն ուզում տալ: Հիմա այդտեղ ես միտում տեսնե՞մ, թե՞ չտեսնեմ», - ասաց նա ու հավելեց. «Ո՞վ կարող է որոշել, թե ով ողջույնի խոսքով հանդես գա: Ի՞նչ մակարդակով է դա որոշվում: Հ/կ-ն կարո՞ղ է նման որոշում կայացնել: Որ ատյանում որ որոշվում է, որ Սերժ Սարգսյանի փոխարեն կարող է Գագիկ Հարությունյանը ելույթ ունենա, հենց այդ ատյանն էլ որոշում է տվյալ հայտարարության տեքստը»:

Ավելին՝ իրավապաշտպանը նկատեց, որ ի սկզբանե, հայտարարություն նախատեսված չի եղել, իսկ այս հայտարարությունը, թերեւս, առկա դժգոհությունները մեղմելու համար է արվել, բայց այնպես, որ ոչ ոքի չբարկացնեն: Այսինքն՝ ստացվում է, որ այդ կոնֆերանսի կազմակերպիչները որոշել են միանգամից 2 նապաստակ խփել. Մի կողմից՝ մեղմել հասարակական կազմակերպությունների զայրույթը, որոնք, բնականաբար դժգոհում են, որ արդար դատաքննությանը վերաբերող միջոցառմանը կարող են ելույթներ ունենալ իշխանության ներկայացուցիչները, իսկ իրենց ձայն չի տրվելու, երկրորդ՝ ամբողջ աշխարհին ցույց տալ, որ տեսեք, անգամ մեր իրավապաշտպաններն են համարում, որ մարտի 1-ին ուղղակի բախում է եղել ցուցարարների ու ոստիկանների միջեւ, ոչ թե բանակը հանվել է անզեն մարդկանց դեմ, իշխանությունն ապօրինի զենք է կիրառել, որի գինը 10 զոհերն են եղել:

<http://www.zhamanak.com/article/14432/>

**Երևան կժամանի Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախագահը
25.03.10
Aysor.am**

Ապրիլի 6-10 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) և իր Երևանյան գործընկեր Քաղաքացիական հասարակության ինստիտուտ կազմակերպության կողմից կազմակերպվելու է FIDH-ի 37-րդ համագումարը:

Դրա նախապատրաստական աշխատանքները շարունակվում են: Ավելի քան 250 մասնակիցներ հաստատել են իրենց ներկայությունը և ակնկալվում են այլ մասնակցության հաստատումներ: FIDH-ը՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Հայաստանի հելսինկյան կոմիտե, Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի և Ընդդեմ իրավական կամայականության կազմակերպությունների հետ համատեղ ուրբաթ օրը հրապարակել է Հայաստանում արդարադատության իրականացմանը նվիրված փաստաթուղթը: Այս մասին հայտնեցին Քաղաքացիական հասարակակն ինստիտուտի մամուլի ծառայությունից:

FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը խոսելով փաստաթղթի մասին, նշել է. «Մեր նպատակն է հրավիրել իշխանությունների ուշադրությունը Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված խնդիրներին, ինչպես նաև արդարադատության ոլորտում առկա լուրջ խնդիրներին, որոնք էապես խոչընդոտում են Հայաստանում օրենքի գերակայությանը: Այս փաստաթղթում մենք հրապարակել ենք կարևոր առաջարկներ և հուսով ենք, որ ֆորումը ազդակ կհանդիսանա առաջնթացի և այդ առաջարկների իրականացման համար: Այսպիսով, մենք վերահաստատում ենք մեր առաջարկները, որոնք ներկայացրել ենք այս և վերջին տարիներին հրապարակված մի շարք փաստաթղթերում: Մասնավորապես, մենք հույս ունենք, որ ֆորումը կմեկնարկի Հայաստանում, ուր այլևս չկան քաղբանտարկյալներ: Մեծագույն կարևորություն ունի նաև այն, որ իրականացվի 2008 թ մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ արժանահավատ և արդյունավետ քննություն: Քաղբանտարկյալներին ազատ արձակելը և նման քննություն իրականացնելը կնշանավորեն այն, որ Հայաստանը գնում է դեպի օրենքի գերակայություն»:

<http://www.aysor.am/am/news/2010/03/25/fidh/>

**FIDH նախագահ. Քաղբանտարկյալներին ազատ արձակելը կնշանավորի այն, որ
Հայաստանը գնում է դեպի օրենքի գերակայություն
25.03.10**

Panorama.am

Ապրիլի 6-10 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) և իր Երևանյան գործընկեր Քաղաքացիական հասարակության ինստիտուտ կազմակերպության կողմից կազմակերպվելու է FIDH-ի 37-րդ համագումարը:

Դրա նախապատրաստական աշխատանքները շարունակվում են: Ավելի քան 250 մասնակիցներ հաստատել են իրենց ներկայությունը և ակնկալվում են այլ մասնակցության հաստատումներ: FIDH-ը՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Հայաստանի հելսինկյան կոմիտե, Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի և Ընդդեմ իրավական կամայականության կազմակերպությունների հետ համատեղ ուրբաթ օրը հրապարակել է Հայաստանում արդարադատության իրականացմանը նվիրված փաստաթուղթը: Այս մասին հայտնեցին Քաղաքացիական հասարակակն ինստիտուտի մամուլի ծառայությունից:

FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը խոսելով փաստաթղթի մասին, նշել է. «Մեր նպատակն է հրավիրել իշխանությունների ուշադրությունը Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված խնդիրներին, ինչպես նաև արդարադատության ոլորտում առկա լուրջ խնդիրներին, որոնք էապես խոչընդոտում են Հայաստանում օրենքի գերակայությանը: Այս փաստաթղթում մենք հրապարակել ենք կարևոր առաջարկներ և հուսով ենք, որ ֆորումը ազդակ կհանդիսանա առաջնթացի և այդ առաջարկների իրականացման համար: Այսպիսով, մենք վերահաստատում ենք մեր առաջարկները, որոնք ներկայացրել ենք այս և վերջին տարիներին հրապարակված մի շարք փաստաթղթերում: Մասնավորապես, մենք հույս ունենք, որ ֆորումը կմեկնարկի Հայաստանում, ուր այլևս չկան քաղբանտարկյալներ: Մեծագույն կարևորություն ունի նաև այն, որ իրականացվի 2008 թ մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ արժանահավատ և արդյունավետ քննություն: Քաղբանտարկյալներին ազատ արձակելը և նման քննություն իրականացնելը կնշանավորեն այն, որ Հայաստանը գնում է դեպի օրենքի գերակայություն»:

<http://panorama.am/am/law/2010/03/25/fidh/>

FIDH-Ի ՆԱԽԱԳԱՀ ՍՈՒԵՐ ԲԵԼԱՍԵՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ FIDH-Ի 37-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՕՐԵԻՆ

25.03.10

Lragir.am

Փարիզ. 2010 թ. ապրիլի 6-10 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) և իր Երևանյան գործընկեր Քաղաքացիական հասարակության ինստիտուտ կազմակերպության կողմից կազմակերպվող FIDH-ի 37-րդ համագումարի և ֆորումի նախապատրաստական աշխատանքները շարունակվում են: Ավելի քան 250 մասնակիցներ հաստատել են իրենց ներկայությունը և ակնկալվում են այլ մասնակցության հաստատումներ: FIDH-ը՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Հայաստանի հելսինկյան կոմիտե, Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի և Ընդդեմ իրավական կամայականության կազմակերպությունների հետ համատեղ ուրբաթ օրը հրապարակել է Հայաստանում արդարադատության իրականացմանը նվիրված փաստաթուղթը:

«Ես շատ ուրախ եմ, որ մենք հրապարակել ենք «Արդարադատության իրականացումը Հայաստանում» փաստաթուղթը հայտանյալ մեր գործընկերների կազմակերպությունների հետ», այսօր հայտարարել է FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը: «Այս փաստաթուղթը հստակորեն արտացոլում է մեր աշխատանքի ոգին: Մեր նպատակն է հրավիրել իշխանությունների ուշադրությունը Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված խնդիրներին, ինչպես նաև արդարադատության ոլորտում առկա լուրջ խնդիրներին, որոնք էապես խոչընդոտում են Հայաստանում օրենքի գերակայությանը: Այս փաստաթղթում մենք հրապարակել ենք կարևոր առաջարկներ և հուսով ենք, որ ֆորումը ազդակ կհանդիսանա առաջնության և այդ առաջարկների իրականացման համար: Այսպիսով, մենք վերահաստատում ենք մեր առաջարկները, որոնք ներկայացրել ենք այս և վերջին տարիներին հրապարակված մի շարք փաստաթղթերում: Մասնավորապես, մենք հույս ունենք, որ ֆորումը կմեկնարկի Հայաստանում, ուր այլևս չկան քաղաքանտարկյալներ: Մեծագույն կարևորություն ունի նաև այն, որ իրականացվի 2008 թ մարտի 1-2-ին 10 քաղաքացիների սպանության առնչությամբ արժանահավատ և արդյունավետ քննություն»:

«Քաղբանտարկյալներին ազատ արձակելը և նման քննություն իրականացնելը կնշանավորեն այն, որ Հայաստանը գնում է դեպի օրենքի գերակայություն», ասել է Սուեր Բելասենը:

<http://www.lragir.am/armsrc/society33400.html>

Հրաժարվել են մասնակցել

24.03.10

A1+

2010թ. ապրիլի 6-8-ը Երեւանում տեղի է ունենալու Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի՝ FIDH «Արդարադատություն. Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» թեմայով 37-րդ միջազգային ֆորումը: Դրան հրավիրված են նաև հայաստանյան իրավապաշտպան կազմակերպությունները:

Հրավիրյալների թվում է «Իրավունքի եւ ազատության կենտրոն» հ/կ նախագահ Վարդան Հարությունյանը, ով նամակ է հղել ֆորումի կազմակերպչին եւ շնորհակալություն հայտնելով հրավերի համար՝ մերժել այն:

«Անկախ ցանկացած միջազգային կառույցի ծրագրից, հայաստանյան իշխանությունները փորձելու են այդ կարգի գործընթացներն օգտագործել իրենց լեգիտիմացման համար, իհարկե անհաջող փորձ է լինելու, բայց լինելու է, եւ ես չեմ ցանկանում այս իշխանությունների հետ մասնակից լինել որեւէ գործի, այդ թվում նաև համատեղ ֆորումի», - «Ա1+»-ի հետ զրույցում ասաց Վարդան Հարությունյանը:

Իսկ արդյոք դա ավելի չի նպաստի ճշմարտությունը թաքցնելուն. «Միեւնույնն է, հրավիրվածները խոսքի իրավունք չունեն. ըստ էության ես, կամ հայաստանյան իրավապաշտպանները պետք է գնան եւ լսեն ՀՀ արդարադատության նախարարի զեկույցը անկախ դատարանների մասին եւ չկարողանան նրան հակադարձել», - ասաց Վարդան Հարությունյանը:

Փոխարենը ՀՀ իրական վիճակը նա նկարագրել է նամակում, որ ուղարկել է միջազգային ֆորումի կազմակերպիչներին.

«Այսօր Հայաստանում այլ իրավիճակ է: 2008թ. նախագահական ընտրությունները անցան ճշացող ընտրախախտումներով: Հազարավոր ՀՀ քաղաքացիներ դուրս եկան հրապարակ բողոքելու այդ խախտումների եւ ընտրակեղծիքներով իշխանությունը զավթած իշխանությունների դեմ:

Իշխանությունները վճռեցին տասն օր անընդմեջ ընթացող խաղաղ հանրահավաքները դադարեցնել բիրտ ուժի գործադրմամբ: 2008թ. մարտի մեկին խաղաղ ցուցարարների դեմ հանվեցին ոչ միայն զինված ոստիկանական ուժեր, այլև՝ բանակը: Տեղի ունեցավ ցուցարարների ուղղակի գնդակահարում, ինչի արդյունքում տաս մարդ զոհվեց, իսկ 200-ից ավելին՝ վիրավորվեցին: Որեւէ մեկն այս ամենի համար դեռ պատասխան չի տվել:

Դեռ բացահայտված էլ չեն մեղավորներն ու մարդասպանները: Չբավարարվելով խաղաղ ցուցարարների գնդակահարությամբ՝ իշխանությունները նախընտրական եւ ընտրական գործընթացները պաշտոնապես հայտարարելով իշխանության զավթման փորձ՝ սկսեցին նախագահական ընտրությունների ժամանակ ընդդիմադիր թեկնածուի թիմակիցների եւ կողմնակիցների հալածանքները եւ ձերբակալությունները: Հարյուրավոր մարդիկ ձերբակալվեցին, բազմաթիվ գործարարներ միայն իրենց քաղաքական կողմնորոշման համար զրկվեցին իրենց բիզնեսից: Հայաստանյան բանտերը լցվեցին քաղբանտարկյալներով: Դեպքերից երկու տարի է անցել, բայց շատերը դեռ շարունակում են բանտերում մնալ: Արդարադատության հետ ոչ մի կապ չունեցող հայաստանյան դատարանները իշխանության պատվերով, ակնհայտ կեղծ

ցուցմունքներով, շատ դեպքերում միմիայն ոստիկանական ցուցմունքները հիմք ընդունելով՝ արձակում էին իրար կրկնող դատավճիռներ:

Այս երկու տարվա ընթացքում ոչինչ չի փոխվել: Ընդհակառակը՝ վիճակն էլ ավելի է բարդացել: Շարունակվում են քաղաքական հետապնդումները, դատարանները բացահայտ կերպով ծառայում են գործող իշխանություններին, ընդդիմադիր հայացքներ ունեցող գործարարները զրկվում են բիզնեսից, խոչընդոտվում է ազատ երթեր եւ ցույցեր իրականացնելու իրավունքը: Իրավիճակին իրենց գնահատականն են տվել ԵԽԽԿ-ն իր 1609,1620,1643 1677 բանաձեւերով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը. ԱՄՆ պետդեպարտամենտը, Freedom House եւ Human Rights Watch միջազգային կազմակերպությունները», -ասված է նամակում:

<http://www.a1plus.am/am/politics/2010/03/24/vardan-harutyunyan>

Սկանդալ համագումարի նախօրեին

24.03.2010

Հրապարակ

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան որոշել է իր 37-րդ համագումարն անցկացնել Երեւանում: Այն կոչվում է "Արդարադատություն. անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք": Ապրիլի 6-8-ը "Արամ Խաչատրյան" համերգասրահում իրավաբանների, իրավապաշտպանների, ազգային փորձագետների աննախադեպ կազմ է հավաքվելու՝ Միջազգային քրեական դատարանի դատախազ Լուիս Մորենո-Օկամպո, ֆրանկոֆոնիայի հարցերով միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Աբդու Դիուֆ, Եւրադատարանի դատավոր Ֆրանսուազա Տուլկենս, Նոբելյան մրցանակի դափնեկիր, հայտնի իրանցի իրավապաշտպան Շիրին Էբադի, այլ անուններ 100-ից ավելի երկրներից, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող 155 կազմակերպություններից: Ընդդեմ բռնությունների եւ անարդարության համագումարը Հայաստանում անցկացնելու նրանց որոշումը պատահական չէ: "Նման հավաքի անցկացումը 20-րդ դարի առաջին ցեղասպանության տարելիցից քիչ առաջ խորհրդանշական է հատկապես Հայաստանի եւ Թուրքիայի միջև երկխոսության ենթատեքստում", - պարզաբանել է Մարդու իրավունքների ֆեդերացիայի նախագահ Սուլիահեր Բելիասենը: Սակայն Մեծ եղեռնից ավելի արդիական գուգահեռ է նշմարվում համաժողովի թեմաների եւ հայաստանյան իրականության միջև: Այն է՝ մարտի մեկի թարմ հետքը, որին զեկուցողներն անխուսափելիորեն անդրադառնալու են: Բացի այդ, արդար դատաքննության իրավունքը մեր ամենացավոտ հարցերից է: Բացառված չէ, որ սպասվող անցանկալի քննարկումն է պատճառը, որ Սերժ Սարգսյանը հրաժարվել է նախապես հայտարարված ելույթից, բացման խոսքի իրավունքը զիջելով ՄԴ նախագահին: Հակառակ դեպքում առաջին դեմքն ավտոմատ ձեռով պատասխանատու է դառնում այն փաստաթղթի համար, որը հնարավոր է ընդունվի: Դրա բովանդակությունը հաստատ հակասելու է մարտի մեկի պաշտոնական գնահատականին: Անգամ եթե նման փաստաթուղթ չընդունվի, ապա ֆորումի ռեզոնանսը մեծ ռիսկեր է պարունակում Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության համար: ՄԴ նախագահ Գազիկ Հարությունյանի, ՀՀ արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանի, վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դավիթ Ավետիսյանի, մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի զեկույցները համագումարի ամբիոնից հազիվ թե փրկեն իրավիճակը: ՀԿ-ների կողմից ընդամենը մեկ ելույթ է սպասվում՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի ղեկավար Արման Դանիելյանինը: Այն մի քանի այլ ՀԿ-ների անունից օրերս հայտարարություն էր տարածել, որում մտահոգություն էր հայտնում արդար դատաքննության իրավունքի վերջին տարիներին արձանագրված տարբեր ոտնահարումների կապակցությամբ, այդ թվում՝ նախնական կալանքի լայն կիրառման, անմեղության կանխավարկածի ոտնահարման, պաշտպանության իրավունքի: "Արձանագրվել են դատավորների կողմնակալության մի շարք դեպքեր, մասնավորապես 2008-ի մարտի դեպքերից հետո կալանավորված ընդդիմության առաջնորդների դատավարությունների ընթացքում: Ավելին, արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ որպես մեղադրանքի հիմք օգտագործվել են անօրինական ճանապարհով խոշտանգումների միջոցով ձեռք բերված ապացույցներ: Մեր կազմակերպությունները նշում են, որ խոշտանգումները եւ դաժան

վերաբերմունքը դեռևս կիրառվում են ոստիկանության կողմից, եւ հաճախ ազատագրկման պայմանները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին եւ ազգային օրենսդրությանը",- գրված է ՀԿ-ների հայտարարության մեջ: Իսկ Մարդու իրավունքների ֆեդերացիան իր հայտարարությունը տարածեց, որում մարտի մեկի իրադարձությունները՝ տասը զոհերի մահն ու մոտ 200 մարդու վնասվածքները, գնահատեց որպէս "ուժի չափազանցված կիրառման արդյունքում տեղի ունեցած բախումների հետեւանք": Հավանաբար հենց այս գնահատականից հետո է, որ օրակարգում փոխվել է բացման խոսք ասողի անուն-ազգանունը: Բայց ֆեդերացիայի հայտարարությունը կովախնձոր է դարձել իրավապաշտպաններ Արման Դանիելյանի եւ Հելսինկյան քաղաքացիական ասոցիացիայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի միջեւ, որոնք լավ ընկերներ են: Արթուր Սաքունցը հայտարարեց, որ ֆեդերացիայի հայտարարությունն իր հետ համաձայնեցված չէր, եւ որ ինքը հետ է վերցնում իր ստորագրությունը, քանի որ չի ուզում այլեւս գործ ունենալ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի հետ: "Դուք այնքան եք կախված եւ կապված, որ չեք կարողանում չհամաձայնվել Գազիկ Հարությունյանին ողջույնի խոսք տալուն, որն արտակարգ իրավիճակի պայմաններում Սահմանադրական դատարանի նիստ է անցկացնում: Ամոթ է, էլի: Անմեղսունակ պետք է լինեմ երբեւէ համաձայնվելու համար, թե տասը քաղաքացիները բախման հետեւանքով են սպանվել",- գրում է Սաքունցը լատիներեն իր նախկին ընկերոջ կայք-էջում: Նա պնդում է իր ձեւակերպումը՝ "քաղաքացիները սպանվել են ռեժիմի կողմից գենքի ապօրինի կիրառման արդյունքում": "Էդ կոնֆերանսը կարող էր երկու արդյունք ունենալ: Մեկը՝ որ իրապէս ցույց տրվեր ՀՀ արդար դատաքննության իրավունքի վիճակը: Մյուսը՝ որպէսզի ասվի. այո, կան որոշակի խնդիրներ, բայց նաեւ կամք կա, եւ հիմա իշխանությունը դրան գնալով ուզում է հաղթահարել",- մեկնաբանում է Սաքունցը: "Ի՞նչ է կպել այդ "բախում" բառին,- հակադարձում է Արման Դանիելյանը,- միջազգային լեքսիկոնում ավելի խիստ ձեւակերպում, քան "չափազանցված ուժի կիրառումն" է, հազիվ էլ լինի": Նա վստահեցնում է, որ Սաքունցի առաջարկած ձեւակերպման հետ միջազգային կազմակերպությունները հաստատ չէին համաձայնի: "Դա առաջին հայտարարությունը չի, որ անում ենք: Միշտ եղել է վստահության մթնոլորտ: Սաքունցը ինձ զանգահարել է եւ ասել է, որ տեքստը լավն է, բայց ինքը երկու առաջարկ ունի: Ես երկուսն էլ ընդունել եմ, ասեցի, որ Փարիզի հետ դրանք կհամաձայնեցնեմ: Հարցրեցի՝ "Եթե անգամ չանցնեն էս առաջարկությունները, դու սրան միանում ես, թե՞ չէ": Ասաց՝ միանում եմ",- պատմում է Արման Դանիելյանը եւ ցույց տալիս իր բջջայինում Սաքունցի զանգը վավերացնող գրանցումը: Նա վստահեցնում է, որ ընկերը մամուլի միջոցով հարաբերություններ կպարզի: Համագումարը, ըստ ամենայնի, թեժ է լինելու:

http://www.hraparak.am/hodvac.php?h_id=4697

ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑԻ FIDH ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

24.03.10

Lragir.am

Ապրիլի 6-8-ը Հայաստանի իրականության մեջ առաջին անգամ տեղի կունենա մարդու իրավունքներին նվիրված «Արդարադատություն, Նոր մարտահրավերներ» թեմայով միջազգային համաժողովը, որը կազմակերպվում է Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի նախաձեռնությամբ (նստավայրը Փարիզ): Իրավունքի եւ ազատության կենտրոնն հ/կ նախագահ Վարդան Հարությունյանը բաց նամակ է հղել Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) պատվիրակությունը՝ նախագահ Մուհայր Բել Հասենին, որում ասվում է.

Մենք տեղեկացված ենք, որ 2010թ. ապրիլի 6-8 Երեւանում տեղի է ունենալու Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի FIDH Արդարադատություն. Անկախ դատարանի առջեւ արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ. թեմայով 37-րդ միջազգային ֆորումը: Ձեզանից նաեւ այդ ֆորումին մասնակցելու հրավեր ենք ստացել, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Մեկ այլ իրավիճակում այս հանգամանքը միգուցե մեզ ուրախացներ եւ մենք հաճույքով ընդունեինք Ձեր հրավերը: Բայց այսօր Հայաստանում այլ իրավիճակ է: 2008թ. նախագահական ընտրությունները անցան ճշացող ընտրախախտումներով: Հազարավոր ՀՀ քաղաքացիներ դուրս եկան հրապարակ բողոքելու այդ խախտումների եւ ընտրակեղծիքներով իշխանությունը զավթած իշխանությունների դեմ: Իշխանությունները վճռեցին տաս օր անընդմեջ ընթացող խաղաղ հանրահավաքները դադարեցնել բիրտ ուժի գործադրմամբ: 2008թ. մարտի մեկին խաղաղ ցուցարարների դեմ հանվեցին ոչ միայն զինված ոստիկանական ուժեր, այլեւ՝ բանակը: Տեղի ունեցավ ցուցարարների ուղղակի գնդակահարում, ինչի արդյունքում տաս մարդ զոհվեց, իսկ 200-ից ավելին՝ վիրավորվեցին: Որեւէ մեկն այս ամենի համար դեռ պատասխան չի տվել: Դեռ բացահայտված էլ չեն մեղավորներն ու մարդասպանները: Չբավարարվելով խաղաղ ցուցարարների գնդակահարությամբ՝ իշխանությունները նախընտրական եւ ընտրական գործընթացները պաշտոնապես հայտարարելով իշխանության զավթման փորձ՝ սկսեցին նախագահական ընտրությունների ժամանակ ընդդիմադիր թեկնածուի թիմակիցների եւ կողմնակիցների հալածանքները եւ ձերբակալությունները: Հայրուրավոր մարդիկ ձերբակալվեցին, բազմաթիվ գործարարներ միայն իրենց քաղաքական կողմնորոշման համար զրկվեցին իրենց բիզնեսից: Հայաստանյան բանտերը լցվեցին քաղբանտարկյալներով: Դեպքերից երկու տարի է անցել, բայց շատերը դեռ շարունակում են բանտերում մնալ:

Արդարադատության հետ ոչ մի կապ չունեցող հայաստանյան դատարանները իշխանության պատվերով, ակնհայտ կեղծ ցուցմունքներով, շատ դեպքերում միմիայն ոստիկանական ցուցմունքները հիմք ընդունելով՝ արձակում էին իրար կրկնող դատավճիռներ:

Այս երկու տարվա ընթացքում ոչինչ չի փոխվել: Ընդհակառակը՝ վիճակն էլ ավելի է բարդացել: Շարունակվում են քաղաքական հետապնդումները, դատարանները բացահայտ կերպով ծառայում են գործող իշխանություններին, ընդդիմադիր հայացքներ ունեցող գործարարները զրկվում են բիզնեսից, խոչնդոտվում է ազատ երթեր եւ ցույցեր իրականացնելու իրավունքը: Իրավիճակին իրենց գնահատականն են տվել ԵՄԽԿ-ն իր 1609,1620,1643 1677 բանաձեւերով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը. ԱՄՆ պետդեպարտամենտը,

Freedom House եւ Human Rights Watch միջազգային կազմակերպությունները, որոնց կարող էք ծանոթանալ ուսումնասիրելով հետեւյալ փաստաթղթերը.

<http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta08/ERES1609.htm>

<http://assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/AdoptedText/ta08/ERES1620.htm>

<http://assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/AdoptedText/ta09/ERES1643.htm>

<http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta09/ERES1677.htm>

http://www.osce.org/documents/odihr/2010/03/42944_en.pdf

<http://armenia.usembassy.gov/uploads/CQ/ae/CQaeIxxkB5Pv1bevKi917mw/hrr2009.pdf>

<http://www.freedomhouse.org>

<http://www.hrw.org/world-report-2010>

Եվ ահա այս ֆոնին Դուք մեզ հրավիրում էք մի համաժողովի, ուր ելույթով հանդես են գալու վերը թվարկված անօրինականությունների հեղինակներն ու իրականացնողներն, իսկ մենք հայտնվելու ենք լոկ լսողի դերում եւ գրկված ենք լինելու պատասխան խոսք ասլու հնարավորությունից:

Մենք հակված չենք մտածելու, որ Դուք կանխամտածված կերպով Ձեր առաջ խնդիր էք դրել ամեն կերպ օգնել հայաստանյան իշխանություններին՝ ինչ որ չափով լեզիտիմացնելով նրանց, բայց Ձեր ֆորումը, անկասկած, դրան է ծառայելու, ինչին որեւէ կերպ մասնակցել մենք չենք ցանկանում:

Կրկին անգամ հրավերի համար հայտնելով Ձեզ մեր շնորհակալությունը ստիպված ենք տեղեկացնել, որ մենք բացառում ենք համաժողովին մեր մասնակցությունը:

<http://lragir.am/armsrc/society33383.html>

«ԳԵՏԻՆԸ ՄՏՆԻ՝ ՈՎ ՆՄԱՆ ԲԱՆ Է ԱՍԵԼ»

24.03.10

Առավոտ

Իրավապաշտպանների բուռն վիճաբանությունը հարթելու համար թերեւս կարիք լինի իրավապաշտպանների միջամտության

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) եւ իր անդամ կազմակերպության՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի, նաեւ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի, «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի եւ «Ընդդեմ իրավական կամայականության» հիմնադրամի մարտի 19-ին հրապարակած 11 էջանոց հայտարարության որոշ դրույթներ տեղիք են տվել բուռն անհամաձայնության: «2008թ. մարտին նախագահական ընտրություններին հաջորդող ցույցերի ընթացքում իրավապահների կողմից ուժի չափազանց կիրառման հետեւանքով բախումներ տեղի ունեցան ոստիկանության եւ ընդդիմության միջեւ, որոնք հանգեցրին զանգվածային ձերբակալությունների եւ կալանավորումների: 10 մարդ զոհվեցին եւ 200 մարդ տարբեր տեսակի վնասվածքներ ստացան բախումների արդյունքում», - հայտարարության այս տողերը պատճառ դարձան, որ նախապես դրան միացած ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը հայտարարի, թե համաձայն չէ այդ ձեւակերպմանը եւ պնդում է. «Քաղաքացիները սպանվել են ռեժիմի կողմից զենքի ապօրինի կիրառման արդյունքում»: Նաեւ նշեց, թե ՀՔԱ Վանաձորի գրասենյակը չի ստացել հայտարարության տեքստը մինչ հրապարակումը: Նրա հայտարարությանը հաղորդագրությամբ արձագանքեց Քաղաքացիական հասարակության ինստիտուտի նախագահ Արման Դանիելյանը՝ պնդելով. «Արթուր Սաքունցը զանգահարեց ինձ՝ ներկայացնելով մի քանի առաջարկ եւ նշելով, որ իր կազմակերպությունը միանշանակ միանում է փաստաթղթին՝ անկախ նրանից, թե «իր առաջարկները կընդունվեն, թե ոչ»: Արթուր Սաքունցը սրան ի պատասխան՝ երեկ նոր հաղորդագրություն տարածեց. «Հազար ամոթ, գետինը մտնի՝ ով նման բան է ասել, ով ասել է՝ անկախ նրանից, թե «իր առաջարկները կընդունվեն, թե ոչ»: Նաեւ նշել էր. «Հաստատ իմացե՛ք՝ ես անմեղսունակ պետք է լինեմ երբեւէ համաձայնելու համար, թե 10 քաղաքացիներ բախման հետեւանքով են սպանվել»:

Վեճի առնչությամբ երեկ հաղորդագրություն տարածեց նաեւ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը՝ մասնավորապես պնդելով. «Զոհերն ու վիրավորները եղել են ցուցարարների նկատմամբ գործադրված ուժի (տեղ-տեղ ասում են՝ անհամաչափ ուժի) արդյունքում, եւ այդ ուժը գործադրել են իշխանություններն իրենց ենթակա բյուջետային եւ «արտաբյուջետային» ուժերի ձեռամբ: Թե հակառակ կարծիք ունեցողներ կան, գրեք՝ զվարճանանք մի քիչ»: Նրա կարծիքով՝ «Հայտարարությունում առկա ձեւակերպմամբ՝ հեղինակները լիակատար հավասարության են հանգեցնում ցուցարարների եւ նրանց դեմ ելած ուժերի գործողությունները: Այդ դեպքում՝ ներողություն, իրավապաշտպանությունը ո՞րն է. երկու հավասար կողմեր տշել են իրար, ու մեռել է 10 հոգի, 200-ը վիրավորվել է, դո՛ւք ինչու եք խառնվում, պարոնայք, միշտ էլ կարող է այդպես տշեն իրար, մեռնեն, նստեն, վիրավորվեն»: Եվ հարց էր տվել. «Չի՞ եկել հեզաքնքուշ իրավապաշտպանությանը վերջ տալու ժամանակը: Դուք հո հոգեւորական չէ՞ք, տղերք: Եթե հեզաքնքուշն էլ մեթոդ է (զուցե եւ ձեր գործում նման մեթոդ էլ կա), վստահաբար իմացե՛ք՝ ո՛չ այստեղ, եւ ո՛չ

հիմա: Դուք հո գիտեք, թե ինչ հորում ենք նստած, եւ ինչ են անում փոս փորողներն այդ հայտարարությունների թղթերով»:

Հայտարարությունը ստորագրածներից մեկը՝ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի նախագահ Ավետիք Իշխանյանը, «Առավոտի» հետ զրույցի ընթացքում այնուամենայնիվ պնդեց. «Ես այդ ձեւակերպմանը համաձայն եմ: Մենք էլ մեր զեկույցի մեջ նույն ձեւով ենք ներկայացրել, որ գիշերն ուժով ցրեցին խաղաղ ցուցարարների հավաքը, հետագայում ցուցարարները հավաքվեցին Սյասնիկյանի արձանի մոտ, եւ տեղի ունեցավ բախում ոստիկանության եւ ցուցարարների միջեւ: Սա նորմալ ձեւակերպում է, եւ ես կարծում եմ, որ դա այդպես էլ եղել է»:

Սա այս հայտարարության միակ վիճահարույց ձեւակերպումը չէ: Նաեւ նշված է. «Այսօր բացակայում է հանրության վստահությունը քննություն իրականացնող մարմինների հանդեպ՝ քննության թափանցիկության եւ անկախության բացակայության պատճառով: Դրա վառ ապացույցն է այն, որ 2008թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ նախագահի կողմից նշանակված փաստահավաք խումբը լուծարվեց 2009թ. հունիսի 6-ին՝ առանց արժեքավոր ներդրում ունենալու իրականացված քննությանը»: Փաստահավաք խմբի նախկին անդամ Անդրանիկ Քոչարյանն առարկեց այս «առանց արժեքավոր ներդրում ունենալու» արտահայտությանը. «Այդ տեսակետին ես բացարձակապես ու համաձայն չեմ: Նման տեսակետ կարող էին հնչեցնել այնպիսի կազմակերպություններ, որոնք անցած 2 տարվա ընթացքում տեղյակ չեն եղել, թե Հայաստանում ինչ է տեղի ունեցել, եւ մասնավորապես տեղյակ չեն, թե ինչպիսի գործունեություն է ծավալել փաստահավաք խումբը: Այս տողերը հուշում են, թե նրանք ընդհանրապես ծանոթ չեն մեր ոչ մի զեկույցի: Իսկ մեր խմբի անդամները 4 լրջագույն զեկույց են ներկայացրել հանրությանը եւ միջազգային կառույցներին: Եվ ափսոսում եմ, որ միջազգային իրավապաշտպան կառույցի անվան ներքո այդ զեկույցները չուսումնասիրած կազմակերպությունների կողմից նման տեսակետ է հնչեցվում, երբ այդ զեկույցները տվել են բազմաթիվ հարցերի պատասխաններ, որոնք առնչվում են 10 սպանությունների հանգամանքներին: Եվ դա էր պատճառը, որ իշխանություններին, ըստ էության, ոչինչ չէր մնում, քան տարբեր ճանապարհներով ամեն ինչ անել, որ փաստահավաք խումբը չշարունակի իր գործունեությունը եւ բացահայտումները չհասցնի վերջնական հանգրվանին»:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեի նախագահ Ավետիք Իշխանյանն այս կապակցությամբ էլ վերահաստատեց իրենց գնահատականը. «Անկախ նրանից, թե ինչպես ենք մենք վերաբերվում փաստահավաք խմբի տարբեր անդամներին, բայց այդ խմբում 2 կողմերի ներկայացուցիչները ոչ թե իրականում փաստահավաքությամբ են զբաղված եղել, այլ իրենց քաղաքական դիրքորոշումներով, այսինքն՝ այն օբյեկտիվ մարմին չի եղել: Իմ կարծիքով, եթե այդ փաստահավաք խումբը նույնիսկ շարունակեր մնալ՝ նրա ներկայացրած փաստերը կոնսենսուսով չէին ընդունվի: Այն վերածվեց քաղաքական մարմնի, այսինքն՝ ոչ այնպիսի մի խմբի, որը նախատեսվում էր ստեղծել Թոմաս Համմարբերգի եւ Եվրոպայի խորհրդի հորդորով»:

Հավելենք, որ Հայաստանի արդարադատության համակարգի աշխատանքի վերաբերյալ մտահոգություններ արտացոլած այս հայտարարության հեղինակները նաեւ ներկայացրել են մի շարք առաջարկներ: Մասնավորապես՝ «Իրականացնել լիարժեք եւ անկախ քննություն 2008թ. մարտի 1-ի իրադարձությունների հետեւանքով 10 մահվան դեպքերի վերաբերյալ», «անհապաղ ազատ արձակել բոլոր քաղաքանտարկյալներին», նախնական կալանքը կիրառել որպես բացառություն, «չօգտագործել դաժան վերաբերմունքի կամ խոշտանգումների միջոցով ստացված ապացույցները քրեական գործերի շրջանակներում», երաշխավորել արդար դատաքննության իրավունքի

իրականացումը եւ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն այդ ուղղությամբ, «լիարժեք եւ անկողմնակալ քննություն իրականացնել խոշտանգումների եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին բոլոր դեպքերի կապակցությամբ, մասնավորապես՝ Լեւոն Գուլյանի, Սաշա Դավթյանի եւ իր դուստրերի, ինչպես նաեւ՝ Արշալույս Հակոբյանի գործերով», վերանայել Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերով անկախ հանձնաժողովների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը եւ այլն:

<http://aravot.am/am/articles/politics/76622/view>

Մեծ «բլեֆը» տապալման եզրին

24.03.10

Հայկական ժամանակ

Ապրիլի 6-8-ը Երեւանում կայանալիք Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի կազմակերպած «Արդարադատություն. Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» թեմայով համաժողովի շուրջ ծավալված իրադարձությունները շարունակում են նոր ընթացք ստանալ:

Նախ՝ երեկ շարունակվեցին նոր զարգացումներ տեղի ունենալ համաժողովին ընդառաջ ՄԻՄՖ-ի հայաստանյան ներկայացուցչության՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի նախօրեին տարածած հաղորդագրության շուրջ: ՔՀԻ-ի կողմից տարածված հաղորդագրությունում անդրադարձ է արված նաև 2008-ից Հայաստանում տեղի ունեցած քաղաքական դատավարություններին՝ դրանք ներկայացնելով, որպես ընդդիմության եւ իշխանությունների բախումների արդյունք: Արդյունքում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը, ում հայտարարությունը եւս դրված էր այդ հաղորդագրության տակ նախօրեին հայտարարել էր իր ստորագրությունը հետ վերցնելու մասին, քանի որ նա մինչ փաստաթղթի հրապարակումը առաջարկել էր փոխել վերը բերված մոտեցումը: ՔՀԻ-ի նախագահ Արման Դանիելյանը երեկ փորձել է հայտարարությամբ հերքել Սաքունցի մեղադրանքը՝ ներկայացնելով, որ վերջինս չի պնդել իր առաջարկները եւ ասել է, որ անկախ նրանից դրանք կընդունվեն, թե՛ ոչ, ինքը փաստաթղթին միանում է: Սաքունցն այս հայտարարությունը երեկ անհեթեթություն է որակել՝ նկատելով, որ ինքը երբեք իր ստորագրությունը չի դնի մի փաստաթղթի տակ, որտեղ կնշվի, որ Մարտի 1-ի գոհերը եւ վիրավորները ընդդիմություն-իշխանություն բախումների արդյունքում են եղել: Սաքունցը երեկ եւս մեկ անգամ կրկնեց, որ ինքը ասել էւ ասում է, որ գոհերը եւ վիրավորները եղել են ՀՀ իշխանությունների կողմից քաղաքացիների նկատմամբ ապօրինի զենք կիրառելու արդյունքում:

ՔՀԻ-ի հաղորդագրության շուրջ ծագած այս վեճն իրականում խորքային այլ պատճառներ ունի եւ կապվում է ապրիլի 6-8-ը Երեւանում կայանալիք համաժողովի հետ: Ամեն ինչ սկսվել է այն բանից հետո, երբ մարտի 10-ին ՄԻՄՖ-ի կայքէջում հրապարակվել է այդ համաժողովի օրակարգը: Պարզվել է, որ համաժողովի ընթացքում նախատեսվող ելույթների ցանկն արդեն ճշտված է, եւ հայկական իրավապաշտպանները լավագույն դեպքում կարող են դիտորդի դերում լինել եւ ունկնդրել ՀՀ պաշտոնյաների՝ արդարադատության խնդիրների վերաբերյալ ելույթները՝ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ: Այսինքն, քաղբանտարկյալներով բանտերը լցրած, քաղաքացիների արյունը հեղելով՝ իշխանություն պահող անձինք պատրաստվում են միջազգային փորձագետների հետ համատեղ քննարկել արդարադատության վերաբերյալ խնդիրներ, որի հետեւանքով իրավապաշտպանների շրջանում բողոքի ալիք է բարձրացել, որն ավելի շուտ ներքին կարգով է եղել: Արդյունքում, երեկ արդեն հայտնի դարձավ, որ Սերժ Սարգսյանի բացման խոսքը օրակարգից հանվել է, եւ նրա փոխարեն բացման խոսքով հանդես պետք է գա ՄԴ նախագահ Գագիկ Հարությունյանը:

ՔՀԻ-ի նախագահ Արման Դանիելյանը մեզ հետ զրույցում ասաց, որ օրակարգը փոխվել է, քանի որ Սերժ Սարգսյանը հրաժարվել է համաժողովի բացմանը ելույթով հանդես

գալ: Դանիելյանը հաստատեց, որ ի սկզբանե, մինչև օրակարգը հրապարակելը Մերժ Սարգսյանի հետ համաձայնեցված է եղել, նրա բացման խոսքով հանդես գալու հանգամանքը: Իսկ թե ինչով է պայմանավորված, որ Մերժ Սարգսյանը փոխել է իր որոշումը, Արման Դանիելյանը չկարողացավ պարզաբանել: Նա ասաց, որ այդ խնդիրներով զբաղվում է ՄԻՄՖ-ի Փարիզում գտնվող կենտրոնական գրասենյակը:

Իսկ ինչու համաժողովի ընթացքում հայկական իրավապաշտպաններին ելույթի հնարավորություն տրված չէ, այն դեպքում, երբ ՀՀ առնվազն չորս պաշտոնյաների ելույթ է նախատեսված՝ այս առնչությամբ Արման Դանիելյանն ասաց. «Ով ցանկանում է կարող է աշխատանքային խմբերում ելույթ ունենալ»: Ավելի կոնկրետ, խոսքն այն մասին է, որ հայկական իրավապաշտպանները կարող են համաժողովի «մասսովկան» ապահովողի դերում լինել եւ եթե ցանկանան խմբային քննարկումների ժամանակ կարող են իրենց կարծիքն արտահայտել: Ինչը Դանիելյանի ներկայացմամբ կոչվում է «աշխատանքային խումբ»: Մեր այն հարցին, թե ինչպես կմեկնաբանեք այն լուրերը, ըստ որոնց, ՄԻՄՖ-ի տարեկան համաժողովը Հայաստանում անցկացնելը ՀՀ իշխանությունների ցանկությամբ է պայմանավորված եղել, Արման Դանիելյանը պատասխանեց. «Նման բան չկա, ես լավ գիտեմ, ոնց է ընտրվել մեր երկիրը: Այստեղ ՀՀ իշխանությունների խնդրանքի հարց չկա»: Իսկ երբ նրանից փորձեցինք պարզել, թե ինչպես է Հայաստանն ընտրվել, նա պատասխանեց, թե ինքը չի կարող հստակ ասել եւ կրկին առաջարկեց այդ հարցի պատասխանը Փարիզի գրասենյակից ճշտել: Ինչեւէ, երեկ հայկական մի քանի իրավապաշտպաններից փորձեցինք պարզել, թե արդյո՞ք իրենք մասնակցելու են համաժողովին: Արթուր Սաքունցն, ինչպես հայտնի է, արդեն իսկ հայտարարել է, որ համաժողովին չի պատրաստվում մասնակցել, քանի որ ՀՀ իշխանությունների ակտիվ մասնակցության՝ ելույթներով հանդես գալու իրավունք ունենալու ֆոնին, իրավապաշտպանները զրկված են նրանց հակազդելու հնարավորությունից:

Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը մեզ հետ զրույցում ասաց, որ իրենց կազմակերպությունը ընդհանրապես հրավիրված չէ համաժողովին: Գյումրիի լրագրողական «Ասպարեզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը հաստատեց, որ իրենց մի քանի օր առաջ հրավիրել են համաժողովին մասնակցել, բայց առանց ելույթի իրավունքի, ավելի ճիշտ՝ իրենք կարող են միայն աշխատանքային խմբերում քննարկումների ժամանակ իրենց կարծիքն արտահայտել: Բարսեղյանը այս պահին դժվարացավ ասել, թե իրենք ինչպես կվարվեն հրավերի հետ: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի փորձագետ Մեսրոպ Հարությունյանը մեզ հետ զրույցում ասաց, որ իրենց եւս համաժողովին մասնակցելու հրավեր է ուղարկվել, սակայն, իրենք դեռ չեն որոշել մասնակցելու են, թե՛ ոչ: Ըստ Հարությունյանի, իրենք պատրաստվում են համաժողովի կազմակերպիչներին առաջարկել, որպեսզի ֆորմատը փոխվի, եւ ՀՀ պաշտոնյաների ելույթների հետ զուգահեռ ելույթի հնարավորություն տրվի նաեւ Հայաստանի իրավապաշտպաններին: Եթե այս առաջարկն ընդունվելի, ապա այդ դեպքում իրենք միգուցե կմասնակցեն համաժողովին:

<http://www.armtimes.com/4213>

Սաքունցը ետ է վերցնում ստորագրությունը

23.03.10

A1+

2010թ-ի մարտի 19-ին, մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա /FIDH/ իրավապաշտպան կազմակերպության ինտերնետային կայքում տեղադրվել է հայտարարություն՝ Հայաստանում արդար դատաքննության վերաբերյալ:

Այն ստորագրված է Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Համագործակցություն հանուն ժողովրդավարության և Ընդդեմ իրավական կամայականության կազմակերպությունների անունից:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցն այսօր ասել է, թե համաձայն չէ հայտարարության մի ձեւակերպման հետ:

«Հայտարարության մեջ անդրադառնալով 2008թ մարտի 1-ի և 2-ի իրադարձություններին՝ նշվում է, որ տասը մարդ սպանվել է և 200 հոգի վնասվածքներ են ստացել բախումների հետևանքով:

Մույնով, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հայտարարում է, որ ոչ միայն համաձայն չէ նշված ձևակերպմանը, այլև, ինչպես բազմիցս տարբեր հայտարարություններում նշել է, քաղաքացիները սպանվել են ռեժիմի կողմից զենքի ապօրինի կիրառման արդյունքում», - հայտարարել է Արթուր Սաքունցը:

Ըստ նրա՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը չի ստացել հայտարարության տեքստը մինչ հրապարակումը, համաձայն չէ տեքստում նշված ձևակերպման հետ և իր ստորագրությունը ետ է վերցնում հիշատակված պատճառներով:

Արթուր Սաքունցը հերքել է Քաղաքացիական հասարակության ինստիտուտի նախագահ Արման Դանիելյանի այն հայտարարությունը, թե ինքն ասել է, թե իր ղեկավարած կազմակերպությունը միանշանակ միանում է փաստաթղթին, անկախ նրանից թե «իր առաջարկները կընդունվեն, թե ոչ»:

<http://www.a1plus.am/am/politics/2010/03/23/assambla>

Մերժ Սարգսյանը ելույթ չի ունենա

23.03.10

Հայկական ժամանակ

Երեկ հայտնի դարձավ, որ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան իր պաշտոնական կայքէջում հրապարակել է ապրիլի 6-8-ը Երեւանում կայանալիք «Արդարադատություն. Անկախ դատարանի առջեւ արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» համաժողովի նոր օրակարգը, որը էապես տարբերվում է տասն օր առաջ հրապարակվածից: Բանն այն է, որ մարտի 10-ին հրապարակված օրակարգում նշվում էր, որ Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում կայանալիք բացման արարողության ժամանակ բացման խոսքով պետք է հանդես գար Մերժ Սարգսյանը: Իսկ նախօրեին հրապարակվածում Մերժ Սարգսյանի անունը հանվել է, եւ նրա փոխարեն նշված է ՄԴ նախագահ Գագիկ Հարությունյանի անունը: Մեր տեղեկություններով՝ համաժողովի կազմակերպիչներն այսպիսով փորձել են իրավիճակը շտկել եւ կանխել համաժողովի տապալումը: Ի սկզբանե, նախատեսվել էր, որ համաժողովը պետք է ՀՀ իշխանություններին գովերգող լայնամասշտաբ քարոզչական միջոցառում լիներ: Իսկ երբ անցած շաբաթ պարզվել է, որ հայկական իրավապաշտպանները պատրաստվում են ընդհանրապես հրաժարվել համաժողովին մասնակցելուց, եւ միջոցառման իրական նպատակն ակնառու կդառնա, կազմակերպիչները որոշել են սցենարը մի փոքր փոխել: Նախ օրակարգի Մերժ Սարգսյանի ելույթը փոխարինվել է Գագիկ Հարությունյանի ելույթով: Այնուհետեւ ՄԻՄՖ-ի դեմքը փրկել փորձելու նպատակով համաժողովին ընդառաջ հայտարարության մի տեքստ են նախապատրաստել «Արդարադատության իրականացումը Հայաստանում» վերնագրով, որը երեկվանից հայտնվել է ՄԻՄՖ պաշտոնական կայքում՝ մարտի 19-ի ամսաթվով:

Մինչեւ այժմ միջազգային տարբեր կառույցների կողմից հնչեցված գնահատականները՝ վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած դատավարությունների վերաբերյալ կրկնելուց բացի փաստաթղթի հեղինակները փորձել են Մարտի 1-ը ներկայացնել որպես ընդդիմության եւ իշխանությունների բախում: Արդյունքում, քաղբանտարկյալներին դարձնելով բախումներից հետո անազատության մեջ հայտնված գործիչներ, ովքեր պարզապես անարդար դատավարությունների արդյունքում դատապարտվել են: Տեղի ունեցած «աֆյորայի» էությունը առավել հասկանալի է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի երեկ տարածած հաղորդագրության ֆոնին: ՀՔԱՎ-ի գրասենյակը եւս ներկայացվում է իբրեւ հայտարարության համահեղինակ: Սաքունցն այսպիսով ազդարարել է. «Հայտարարության մեջ անդրադառնալով 2008թ. մարտի 1-ի եւ 2-ի իրադարձություններին՝ նշվում է, որ տասը մարդ սպանվել եւ 200 հոգի վնասվածքներ են ստացել բախումների հետեւանքով: Սույնով, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հայտարարում է, որ ոչ միայն համաձայն չէ նշված ձեռակերպմանը, այլեւ, ինչպես բազմիցս տարբեր հայտարարություններում նշել է, քաղաքացիները սպանվել են ռեժիմի կողմից զենքի ապօրինի կիրառման արդյունքում: Սույն հայտարարությամբ հայտնում ենք, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը չի ստացել հայտարարության տեքստը մինչ հրապարակումը, համաձայն չէ տեքստում նշված ձեռակերպման հետ եւ իր ստորագրությունը հետ է վերցնում հիշատակված պատճառներով»: Սաքունցը մեր թղթակցի հետ զրույցում ասել է, որ իրեն տրամադրվել է հայտարարության նախնական

տարբերակը, որի առնչությամբ ինքը իր տեսակետը հայտնել է՝ ասելով, որ դրան կմիանա, եթե վերը բերված մոտեցումը փաստաթղթում շտկվի: Մակայն, փաստաթուղթը առանց փոփոխման հրապարակվել է՝ որպես հավանության արժանացած: Ի դեպ, Սաքունցը մեր թղթակցին ասել է նաև, որ իրենց կազմակերպությունը չի պատրաստվում մասնակցել համաժողովին՝ ՀՀ իշխանությունների հետ անհավասար պայմաններում ներկայացված լինելու պատճառով:

<http://www.armtimes.com/4166>